

ZCMC

ՀԱՆՐԱՊԵՏՈՒՐ
ՊԱՇՏՊԱՆՆԵՐՈՎ
ԱՐԺԵՔՆԵՐԸ

24

Վստահ հայացք դեպի ապագա

Կայուն զարգացման
հաշվետվություն / 2024

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ

1. ԶՊՄԿ-ի մասին	2. Տնտեսական ազդեցություն	3. Կորպորատիվ կառավարում	4. ԶՊՄԿ-ի աշխատողները	5. Բարեկեցության և կայունության ապահովում աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման մշակույթի ձևավորման միջոցով
-----------------	---------------------------	--------------------------	-----------------------	---

Բովանդակություն

04	—	Հակիրճ
06	—	Գլխավոր տնօրենի ուղերձը
08	—	Կայուն զարգացման գծով տնօրենի ուղերձը

1 ԶՊՄԿ-ի մասին

14	—	Ներգրավվածություն . ոլորտի նկատմամբ ամուր հանձնառության դրսևորում
16	—	Բիզնես մոդել և արժեշղթա
18	—	Պատասխանատվություն մատակարարման շղթայում

2 Տնտեսական ազդեցություն` նպաստելով տեղական համայնքների և երկրի տնտեսական զարգացմանը

23	—	Տնտեսական ազդեցությունը թվերով
27	—	Հարկային պարտավորությունների կառավարում . թափանցիկություն և ղեկավարության հաշվետվողականություն
29	—	ԲՄԿ սկզբունքների հետ կապված ռիսկերի շրջանակ և ֆինանսական հետևանքներ
30	—	Գնումներ և տնտեսական զարգացում

3 Կորպորատիվ կառավարում. ղեկավարության բարեվարքության պահպանում

40	—	Կորպորատիվ կառավարման կառուցվածքը . արդյունավետ կառավարման և վերահսկողության ապահովում
45	—	Ազդեցությունների կառավարման հաշվետվողականություն . ռազմավարական առաջնորդության խթանումը կայուն զարգացման ոլորտում
46	—	Բարեվարքությունը որոշումների կայացման գործընթացում . կառավարման ամրապնդումը շահերի բախման կարգավորման միջոցով
47	—	Վարձատրության ռազմավարություն . վարձատրության համապատասխանեցում ռազմավարական նպատակներին և գործունեության արդյունքներին
49	—	Կոռուպցիայի դեմ պայքարի հանձնառություն . բարեվարքության ստանդարտների և համապատասխանության պահպանում
52	—	Համապատասխանությունն օրենքներին և կանոնակարգերին . օրենսդրության պահանջների պահպանման և բարեվարքության սկզբունքների համաձայն կառավարման ապահովում
53	—	Թվային փոխակերպման նախաձեռնություն . անցում աշխատանքային գործընթացների թվայնացմանը

4 ԶՊՄԿ-ի աշխատողները . կայուն հաջողության մեր գրավականը

59	—	Անձնակազմի կառավարում . համաշխարհային ստանդարտների հետ համապատասխանության ապահովում
60	—	Տեղական զբաղվածության ապահովման քաղաքականություն . տնտեսության աճի և համայնքների զարգացման խթանում
61	—	Աշխատողների իրավունքներ . խտրականության բացառում և կոլեկտիվ բանակցությունների խթանում
64	—	Մարդկային կապիտալի դինամիկա . աշխատուժի կայունության և տեղական զբաղվածության ապահովում
67	—	Տեսլականի կառավարում . Ընկերության բարձրաստիճան ղեկավարությունը
68	—	Արտաքին մասնագետների ներգրավում . համագործակցություն Ընկերության աշխատող չհանդիսացող անձանց հետ
69	—	Վերապատրաստում . աշխատողների մասնագիտական զարգացման ապահովում
72	—	Կատարողականի և մասնագիտական աճի գնահատում
73	—	Վարձատրություն և արտոնություններ . աշխատողների բարեկեցության ապահովում

6. Տեղական համայնքներ	7. Շրջակա միջավայրի պահպանություն և կայունություն	8. Կլիմայի փոփոխություն	9. Հավելվածներ
-----------------------	---	-------------------------	----------------

5 Բարեկեցության և կայունության ապահովում աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման մշակույթի ձևավորման միջոցով

81	—	Ռիսկերի համապարփակ գնահատում և անվտանգության կառավարում . աշխատավայրում ակտիվ պաշտպանության և անվտանգության մակարդակի բարձրացում
88	—	Աշխատանքի անվտանգության ամրապնդում . աշխատավայրում առողջության պահպանման որակյալ ծառայությունների ապահովում վտանգների կանխարգելման և ռիսկերի նվազեցման համար
89	—	Առողջության պահպանմանը և անվտանգությանը վերաբերող դասընթացներ . անվտանգության ապահովում աշխատավայրում ուսուցման և իրազեկման միջոցով
92	—	Բազմակողմանի աջակցություն առողջության և անվտանգության ոլորտում . բարեկեցության ապահովում բժշկական ծառայությունները հասանելի դարձնելու միջոցով

6 Տեղական համայնքներ. ներգրավվածություն և ընդհանուր արժեքների ձևավորում

98	—	Համայնքային ներդրումներ
101	—	Համայնքների կարիքների և ազդեցության գնահատում
102	—	Շահագրգիռ կողմերի ներգրավվածություն

7 Շրջակա միջավայրի պահպանություն և կայունություն . շարունակական կատարելագործման ուղի

109	—	Էներգիայի կառավարման ռազմավարություն . սպառման վերահսկողություն և արդյունավետության բարձրացում
111	—	Զրային ռեսուրսների կառավարման ռազմավարություն . սակավության կառավարում՝ պատասխանատու օգտագործման և համապատասխանության ապահովման միջոցով
116	—	Թափոնների կառավարում . մոնիտորինգ, նվազեցում և համապատասխանեցում օրենսդրության պահանջներին
119	—	Մթնոլորտ արտանետումներ . նվազեցմանն ուղղված նախաձեռնություններ և անվտանգ աշխատանքային միջավայրի ապահովում
121	—	Պղչամբարային տնտեսություն և մոնիտորինգ . անվտանգության համակարգերի ամրապնդում և համապատասխանեցում միջազգային ստանդարտներին
122	—	Կենսաբազմազանության կառավարում և էկոհամակարգի վերականգնում . գործունեության համապատասխանեցում բնապահպանական ստանդարտներին և միջազգային ընդհանուր սկզբունքներին
124	—	Շրջակա միջավայրի վերականգնում և հանքի փակման պլանավորում . վերականգնողական աշխատանքների ինտեգրում ակտիվ գործողությունների և բնապահպանական երկարաժամկետ նպատակների հետ

8 Կլիմայի փոփոխություն

128	—	Կլիմայի փոփոխության կառավարում . թափանցիկության և հաշվետվողականության ապահովում
130	—	Կլիմայի փոփոխության ռազմավարություն . կայունության և հնարավորությունների զարգացում ռազմավարության մշակման շնորհիվ
137	—	Կլիմայական ռիսկերի կառավարում . նպատակ ունենալ նվազեցնել ածխածնի հետքը և բարձրացնել կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերի նկատմամբ կայունությունը
139	—	Զերմոցային գազերի արտանետումներ . թիրախավորել արտադրության արդյունավետության բարելավումը


9 Հավելվածներ

142	—	Հավելված 1: Այս հաշվետվության մասին	163	—	Հավելված 5: GRI
143	—	Հավելված 2: Էականության գնահատում	176	—	Հավելված 6: SASB
145	—	Հավելված 3: Բնապահպանական թեմաներ	180	—	Հավելված 7: ՖԼՄՍ ԿՁ2 (IFRS S2) բովանդակության ցուցիչ
160	—	Հավելված 4: Հապավումներ	182	—	Հավելված 8: Կոնտակտային տվյալներ

Հակիրճ

Հասույթ՝
\$713.1 միլիոն

Պղնձի խտանյութի արտադրության ընդհանուր ծավալ՝
181,919 տոննա (խոնավ)



Մոլիբդենի խտանյութի արտադրության ընդհանուր ծավալ՝
18,014 տոննա (խոնավ)

Աշխատողների թիվ 2024թ. տարեվերջին՝
4,654

Իգական սեռի աշխատողներ՝
1,037

Արական սեռի աշխատողներ՝
3,617

Աշխատողներ տեղական համայնքներից՝
4,130

Նոր աշխատողներ՝
216

Աշխատողների հոսունության ցուցանիշ՝
4.89%

Յուրաքանչյուր աշխատող միջինում անցել է
0.47 ժամ տևողությամբ ուսուցում

Զերմոցային գազերի (ԶԳ) Շրջանակ 1-ի արտանետումներ՝
82,370

Զերմոցային գազերի (ԶԳ) Շրջանակ 3-ի արտանետումներ՝
946,566

Կլանված CO₂-ի ընդհանուր ծավալ՝
767.56 կգ

Վերականգնված տարածք՝
21.6 հեկտար

Տեղական համայնքներում ներդրումների ծավալ՝
\$18.3 միլիոն

Արհմիության անդամ հանդիսացող աշխատողներ՝
99%

Զերմոցային գազերի (ԶԳ) արտանետումների ընդհանուր ծավալ՝
1,258,490 տոննա CO₂-ին համարժեք

Զերմոցային գազերի (ԶԳ) Շրջանակ 2-ի արտանետումներ՝
229,555

Էներգիայի ընդհանուր սպառում՝
3,125,321 Գիգաջոուլ

Զրառի ընդհանուր ծավալ՝
50,650 մեգալիտր

Զրահեռացման ընդհանուր ծավալ՝
39,318 մեգալիտր

Գոյացած թափոնների ընդհանուր ծավալ՝
36,943,886 տոննա

Գլխավոր տնօրենի ուղերձը

GRI 2-22



Ռոման Խուդոլի

«ԶՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն



Ուրախ եմ ներկայացնել 2024թ. Կայուն զարգացման հաշվետվությունը:

Մեզ համար առանձնակի հպարտություն է, որ շարունակում ենք մնալ Հայաստանի այն քիչ ընկերությունների շարքում, որոնք հետևողականորեն կատարելագործում են իրենց կայուն զարգացման հաշվետվողականության գործընթացները: Տարեցտարի մենք բարելավում ենք մեր հաշվետվողականության համակարգերը՝ ոչ թե պարզապես պահանջ կատարելու համար, այլ որպես լավագույն փորձին համահունչ գործելու և համաշխարհային առաջատարներին համարժեք դիրք ունենալու հանձնառություն:

2024 թվականի մեր ամենանշանակալից նվաճումներից մեկը կառավարման ոլորտում էր: Մենք հաստատեցինք և հրապարակեցինք մի շարք քաղաքականություններ, ներառյալ Վարքագծի կանոնագիրքը: Այդ քաղաքականությունների ընդունումը՝ Հակակոռուպցիոն և Խտրականության դեմ պայքարի քաղաքականություններից մինչև Բնապահպանական և Սոցիալական քաղաքականությունները, կարևոր քայլ է հանդիսանում Ընկերության կառավարման բոլոր հարթություններում շահագրգիռ կողմերի շահերի պաշտպանության ապահովման տեսանկյունից: Հարկ է նշել, որ այդ քաղաքականությունները հաստատել է Ընկերության Տնօրենների խորհուրդը՝ դրանով իսկ դրսևորելով դեկլարման ամենաբարձր օղակի մակարդակով ամուր հանձնառություն, հուսալի կառավարման մշակույթ ձևավորելու գործընթացում: Սա դեռ սկիզբն է, և մենք մտադիր ենք բարձրացնել նշաձողը՝ նպատակ ունենալով ԶՊՄԿ-ն դարձնել ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ տարածաշրջանի առաջատարներից մեկը կառավարման ոլորտում:

2024 թվականը նշանավորեց նաև նրանով, որ ընկերությունը չորս տարի անընդմեջ պահպանում է Հայաստանի Հանրապետության ամենախոշոր հարկատուի կարգավիճակը: Թեև սա կայուն զարգացման ոլորտին բնորոշ ձեռքբերում չէ, սակայն ակնհայտորեն վկայում է պատշաճ կառավարման, ֆինանսական թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքները պահպանելու մեր հանձնառության մասին: Պետության ամենախոշոր հարկատու լինելը պատասխանատվություն է, որը չի սահմանափակվում երկրի տնտեսությունում ներդրումների կատարմամբ. այն պարտավորեցնում է ամեն օր գործել սոցիալական պատասխանատվությամբ և շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ գիտակցված մոտեցմամբ:

ԶՊՄԿ-ն շարունակում է ավելի կարևոր դեր խաղալ Սյունիքի մարզի և շրջակա համայնքների զարգացման գործում: Մեզ համար ԲՍԿ սկզբունքների սոցիալական բաղադրիչը սկիզբ է առնում ընդհանուր արժեքների ձևավորումից՝ ապահովելով ԶՊՄԿ-ի և մեր համայնքների հաջողության անբաժանելի կապը: Մենք աշխատում ենք տեղացի շահագրգիռ կողմերի հետ այս սկզբունքն իմաստավորելու և գործնականում կիրառելի ու առավել առարկայական դարձնելու համար՝ խթանելով համայնքներ-Ընկերություն համագործակցությունը:

2024 թվականը նշանավորվեց նաև բնապահպանական կառավարման համակարգերի արդիականացման զգալի առաջընթացով՝ ընդգրկելով մի շարք կարևոր նախաձեռնություններ՝ ներառյալ պոչամբարի կառավարման համակարգի համար նոր անվտանգության գործիքների ներդրումը և շրջանառու ջրամատակարարման առաջադեմ, 2025թ-ին գործարկվելիք համակարգի նախագծումը:

Մեզ համար կայուն զարգացումը որոշակի նախանշված նպատակների հասնելու միջոց չէ, այլ բիզնես մոդել է, որը նպաստում է արդյունավետության բարձրացմանը, կառավարման համակարգի կատարելագործմանը, Ընկերության ամրապնդմանը և շահագրգիռ կողմերի հետ երկարաժամկետ համագործակցության ապահովմանը: Այս սկզբունքները պարզապես ձգտումներ չեն, դրանք հիմնված են գործնականում իրականացվող հստակ նախաձեռնությունների վրա:

ԶՊՄԿ-ն ունի ավելի քան 70 տարվա պատմություն: Վերջին չորս տարիների ընթացքում՝ Ընկերության դեկլարումը ստանձնելուց ի վեր, բազմաթիվ մարտահրավերներ ենք ունեցել: Փոփոխությունը մեկ օրում տեղի չի ունենում, և մեր ընտրած ուղին է որոշում՝ ուր ենք հասնելու: Հպարտությամբ կարող եմ ասել, որ մենք վստահորեն շարժվում ենք ճիշտ ճանապարհով:

Կայուն զարգացման գծով տնօրենի ուղերձը

GRI 2-22



Արմեն Ստեփանյան

«ԶՊՄԿ» ՓԲ ընկերության կայուն զարգացման գծով տնօրեն



Հարգելի ընթերցող,

Որպես ԶՊՄԿ-ի Կայուն զարգացման գծով տնօրեն, ձեր ուշադրությանն եմ ներկայացնում մեր հերթական՝ թվով չորրորդ Կայուն զարգացման հաշվետվությունը 2024 հաշվետու տարվա համար: Այս հաշվետվությունը ներառում է ինչպես մեր նվաճումները, այնպես էլ բացթողումները՝ կայուն զարգացման մեր հավակնոտ նպատակներին հասնելու ճանապարհին: Ինչպես այս դժվար ուղու նախորդ տարիներին, 2024թ-ին ևս եղան հպարտության և հիասթափության առիթներ:

Ցավոք, այս տարի ողբերգական դեպք տեղի ունեցավ. մեր աշխատակիցը զոհվեց պահեստում բեռնիչ տեխնիկան շահագործելիս: Ինչպես ցանկացած նման ողբերգության դեպքում, ցավը խորանում է այն գիտակցումից, որ պատահարը հնարավոր էր կանխել՝ պարզապես հետևելով սահմանված անվտանգության կանոններին, տվյալ դեպքում՝ առնվազն՝ ամրակապվելով: Այս ցավալի դեպքը վկայում է մեր առօրյա գործունեությունում աշխատանքի անվտանգության էլ ավելի խիստ կանոններ ներդնելու հրատապ անհրաժեշտության մասին: Դա կլինի մեր առաջնահերթ խնդիրներից մեկն առաջիկա տարիներին:

Մենք կարևոր ճանապարհ ունենք անցնելու նաև Ընկերության ածխածնի հետքի նվազեցման ուղղությամբ: Մեր տվյալների հավաքագրման գործընթացների բարելավման հետ մեկտեղ գրանցվել է արտանետումների զգալի աճ: Թեև այդ աճը հիմնականում պայմանավորված է տվյալների ճշգրտության բարելավմամբ, բայց այն նաև վկայում է կլիմայի փոփոխությանն ի պատասխան ավելի հստակ նպատակներ սահմանելու և վճռական գործողություններ իրականացնելու անհրաժեշտության մասին:

Միևնույն ժամանակ, մենք հպարտանալու շատ առիթներ ունենք: Մենք շարունակում ենք մնալ Հայաստանի այն քիչ ընկերություններից մեկը, որը հետևողականորեն հրապարակում է Հաշվետվողականության համաշխարհային նախաձեռնության (GRI) չափանիշներին համապատասխանող հաշվետվություն: Հուսադրող է, որ այս միտումը ձեռք է բերում ավելի մեծ տարածում երկրում, և ուրախ ենք արձանագրելու, որ ավելի շատ ընկերություններ են միանում մեզ այս կարևոր նախաձեռնության շրջանակում: Մենք շարունակում ենք հավատարիմ մնալ Ընկերության հանձնառությանը՝ օրինակելի դառնալու հաշվետվողականության շրջանակի ընդլայնման հարցում, ապահովելով համապատասխանություն թե՛ Կայուն զարգացման ոլորտում հաշվապահական հաշվառման չափանիշների խորհրդի (SASB) չափանիշներին և թե՛ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ): Հաշվի առնելով, որ հաջորդ տարի Հայաստանը հյուրընկալելու է Կենսաբանական

բազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովը (COP17), մենք սկսել ենք գնահատականը Բնության հետ կապված ֆինանսական բացահայտումների աշխատանքային խմբի (TNFD) շրջանակներում:

Խորհրդանշական կերպով այս տարվա հաշվետվության տիտղոսաձեղին պատկերված է գորշ արջը՝ մեր տեղական համայնքներից մեկի խորհրդանիշը, որն արտացոլում է Ընկերության աճող ուշադրությունը կենսաբազմազանության նկատմամբ:

Մենք նաև վերանայել և հրապարակել ենք Ընկերության հիմնական կորպորատիվ քաղաքականությունների մեծ մասը: Կարող եմ վստահեցնել, որ դրանք արտացոլում են կորպորատիվ կառավարման ամենաբարձր չափանիշները: Թեև դեռ անելիքներ ունենք մեր կորպորատիվ կառավարման կառուցվածքը ոլորտի առաջատար չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ, այս քաղաքականությունների՝ Խորհրդի մակարդակով ընդունումը, կարևոր քայլ է հանդիսանում լիարժեք համապատասխանություն ապահովելու գործընթացում և վկայում է այդ նպատակին հասնելու Ընկերության հաստատուն պատրաստակամության մասին:

Հաշվետվությունում ամփոփված են մի շարք կարևոր փաստեր, որոնք, իմ համոզմամբ, մանրամասն, ամբողջովին և անաչառորեն նկարագրում են մեր ուղին դեպի կայուն զարգացում:

Ի եզրափակում, ցանկանում եմ իմ խորին երախտագիտությունը հայտնել ԶՊՄԿ-ի կայուն զարգացման թիմի փորձառու մասնագետներին, որոնց աշխատանքի շնորհիվ առաջընթացը հնարավոր է դառնում, ինչպես նաև Ընկերության մյուս ստորաբաժանումների՝ այս նախաձեռնությանը աջակցող աշխատողներին: Հատուկ շնորհակալություն եմ հայտնում Ընկերության ղեկավարությանը և Խորհրդին՝ անվերապահ աջակցության և մեր այն համոզմունքին համակարծիք լինելու համար, որ կայուն զարգացումը ոչ միայն արժեք է, այլև ռազմավարական նպատակ և երկարաժամկետ հաջողության գրավական:

ԶՊՄԿ-ի մասին

- 14 — Ներգրավվածություն . ոլորտի նկատմամբ ամուր հանձնառության դրսևորում
- 16 — Բիզնես մոդել և արժեքղթա
- 18 — Պատասխանատվություն մատակարարման շղթայում



1. ԶՊՄԿ-ի մասին
2. Տնտեսական ազդեցություն
3. Կորպորատիվ կառավարում
4. ԶՊՄԿ-ի աշխատողները
5. Բարեկեցության և կայունության ապահովում աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման մշակույթի ձևավորման միջոցով
6. Տեղական համայնքներ
7. Շրջակա միջավայրի պահպանություն և կայունություն
8. Կլիմայի փոփոխություն
9. Հավելվածներ

GRI 2-1

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ ԶՊՄԿ կամ Ընկերություն) Հայաստանի Հանրապետության առաջատար հանքարդյունաբերական ձեռնարկությունն է, որը գտնվում է երկրի հարավում՝ Սյունիքի մարզի Քաջարան քաղաքում: Ընկերությունը շահագործում է տարածաշրջանի ամենամեծ բացահանքը, մասնագիտացած է մոլիբդենի և պղնձի արդյունահանման ու վերամշակման ոլորտում, ինչպես նաև հանդիսանում է մոլիբդենի քսան խոշորագույն արտադրողներից մեկն աշխարհում:

Հանքաքարի պաշարները Քաջարանի հանքավազանում, (միլիոն տոննա)

Պղինձ
5.763

Մոլիբդեն
0.815

Քաջարանի հանքավայրը տեղակայված է Զանգեզուրի լեռնաշղթայի գագաթներից մեկի վրա, Ողջի գետի հովտում: Ռելիեֆը խիստ կտրտված է՝ 1,800-3,900 մետր բացարձակ նիշերով: Գործող բացահանքը գտնվում է Քաջարան քաղաքից 1.7-2.5կմ հարավ-արևմուտք, ծովի մակարդակից մոտ 2,200 մ բարձրության վրա:

Տարածքը բարձր ռելիեֆային է, բացահանքի անմիջական հարևանությամբ մոտ 4,000մ բարձրությամբ լեռներ են: Հարստացուցիչ ֆաբրիկան գտնվում է Քաջարանի հանքավայրի մոտ՝ Արծվանիկի պոչամբարից ուղիղ գծով մոտ 27 կմ հեռավորության վրա:

Ընկերության բաժնետերերի կազմը

5,62504%

«ԱՄՓ Հոլդինգս» ՓԲԸ (ՀՀ)

12,49990%

«Զանգեզուր Մայինգ» ՍՊԸ (ՀՀ)

«Ուրբանեվենտ Պլյուս» ՍՊԸ (ՌԴ)

15,00000%

21,87500%

Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտե (ՀՀ)

45,000062%

«Արդյունաբերական ընկերություն» ԲԸ (ՌԴ)

2024թ-ին արտադրվել է 181,919 տոննա (խոնավ) պղնձի խտանյութ և 18,014 տոննա (խոնավ) մոլիբդենի խտանյութ: Պղնձի և մոլիբդենի խտանյութերի արտադրության ընդհանուր ծավալը 2023թ. համեմատ նվազել է մոտ 11%-ով: Արտադրության նվազման հիմնական պատճառը մետաղի ցածր պարունակությունն էր հանքաքարում, ինչը հանգեցրել է մետաղի արտադրության ծավալի նվազմանը:

Արտադրության ծավալները՝ ըստ խտանյութի տեսակների

Պղնձի խտանյութ, տոննա (խոնավ)

201,332 181,919

10%

2023 2024

Մոլիբդենի խտանյութ, տոննա (խոնավ)

23,710 18,014

24%

2023 2024

Ֆերոմոլիբդեն, տոննա

7,309 273

96%

2023 2024

Թրծված մոլիբդենի խտանյութ, տոննա

1,322 547

59%

2023 2024

Արտադրության ծավալների անկման հետևանքով 2024թ-ին գրանցվել է նաև վաճառքի ծավալների համապատասխան նվազում՝ մոտ 6%-ի չափով:

Վաճառքի ծավալները՝ ըստ խտանյութի տեսակների

Պղնձի խտանյութ, տոննա (խոնավ)

203,367 182,116

10%

2023 2024

Մոլիբդենի խտանյութ, տոննա (խոնավ)

9,423 18,475

96%

2023 2024

Ֆերոմոլիբդեն, տոննա

7,180 1,169

84%

2023 2024

Թրծված մոլիբդենի խտանյութ, տոննա

1,344 525

61%

2023 2024

Ներգրավվածություն . ոլորտի նկատմամբ ամուր հանձնառության դրսևորում

GRI 2-28



ԶՊՄԿ-ն ձգտում է խթանել հանքարդյունաբերության հարցերի շուրջ երկխոսությունը թե՛ Հայաստանում և թե՛ Հայաստանից դուրս՝ իր ակտիվ մասնակցությամբ նպաստելով ոլորտի

կայուն և պատասխանատու զարգացմանը: Մեր անդամակցությունը ոլորտի առաջատար ասոցիացիաներին և կազմակերպություններին վկայում է էթիկական վարքագիծ, թափանցիկություն և երկարաժամկետ կայուն զարգացում ապահովելու մեր հանձնառությունների մասին:

Այդ համագործակցության միջոցով մենք ձգտում ենք գտնել գործնականում կիրառելի լուծումներ, խթանել գիտելիքների փոխանակումը և նպաստել պատասխանատու հանքարդյունաբերական գործունեությանը: Մենք նաև օգտագործում ենք այս հարթակները տարբեր շահագրգիռ կողմերի հետ կառուցողական երկխոսություն վարելու համար՝ անդրադառնալով շրջակա միջավայրի պահպանությանը, սոցիալական պատասխանատվությանը և կորպորատիվ կառավարմանը վերաբերող հիմնական հարցերին: Մասնակցություն ունենալով այդ կարևոր քննարկումներում՝ մենք ձգտում ենք նպաստել այնպիսի քաղաքականության և գործելակերպի ձևավորմանը, որոնք կխթանեն ճկուն և կայուն հանքարդյունաբերական ոլորտի շարունակական զարգացմանը:



«Հայաստանի հանքագործների և մետալուրգների միություն»

Լինելով ոլորտի առանցքային կազմակերպություն՝ «Հայաստանի հանքագործների և մետալուրգների միությունը» (ՀՀՄՄ) (2025թ-ին վերանվանվել է «Հայաստանի հանքարդյունաբերության և մետալուրգիայի ասոցիացիա» հասարակական կազմակերպություն) ծառայում է որպես հարթակ ոլորտի քաղաքականության վրա ներազդելու և կարևոր խնդիրները լուծելու համար: Հաշվետու տարվա ընթացքում ԶՊՄԿ-ն շարունակել է առաջատար դեր խաղալ ՀՀՄՄ-ում ընթացող կարևոր քննարկումներում, իսկ Ընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Զհանյանը հանդես գալ որպես ՀՀՄՄ-ի ընտրված նախագահ: Կազմակերպվել են բազմաթիվ հանդիպումներ, սեմինարներ և աշխատաժողովներ՝ ոլորտի և շահագրգիռ կողմերի տարբեր խմբերի միջև երկխոսությունը խթանելու նպատակով: Մասնավորապես, «Տնտեսական լրագրողների ակումբ» ՀԿ-ի հետ համատեղ լրագրողների համար կազմակերպված սեմինարների շարքը հնարավորություն է տվել բարդ հարցերի շուրջ բովանդակալից, ոչ պաշտոնական երկխոսություն վարել ոլորտի ձեռնարկությունների ղեկավարների հետ:

ԶՊՄԿ-ն ակտիվորեն մասնակցել է ՀՀ կառավարության ոլորտային նախարարությունների հետ հանդիպումներին՝ ոլորտին վերաբերող քաղաքականության և օրենսդրական կարգավորումների կատարելագործմանը նպաստելու համար: 2024թ. սեպտեմբերին ԶՊՄԿ-ն՝ որպես գլխավոր հովանավոր, և ՀՀՄՄ-ն համատեղ կազմակերպեցին առաջին «Mining Armenia Forum»-ը: Երկօրյա միջազգային միջոցառումը միավորեց ՀՀՄՄ-ի անդամներին, Կառավարության պաշտոնյաներին, այդ թվում՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին, քաղաքացիական հասարակության և գիտական շրջանակների ներկայացուցիչներին՝ ոլորտին առնչվող հարցերի շուրջ համապարփակ քննարկումներ վարելու համար: Ֆորումի հաջողությունը, որին աջակցել են նաև «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ն, «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն և «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ն, նախադրյալներ է ստեղծել միջոցառումը շարունակական դարձնելու համար:

«Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն»

Մենք շարունակում ենք պահպանել «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն» (ԱՃԹՆ) սկզբունքները և չափորոշիչները: 2024թ. մարտին տեղի ունեցավ ԱՃԹՆ բազմաշահառու խմբի առաջին նիստը, որտեղ կարևոր որոշումներ կայացվեցին Հայաստանի ԱՃԹՆ-ի հինգերորդ՝ 2022թ. ազգային զեկույցի վերաբերյալ, որի պատրաստումը հետաձգվել էր մի շարք տեխնիկական խնդիրների պատճառով: ԶՊՄԿ-ն ոչ միայն տրամադրեց կարևոր տվյալներ, այլև ակտիվ մասնակցություն ունեցավ զեկույցի կազմման համար կապալառուի ընտրության գործում:

2024թ. հուլիսին հատուկ առաքելությամբ Երևանում էր գտնվում ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և «Open Ownership» կազմակերպության համատեղ պատվիրակությունը: ԶՊՄԿ-ն նշանակալի դեր է ունեցել ԱՃԹՆ բազմաշահառու խմբի նիստերում՝ նպաստելով ոլորտի հեռանկարների ձևավորմանը և անդրադառնալով շահագրգիռ կողմերի մտահոգություններին՝ համահունչ ԱՃԹՆ-ի առաքելությանը և սկզբունքներին:

Մենք հպարտ ենք, որ ԱՃԹՆ-ի խորհուրդը Հայաստանին շնորհել է բարձր գնահատական (89.5 միավոր) 2024թ-ին ԱՃԹՆ-ի պահանջների իրականացման համար, ինչը վկայում է այլ շահագրգիռ կողմերի հետ մեր արդյունավետ համագործակցության մասին:

Ընկերության ընդլայնված ներգրավվածությունը բիզնես համայնքում

ԶՊՄԿ-ն շարունակում է մնալ բիզնես համայնքի ակտիվ անդամ՝ անդամակցելով «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությանը» (ՀԱԳՄ), Հայ-բրիտանական գործարարության պալատին և Հայաստանի Եվրոպական բիզնես ասոցիացիային (ԵՎԲԱ — Հայաստան): Մեր անդամակցությունն այս

կազմակերպություններին արտացոլում է սոցիալական պատասխանատվության սկզբունքները պահպանելու և համայնքների զարգացման գործընթացում մասնակցելու Ընկերության ավելի լայն հանձնառությունը, որին իր հերթին աջակցում է նաև «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամը:

Բիզնես մոդել և արժեքաշղթա

GRI 2-6

Հանքաքարի արդյունահանում և վերամշակում



Հանքաքարի արդյունահանման գործընթացը սկսվում է մանրակրկիտ պլանավորված հորատման և պայթեցման աշխատանքներից, որոնք կարևոր են ապարները ջարդելու և հանքաքարին հասանելիություն ապահովելու գործում: Այս հիմնական աշխատանքներն իրականացվում են հատուկ ուշադրություն դարձնելով ճշգրտության և անվտանգության ապահովմանը՝ հանքաքարի արդյունահանումն առավելագույնի հասցնելու և շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու համար:

Հանքաքարի արդյունահանման գործընթացն ուղեկցվում է մի շարք կարևոր տեխնիկական սպասարկման և շահագործման աշխատանքներով, ներառյալ ճանապարհների սպասարկումը հանքաստիճանների տեխնիկական վիճակի և փոշու վերահսկումը: Այդ գործառնությունները կարևոր դեր են խաղում անվտանգ աշխատանքային պայմանների և անխափան գործունեության ապահովման, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա հանքարդյունաբերական գործունեության ազդեցության նվազեցման գործում՝ հատկապես օդի որակի և հողերի կառավարման տեսանկյունից:

Արդյունահանումից և համապատասխան ջարդումից հետո հանքաքարը տեղափոխվում է հարստացուցիչ ֆաբրիկա, որտեղ այն ենթարկվում է վերամշակման՝ անցնելով մի շարք գործընթացների հաջորդականություն: Հանքաքարը նախ մանրացվում է մանր մասնիկների, ապա վերամշակվում է փրփրային ֆլոտացիայի եղանակով, որը հանդիսանում է քիմիական ռեագենտների և օդի պղպեղների օգտագործմամբ առանձնացման մեթոդ՝ հանքանյութերի ընտրովի արդյունահանման համար: Այս մեթոդը հնարավորություն է տալիս արժեքավոր բաղադրիչների արդյունահանումը իրականացնել ավելի արդյունավետ, որի արդյունքում արտադրվում են երկու հիմնական՝ պղնձի և մոլիբդենի խտանյութերը:

Ֆլոտացիայից հետո խտանյութերը ենթարկվում են ջրազրկման՝ գործընթացի, որի միջոցով հեռացվում է ավելորդ խոնավությունը: Այս փուլը նպաստում է նյութերի մշակման գործընթացի բարելավմանը, նվազեցնում է տեղափոխման ծախսերը և ապահովում է արտադրանքի պատրաստվածությունը՝ գործընկերներին մատակարարման և վերջիններիս կողմից հետագա վերամշակման համար:

Հանքաքարի և խտանյութի նմուշներն անցնում են որակի վերահսկողություն: Այս ստուգումները ներառում են ֆլոտացիայի արդյունքների գնահատումը, քիմիական և ֆիզիկական անալիզները՝ վերջնական արտադրանքի համապատասխանությունը ներքին չափանիշներին և հաճախորդի պահանջներին ապահովելու համար:

Հանքաքարի վերամշակման արդյունքում առաջացող պղնձը և փրփրային ֆլոտացիայի արդյունքում առաջացած մնացորդային նյութերի անվտանգ պահպանման համար: Հարստացուցիչ ֆաբրիկան և պղնձաբարձ միացված են միմյանց Ողջի գետի ձախ ափի երկայնքով տեղակայված խողովակաշարերով ու վաբերով՝ ապահովելով պղնձի և փրփրային արդյունքների անընդհատ և շրջակա միջավայրի համար անվտանգ տեղափոխումը:

Արժեքաշղթա

Արժեքաշղթան ընդգրկում է Ընկերության գործունեության հիմնական փուլերի ամբողջ շրջանակը, ներառյալ հանքաքարի արդյունահանումը, դրա վերամշակումը, պղնձի ու մոլիբդենի խտանյութերի, վերջնական արտադրանքի շուկա դուրս բերումը և վաճառքը: Արժեքաշղթայի յուրաքանչյուր փուլ արժեք է ավելացնում՝ հումքը վերածելով վերամշակված, շուկայում իրացվելի խտանյութերի, որոնք կարևոր հումք են հանդիսանում համաշխարհային արդյունաբերության տարբեր ճյուղերի համար:

Մատակարարման շղթան օժանդակում է այս գործընթացին ապահովելով ռեսուրսների և ծառայությունների շարունակական և արդյունավետ հոսք: Այն ընդգրկում է շահագրգիռ կողմերի լայն շրջանակ, ներառյալ հումքի և օժանդակ նյութերի, հանքարդյունաբերական սարքավորումների և մեքենաների մատակարարներին, էներգիայի մատակարարներին և պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցողներին, որոնք ներգրավված են սպասարկման, բեռնափոխադրման և տեխնիկական աջակցության գործընթացներում: Այս գործընկերները կարևոր դեր են խաղում հանքարդյունաբերության և արտադրության անվտանգ, արդյունավետ և կայուն գործունեության ապահովման գործում:

Ընկերության արտադրանքը վաճառվում է հիմնականում ձուլարաններին և մետաղամշակման ձեռնարկություններին, որոնք խտանյութերը վերամշակում են մաքուր պղնձի և մոլիբդենի: Ստացված մետաղները լայնորեն կիրառվում են տարբեր ոլորտներում, ներառյալ շինարարական էլեկտրոնիկայի և մեքենաշինության ոլորտներում:

Առևտրային հարաբերություններից բացի, Ընկերությունն ակտիվորեն համագործակցում է այլ հիմնական շահագրգիռ կողմերի հետ, որոնց շարքում են ՀՀ պետական մարմինները, որոնք վերահսկում են համապատասխանությունը նորմատիվային պահանջներին և թույլտվությունների տրամադրումը, տեղական համայնքները, որոնց բարեկեցությունը հանդիսանում է Ընկերության սոցիալական պատասխանատվության հիմնական առաջնահերթություններից մեկը, արհմիությունները, քաղաքացիական հասարակությունը, տեղական հասարակական կազմակերպությունները, որոնք ներկայացնում են աշխատողների շահերը, ինչպես նաև ոլորտում գործող ասոցիացիաները, որոնք խթանում են համագործակցությունը, գիտելիքների փոխանակումը և հանքարդյունաբերության ոլորտում պատասխանատու գործունեության ստանդարտների կիրառումը:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության բիզնես գործունեության, կամ այլ շահագրգիռ կողմերի հարաբերություններում էական փոփոխություններ չեն գրանցվել:

1. ԶՊՄԿ-ի մասին
2. Տնտեսական ազդեցություն
3. Կորպորատիվ կառավարում
4. ԶՊՄԿ-ի աշխատողները
5. Բարեկեցության և կայունության ապահովում աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման մշակույթի ձևավորման միջոցով

6. Տեղական համայնքներ
7. Շրջակա միջավայրի պահպանություն և կայունություն
8. Կլիմայի փոփոխություն
9. Հավելվածներ

Պատասխանատվություն մատակարարման շղթայում

GRI 3-3



2024թ-ին ԶՊՄԿ-ն շարունակել է ամրապնդել մատակարարման շղթայի պատասխանատու կառավարման նկատմամբ կիրառվող իր մոտեցումը: «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից իրականացվել է Ընկերության գնումների

գործընթացի գնահատում՝ ISO 20400:2017 ստանդարտի և գնումների ոլորտի լավագույն միջազգային գործելակերպի համաձայն: Գնահատման նպատակն էր հավաստիանալ, որ ԶՊՄԿ-ի գնումների գործընթացը համապատասխանում է կայուն գնումների ստանդարտներին և առաջատար գործելակերպին: Արդյունքում, մշակվել և հետագայում կիրառման համար հաստատվել է Գնումների քաղաքականությունը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով կայուն զարգացման վրա: Մատակարարման շղթայում կայունությունը բարձրացնելու համար հաջորդ քայլը կլինի Գնումների ուղեցույցի և մանրամասն աշխատանքային ընթացակարգերի վերջնականացման գործընթացը 2025թ-ին:

Միաժամանակ մշակվում են պահեստի աշխատանքը կառավարելու նոր մեթոդներ, որոնք ընդգրկում են այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են աշխատանքի անվտանգությունը, պատշաճ արտադրական պրակտիկան, արտադրության կազմակերպման և ձեռնարկության կառավարման ստանդարտը, ինչպես նաև մետաղի ջարդոնի և չօգտագործվող նյութերի կառավարումը:

2024թ-ին ԶՊՄԿ-ն իրականացրել է իր մատակարարման շղթայի գործառույթի նշանակալի վերակազմավորում՝ ստեղծելով նյութերի շարժի պլանավորման և հաշվառման վարչություն: Վերջինս համակարգում է պահեստի աշխատանքները, վերահսկում է չօգտագործվող նյութերը, ինչպես նաև կառավարում

է նորմատիվային և ելակետային տվյալները: Բաժնի աշխատանքի հիմնական նպատակներն են կենտրոնացնել պլանավորման գործընթացները, օպտիմալացնել պաշարների կառավարումը և բարձրացնել Ընկերության շրջանառու կապիտալի օգտագործման արդյունավետությունը: Այդ վերակազմավորման շրջանակում Ընկերությունում 2024թ-ին ձևավորվել է Չօգտագործվող նյութերի աճուրդային հանձնաժողով և ներդրվել են պաշարների կանխատեսման նոր գործիքներ՝ էլ ավելի ամրապնդելով մատակարարման շղթայի կարողությունները:

Նյութատեխնիկական ապահովման տնօրենությունը, որը պատասխանատու է մատակարարման շղթայի կառավարման համար, գործում է Գործադիր տնօրենի վերահսկողության ներքո: Նյութատեխնիկական ապահովման տնօրենությունը վերահսկում է իր հետևյալ չորս՝ նյութերի շարժի պլանավորման և հաշվառման, Գնումների գծով գործառնական ծախսումների (Opex), Գնումների գծով կապիտալ ծախսումների (Capex) և Լոգիստիկայի վարչությունների աշխատանքը:

ԶՊՄԿ-ի մատակարարման շղթայի կառավարման արդյունավետությունը գնահատվում է կատարողականի ցուցանիշների համապարփակ համակարգի միջոցով, ներառյալ՝ պաշարների կառավարման օպտիմալացումը, պահեստի աշխատանքի և գնումների արդյունավետությունը, չօգտագործվող ակտիվների օգտագործումը, ֆինանսական արդյունքները, համապատասխանության ստուգման և աուդիտի արդյունքները:

2024թ-ի համար, ինչպես նաև միջնաժամկետ հեռանկարի տեսանկյունից՝ Ընկերությունը սահմանել է ռազմավարական նպատակներ, որոնք կենտրոնացած են պաշարների կառավարման օպտիմալացման, ծախսերի արդյունավետության բարձրացման և շրջակա միջավայրի կայունության ապահովման վրա:

Այդ նպատակների համար սահմանված կատարողականի հիմնական ցուցանիշներն են՝

Պաշարների կառավարում. պաշարների շրջանառության հարաբերակցության բարձրացում, արտադրանքի մեկ տոննային բաժին ընկնող պաշարների արժեքի նվազեցում, ոչ իրացվելի պաշարների քանակի հնարավորինս կրճատում և պահուստային պաշարների օպտիմալ մակարդակի պահպանում:

Գնումներ. կանխատեսումների ճշգրտության բարելավում, պաշարների բացակայության դեպքերի և գնումների կատարման ժամանակի կրճատում, վճարման պայմանների օպտիմալացում, գնումների պայմանների խախտումների նվազեցում և առավել շահավետ գների բանակցում:

Կայունություն. CO₂ արտանետումների կրճատում՝ կապիտալ ծախսերի միջոցով:

Այդ նպատակների իրագործումը խթանելու համար ԶՊՄԿ-ն նախատեսում է ներդնել պաշարների կառավարման ավտոմատացված համակարգեր, բարելավել հաշվետվողականության համակարգը՝ թափանցիկության ավելի բարձր մակարդակ ապահովելու և կայունության ցուցանիշները վերահսկելու համար, ինչպես նաև օպտիմալացնել պահեստի աշխատանքները՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու համար:

Նոր մատակարարներին գնահատելիս ԶՊՄԿ-ն կիրառում է սոցիալական և գործառնական չափանիշներ, մասնավորապես, հաշվի է առնում արժեքը և մատակարարման ժամկետը, արտադրանքի սերտիֆիկացումը, փորձարկման և որակի ապահովման ստանդարտները¹, ինչպես նաև դրական սոցիալական ազդեցությունը տեղական համայնքների վրա: Մատակարարների համապատասխանությունը պահանջներին գնահատվում է փաստաթղթերի ստուգման, նմուշների փորձարկման, մատակարարման ժամկետի և մատակարարումների տեղական աղբյուրների գնահատման միջոցով: Եթե մատակարարը չի համապատասխանում այդ չափանիշներին, կարող է դիտարկվել այնպիսի միջոցառումներ ձեռնարկելու հնարավորությունը, ինչպիսիք են շտկումներ պահանջելը, վերագնահատումը կամ վերջինիս՝ գնումների գործընթացին մասնակցելու հնարավորությունից զրկումը:

GRI 301-1

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության առաջնային արտադրանքի արտադրության և փաթեթավորման համար օգտագործված նյութերի ընդհանուր ծավալը:

Արտադրության և փաթեթավորման համար օգտագործված նյութեր

Նյութ	Չափման միավոր	2023թ.	2024թ.	Տոկոսային փոփոխություն
Յուղ	լիտր	3,513	2,163	-38.4%
Քսանյութեր	լիտր	98,587	93,014	-5.7%
Գնդեր	տոննա	14,982	15,305	2.2%
Չհանգած կիր և ավելի քան 80% ակտիվացված կիր	տոննա	16,803	11,678	-30.5%
Սոճու յուղ	տոննա	89.0	123	38.2%
Փրփրագոյացնող ռեագենտ	տոննա	250.0	273	9.2%
Քսանտոգենատ	տոննա	473	499	5.5%
Նատրիումի սուլֆիդ և նատրիումի հիդրոսուլֆիդ	տոննա	11,750	13,239	12.7%

¹ Թեև նոր ներգրավված մատակարարների մեծ մասը գնահատվել է սահմանված չափանիշների տեսանկյունից և համապատասխանել է դրանց, ճշգրիտ քանակական տվյալները ներկայումս հասանելի չեն:

Տնտեսական ազդեցություն՝ նպաստելով տեղական համայնքների և երկրի տնտեսական զարգացմանը

- 23

—

Տնտեսական ազդեցությունը թվերով
- 27

—

Հարկային պարտավորությունների կառավարում. թափանցիկություն և ղեկավարության հաշվետվողականություն
- 29

—

ԲՄԿ սկզբունքների հետ կապված ռիսկերի շրջանակ և ֆինանսական հետևանքներ
- 30

—

Գնումներ և տնտեսական զարգացում



GRI 3-3



Նախորդ տարիներին ձևավորված հիմքը թույլ է տվել ապահովել առավել բարձր մակարդակի համապատասխանություն կազմակերպության քաղաքականություններին, Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանին և այլ հիմնական ներքին հայեցակարգերին, որոնք ուղղորդիչ դեր ունեն տնտեսական ազդեցության և շահագրգիռ կողմերի հետ համագործակցության կառավարման գործընթացներում: Այս հաշվետու տարվա ընթացքում Ընկերությունը շարունակել է կատարել կայուն տնտեսական աճի ապահովման իր պարտավորությունները՝ ֆինանսական և համայնքների զարգացմանն ուղղված ներդրումային ռազմավարությունների կատարելագործման միջոցով:

Գործադիր ղեկավարները շարունակում են առանցքային դեր խաղալ Ընկերության գործունեության ռազմավարական ուղղության ձևավորման, տնտեսական քաղաքականությունների հաստատման, ինչպես նաև պատասխանատու ֆինանսական կառավարման խթանման գործում: Գլխավոր տնօրենի առաջին տեղակալը և ֆինանսական տնօրենը շարունակում են պատասխանատվություն կրել տնտեսական ազդեցության ռազմավարության իրականացման, համապատասխանության և ֆինանսական հաշվետվությունների թափանցիկության ապահովման համար:

Այս տարի ևս մեր ջանքերը ուղղված էին տնտեսական կայունության բարձրացմանը և տնտեսական աճի խթանմանը՝ տեղական և հանրապետական մակարդակներում: Մենք շարունակեցինք քայլեր ձեռնարկել տեղական գնումների ծավալը մեծացնելու, ինչպես նաև համայնքային ենթակառուցվածքներում ներդրումները և շահագրգիռ կողմերի ներգրավվածությունն ընդլայնելու ուղղությամբ:



Տնտեսական ազդեցությունը թվերով

ԶՊՄԿ-ն շարունակում է կարևոր դեր խաղալ Հայաստանի տնտեսությունում՝ նշանակալի ներդրում ունենալով ինչպես տեղական համայնքների, այնպես էլ պետության զարգացման գործում: 2024թ-ին Ընկերության ընդհանուր հասույթը կազմել է 713.1 միլիոն ԱՄՆ դոլար (ինչպես ներկայացված է աուդիտի ենթարկված տարեկան ֆինանսական հաշվետվություններում)՝ ինչը 10.4%-ով ցածր է 2023թ. համեմատ: Հասույթի նվազումը հիմնականում պայմանավորված էր տարվա ընթացքում արդյունահանված հանքաքարի կազմի երկրաբանական բնութագրերով: Չնայած ընդհանուր հասույթի

նվազմանը, մենք 2024թ-ին պահպանեցինք Հայաստանի ամենախոշոր հարկատուի կարգավիճակը: 2024թ-ին՝ ԶՊՄԿ-ի պետական բյուջե վճարումները եկամտահարկի և ռոյալթիների տեսքով, կազմել են 216 միլիոն ԱՄՆ դոլար՝ ամրապնդելով Ընկերության առաջնային դերակատարի դիրքը տնտեսությունում:

Ստորև ներկայացված են Ընկերության տնտեսական ազդեցության թվային ցուցանիշները հաշվետու տարվա համար:

GRI 201-1, SASB EM-MM-000.A

Տնտեսական ազդեցություն (միլիոն ԱՄՆ դոլար)

Ցուցանիշ	2023թ.	2024թ.	Տոկոսային արտահայտություն
1. Ստեղծված ուղղակի տնտեսական արժեք	795.8	713.1	-10.4%
Եկամուտ (հասույթ)	795.8	713.1	-10.4%
2. Բաշխված տնտեսական արժեք	619.5	1,009.5	63.0%
Գործառնական ծախսեր	289.9	317.8	9.6%
Աշխատավարձեր, այլ վճարումներ և լրավճարներ	117.1	120.1	2.6%
Վճարումներ կապիտալ ներդրողներին (շահաբաժիններ)	0	337.6	-
Վճարումներ պետությանը, այդ թվում՝	212.5	234.0	10.1%
– Շահութահարկը	56.7	48.6	-14.3%
– Ռոյալթիներ	135.6	167.2	23.3%
– Ներդրումներ տեղական համայնքներում (նվիրատվություններ)	20.2	18.3	-9.4%
3. Պահպանված տնտեսական արժեք (1 — 2)	176.3	-296.4	-268.1%

2024թ-ին Ընկերության ընդհանուր հասույթը կազմել է

\$713.1 միլիոն

2024թ-ին՝ ԶՊՄԿ-ի պետական բյուջե վճարումները եկամտահարկի և ռոյալթիների տեսքով, կազմել են

\$216 միլիոն

2024թ. գործունեության հիմնական ցուցանիշների ամփոփ ներկայացում

GRI 207-4

Ցուցանիշ	«Զանգեզուրի արնձամուխիբոլենային կոմբինատ» ՓԲԸ		«Լեռ-Էքս» ՍՊԸ	
	2023	2024	2023	2024
Աշխատողների թիվը (31.12.2024թ. դրությամբ)	4,666	4,654	114	115
Երրորդ անձանց հետ վաճառքից ստացված հասույթ	\$795.787 միլիոն	\$713.087 միլիոն	\$3.104 միլիոն	\$2.827 միլիոն
Օտարերկրյա հարկային դաշտում գործող խմբի այլ ընկերությունների հետ ներխմբային գործարքներից ստացված հասույթ	\$0 միլիոն	\$0 միլիոն	\$0 միլիոն	\$0 միլիոն
Շահույթ/վնաս մինչև հարկումը	\$363.308 միլիոն	\$215.030 միլիոն	\$ -103.513 միլիոն	\$ -0.515 միլիոն
Նյութական միջոցներ, բացի դրամական միջոցներից և դրանց համարժեքներից				
Հիմնական միջոցներ	\$547.932 միլիոն	\$614.268 միլիոն	\$2.046 միլիոն	\$1.879 միլիոն
Պաշարներ	\$96.670 միլիոն	\$90.419 միլիոն	\$0.150 միլիոն	\$0.157 միլիոն
Ընկերության՝ կանխիկ եղանակով վճարված շահութահարկ	\$29.263 միլիոն	\$48.570 միլիոն	\$0 միլիոն	\$0 միլիոն
Շահույթի/վնասի դիմաց հաշվեգրված շահութահարկ	\$56.671 միլիոն	\$42.341 միլիոն	\$0 միլիոն	\$0 միլիոն



ԶՊՄԿ-ն միաժամանակ Հայաստանի խոշորագույն արտահանողներից մեկն է, որին բաժին է ընկնում երկրի ընդհանուր արտահանման մոտ 5-7%-ը: Ընկերության ուղղակի ներդրումը Հայաստանի ՀՆԱ-ում գնահատվում է մոտ 2-3%, հիմնականում պղնձի և մոլիբդենի խտանյութերի արդյունահանման և վերամշակման ոլորտում ավելացված արժեքի միջոցով: Ազգային տնտեսության վրա անուղղակի և ածանցյալ տնտեսական ազդեցություններն ավելի են մեծացնում ՀՆԱ-ի վրա ունեցած ազդեցության ծավալը:

Անուղղակի տնտեսական ազդեցություն

GRI 203-2

ԶՊՄԿ-ի գործունեությունն էական անուղղակի տնտեսական ազդեցություն ունի՝ զբաղվածության մուլտիպլիկատիվ 5-էֆեկտով: Վերջինիս շնորհիվ, բացի իր հիմնական աշխատուժից, Ընկերությունն անուղղակի կերպով ստեղծել մոտ 20,000 լրացուցիչ աշխատատեղ:

Այս աշխատատեղերը ստեղծվում են մատակարարների, ծառայություն մատուցողների ցանցի և ընդլայնված տնտեսական էկոհամակարգի միջոցով, որը օգտվում է ինչպես աշխատողների և կապալառուների, այնպես էլ կորպորատիվ ծախսերից: ԶՊՄԿ-ի գործունեության արդյունքում դրական տնտեսական ազդեցություն ունեցող ոլորտների թվում են բեռնափոխադրումը, սպասարկումը, մանրածախ առևտուրը և տարբեր օժանդակ ծառայությունները:

Ընկերության ուղղակի ներդրումը Հայաստանի ՀՆԱ-ում գնահատվում է մոտ

2–3%



Հարկային պարտավորությունների կառավարում. թափանցիկություն և ղեկավարության հաշվետվողականություն

GRI 3-3

Հարկային պարտավորությունների կառավարում և համապատասխանության ապահովում

GRI 207-2

ԶՊՄԿ-ում գործում է հարկային պարտավորությունների կառավարման և հսկողության կայուն համակարգ, որն ապահովում է համապատասխանությունը տեղական օրենսդրությանը և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին:

Գլխավոր տնօրենի առաջին տեղակալը և ֆինանսական տնօրենը պատասխանատու են հարկային ռազմավարության, հարկային պարտավորությունների վերահսկողության և հարկային օրենսդրության հետ համապատասխանության ապահովման համար:

Հարկային օրենսդրության հետ համապատասխանությունն Ընկերության ընդհանուր կորպորատիվ կառավարման և ներքին վերահսկողության համակարգերի անբաժանելի մասն է: Հարկային տեսանկյունից էական հետևանքներ ունեցող բոլոր որոշումները դիտարկվում են տարբեր բաժինների, այդ թվում՝ ֆինանսական և Իրավաբանական դեպարտամենտների կողմից:

2024թ-ին ԶՊՄԿ-ի հարկային պարտավորությունների, այդ թվում՝ վճարված շահութահարկի և հետաձգված հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը հաստատվում է Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտի միջոցով, որն իրականացվում է «Մեծ քառյակի» ընկերությունների կողմից: Աուդիտի արդյունքում հաստատվում է հարկային հաշվետվությունների ճշգրտությունը և թափանցիկությունը՝ ՖՀՄՍ պահանջների համաձայն, և հրապարակվում է աուդիտորական եզրակացությունն Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Հանրային քաղաքականություն. համագործակցությունը հարկային մարմինների և շահագրգիռ կողմերի հետ

GRI 3-3, 207-3, 415-1

Մենք պահպանում ենք թափանցիկ և գործընկերային հարաբերություններ ՀՀ հարկային մարմինների հետ, որոնք հիմնականում վերահսկվում են Գլխավոր տնօրենի առաջին տեղակալի և Ֆինանսական տնօրենի կողմից: Այդ համագործակցության շրջանակում իրականացվում է կանոնավոր հաղորդակցություն հարկային հաշվետվությունների, համապատասխանության ստուգումների և օրենսդրության թարմացումների վերաբերյալ:

Թեև ԶՊՄԿ-ն ակտիվ կերպով հանդես չի գալիս հարկային հարցերի հետ կապված հանրային քաղաքականության փոփոխությունների օգտին՝ հրավիրված լինելու դեպքում մասնակցում է Կառավարության խորհրդակցություններին, մասնավորապես, հանքարդյունաբերության ոլորտի վրա ազդեցություն ունեցող առաջարկվող բարեփոխումների շուրջ քննարկումներին:

Գլխավոր տնօրենի առաջին տեղակալը հանդիսանում է նաև «Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության» նախագահ (պաշտոնը զբաղեցնող անձը ընտրվում է ռոտացիոն կարգով): Այս կարգավիճակում ԶՊՄԿ-ն ակտիվորեն ներգրավված է ոլորտին վերաբերող հանրային քաղաքականության քննարկումներում և նախաձեռնությունների պաշտպանության գործընթացում: Հարկ է նաև նշել, որ 2025թ. կեսերից Կայուն զարգացման գծով տնօրենը և Գլխավոր տնօրենի առաջին տեղակալը ներգրավված են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների զարգացման նախարարության Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության իրականացման աշխատանքային խմբում:

Աշխատողները բարեվարքության կանոնների խախտումների կամ իրավական հարցերի հետ կապված իրենց մտահոգությունների մասին կարող են տեղեկացնել

Ազդարարման քաղաքականությամբ առաջարկվող ընթացակարգերի միջոցով կամ ոչ պաշտոնապես՝ հաղորդակցման միջոցներով, կամ քաղաքականության մեջ նշված պատասխանատու անձանց դիմելով: Բողոքների դիտարկման ընթացակարգի մշակման հարցը դիտարկվում է Ընկերության կառավարման պրակտիկայի կատարելագործման լայն շրջանակում:

Շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը հարկերին վերաբերող հարցերում մնում է ոչ պաշտոնական հարթակում: Թեև Ընկերությունը կանոնավոր երկխոսություն է վարում համայնքների անդամների, աշխատողների, պետական պաշտոնյաների և ԱԾԹՆ ներկայացուցիչների հետ կայուն զարգացման և ընթացիկ հարցերի շուրջ, ներկայումս չի գործում հատուկ հարթակ հարկերին առնչվող հարցերի վերաբերյալ շահագրգիռ կողմերի կարծիքը ստանալու համար:

2024 հաշվետու տարում մենք չենք կատարել դրամային կամ ոչ դրամային ներդրումներ քաղաքական ոլորտում: Ընկերությունը հետևում է քաղաքական չեզոքության խիստ քաղաքականությանը՝ ամբողջությամբ համապատասխանելով քաղաքական գործունեության շրջանակում ձեռնարկությունների մասնակցության մասին ՀՀ օրենքների պահանջներին:



ԲՄԿ սկզբունքների հետ կապված ռիսկերի շրջանակ և ֆինանսական հետևանքներ

Մեր Ընկերությունն ակտիվորեն աշխատում է ԲՄԿ սկզբունքների հետ կապված հիմնական ռիսկերի և հնարավորությունների ֆինանսական ազդեցության գնահատման իր ներքին համակարգը բարելավելու ուղղությամբ: Թեև դեռ չի ստեղծվել ԲՄԿ սկզբունքների հետ կապված ռիսկերի պաշտոնական գրանցամատյան, Ընկերությունը կիրառում է որակական գնահատման մոտեցում՝ իր ռազմավարական պլանավորման և ներդրումային որոշումների կայացման գործընթացում, ԲՄԿ սկզբունքների հետ կապված ֆինանսական ազդեցությունը բացահայտելու և դիտարկելու համար: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ԲՄԿ սկզբունքների հետ կապված ռիսկերի հիմնական դասերը՝ հնարավոր տնտեսական ազդեցության գնահատված մակարդակների հետ մեկտեղ:

Ռիսկի ոլորտ	Գնահատված տնտեսական ազդեցություն	Հիմնական հետևանքները
Օրենսդրական փոփոխություններ	Բարձր	Համապատասխանության ապահովման հետ կապված ծախսերի աճ և կապիտալ ներդրումների հնարավոր անհրաժեշտություն
Կլիմայի փոփոխության ռիսկեր	Միջինից բարձր	Գործունեության խափանումներ, ծախսերի աճ և կլիմայի փոփոխությանը հարմարվողականության հետ կապված ներդրումներ
ԲՄԿ վարկանիշ և ներդրողների ակնկալիքներ	Միջին	Հնարավոր ազդեցություն կապիտալի հասանելիության և ֆինանսավորման հետ կապված ծախսերի վրա
Հարաբերություններ համայնքների հետ	Միջինից բարձր	Աշխատանքների կամ արտադրության ուշացումներ՝ համայնքների չլուծված խնդիրների պատճառով

ԶՊՄԿ-ն գիտակցում է ժամանակակից համաշխարհային չափանիշներին համապատասխան՝ քանակական ռիսկերի գնահատման կայուն համակարգ ստեղծելու կարևորությունը, մասնավորապես, կլիմային վերաբերող ֆինանսական տեղեկատվության բացահայտումների, այդ թվում՝ Կլիմայի հետ կապված ֆինանսական բացահայտումների աշխատանքային խմբի (TCFD) կողմից առաջարկների համատեքստում:

Թեև այդ համակարգը դեռ ձևավորված չէ, Ընկերությունը դրա մշակումը սահմանել է որպես ռազմավարական առաջնահերթություն: Նախապատրաստական քայլերը, այդ թվում՝ ներքին կարողությունների զարգացումը, տվյալների կազմումը և մեթոդաբանական պլանավորումը, նախատեսված են կարճաժամկետից միջնաժամկետ հեռանկարում և դրանց իրականացումը պայմանավորված է ռեսուրսների առկայությամբ և կազմակերպչական պատրաստվածությամբ:

Գնումներ և տնտեսական զարգացում

GRI 3-3

2022թ-ից ի վեր ԶՊՄԿ-ն համակարգված կերպով հավաքել և վերլուծել է իր գնումների վերաբերյալ տվյալները, ներառյալ ապրանքների և ծառայությունների մատակարարների տարեկան թիվը, դրանց հետ կապված ծախսերը և գնումների աղբյուրների աշխարհագրական բաշխվածությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով տեղական և արտաքին գնումների հավասարակշռությանը: Այդ քայլերը վկայում են տեղական գնումների գործընթացներն ամրապնդելու Ընկերության շարունակական հանձնառության մասին:

Ստորև ամփոփ կերպով ներկայացված են օրինակներ, որոնք փաստում են, թե ինչպես է աճել տեղական գնումների ծավալը՝ հիմնվելով Տեղական գնումների պլանի նախագծի առաջարկությունների վրա: Նշված դեպքերը ընդգծում են, թե ինչպես կարող են ռազմավարական պլանավորումն ու նպատակային գործողությունները ընդլայնել տեղական գնումները՝ դրական ազդեցություն թողնելով տարածաշրջանի տնտեսական զարգացման վրա:

Տարեկան գնումների վերլուծությունն արժեքավոր տեղեկատվություն է տրամադրում մատակարարման սխեմաների վերաբերյալ ինչպես Հայաստանում, այնպես էլ այլ տարածաշրջաններում, այդ թվում՝ Եվրոպայում, Չինաստանում և Ռուսաստանում: Ավելի կարևոր է, որ բացահայտվում են ոլորտները, որտեղ հնարավոր է կատարել բարելավումներ, ինչպես նաև տեղական մատակարարների հետ համագործակցությունն ընդլայնելու հնարավորությունները, մասնավորապես այն համայնքներում, որոնց վրա անմիջական ազդեցություն

ունի Ընկերության գործունեությունը: Տեղական գնումների տվյալների վերլուծությունը և թարմացումները պարբերաբար հավաքագրվում և արտացոլվում են ԶՊՄԿ-ի սոցիալական գործունեության կիսամյակային հաշվետվություններում:

ԶՊՄԿ-ն ձգտում է խթանել տեղական գնումները՝ տեղական բիզնեսի հետ համագործակցության միջոցով, դրանով իսկ զարգացնելով տեղական² տնտեսությունը և ստեղծելով տնտեսապես կենսունակ համայնքներ իր գործունեության տարածքում:

Տեղական գնումները խթանելու Ընկերության հանձնառությունն ակնհայտ է. ապրանքների 51.4%-ը ձեռք է բերվել 380 տեղական (հայկական) մատակարարներից, իսկ ծառայությունների 92.5%-ը՝ Հայաստանի 430 տեղական ծառայություն մատուցողներից: Այդպիսով, միջինում, ընդհանուր գնումների 71.5%-ը կատարվել է տեղական աղբյուրներից:

2024թ-ին ապրանքների և ծառայությունների գնման համար ծախսվել է մոտ 327 միլիոն ԱՄՆ դոլար, ընդ որում ապրանքների և ծառայությունների գծով ծախսերը բաշխվել են հավասարաչափ: 235 միլիոն ԱՄՆ դոլարը կամ ընդհանուր գնումների մոտ 72%-ը բաժին է ընկել Հայաստանում գործող 810 ընկերություններից կատարված ապրանքների և ծառայությունների տեղական գնումներին, ինչը նպաստել է աշխատատեղերի ստեղծմանը, տեղական բիզնեսի ամրապնդմանը և երկրի տնտեսական աճին:

Գնումների բացվածք. ապրանքներ և ծառայություններ (ԱՄՆ դոլարով)

Ծառայություններ
\$162,744,085

Ապրանքներ
\$164,594,957

Ընդամենը
\$327,339,042


² Այս համատեքստում «տեղական» հասկացությունը վերաբերում է ԶՊՄԿ-ի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքներին, առաջնահերթություն տալով հարակից համայնքներին, այնուհետև՝ Հայաստանի այլ շրջաններին:

Ապրանքների ձեռք բերում³

2023թ-ի համեմատ տեղական ապրանքների ձեռք բերման մասնաբաժինը մնացել է անփոփոխ՝ 51.4%, մինչդեռ Ռուսաստանից գնվող ապրանքների ծավալն աճել է ԵՄ անդամ պետություններից գնումների հաշվին:


Ինչ վերաբերում է մատակարարների թվին, ապա նրանց մեծ մասը գտնվում է Հայաստանում՝ կազմելով ընդհանուր թվի 53%-ը: Ռուսաստանը ներկայացնում է մատակարարների երկրորդ խոշորագույն խումբը՝ 23%, որին հաջորդում է Չինաստանը՝ 9%:

2024թ. ապրանքների ձեռք բերման աշխարհագրությունն ըստ ծավալի




■ ՀՀ ■ ՌԴ ■ ԵՄ ■ Չինաստան ■ Այլ

2024թ. ապրանքների ձեռք բերման աշխարհագրությունն ըստ ընկերությունների թվի



■ ՀՀ ■ ՌԴ ■ ԵՄ ■ Չինաստան ■ Այլ

Ապրանքների ձեռք բերման աշխարհագրությունը Հայաստանում, 2024 թ.



■ Երևան ■ Սյունիքի ■ Կոտայք ■ Այլ

Հայաստանում ապրանքների 72.6%-ը ձեռք է բերվել Երևանից, որին հաջորդում է Ընկերության գործունեության հիմնական տարածքը՝ Սյունիքի մարզը՝ 13.5%:

Սյունիքի մարզում կատարված գնումների ընդհանուր ծավալից

- > 48%-ը բաժին է ընկնում Կապանին,
- > 26%-ը՝ Քաջարանին,
- > 24%-ը՝ Ագարակին,
- > 1.5%-ը՝ Սյունիքի մարզի այլ համայնքներին,
- > 0.5%-ը՝ Գորիսին:


³ Այլ երկրները ներառում են Ղազախստանը, Հնդկաստանը, Վրաստանը, Կանադան և այլն:

Ապրանքների մատակարարները Հայաստանում


Հայաստանում գործող տեղական ապրանքների 380 մատակարարներից 70%-ը գտնվում է Երևանում, իսկ 18%-ը՝ Սյունիքի մարզում: Մնացած մատակարարները գտնվում են Կոտայքում և այլ մարզերում, ինչպես ներկայացված է ստորև:

Ստորև ներկայացված է ձեռք բերված ընդհանուր ապրանքների (բացառությամբ տեղական գնումների) բացվածքն ըստ խմբերի:

2024թ. ապրանքների տեղական մատակարարների աշխարհագրությունը Հայաստանում



2024թ. ծառայությունների ձեռք բերման աշխարհագրությունն ըստ ընկերությունների թվի




Ծառայությունների ձեռք բերում

GRI 204-1

Տեղական ծառայությունների ձեռք բերման մասնաբաժինը 2024թ-ին կազմել է 92.5%, ինչը փոքր-ինչ նվազել է 2023թ-ի համեմատ, սակայն դեռևս կազմում է ընդհանուր գնումների գերակշռող մասը:

Ինչ վերաբերում է ծառայություն մատուցողներին, ապա վերջիններիս մոտ 84%-ը գտնվում է Հայաստանում:

2024թ. ծառայությունների ձեռք բերման աշխարհագրությունն ըստ ծավալի




2024թ-ին ձեռք բերված ապրանքների խմբերը

Ապրանքի խումբը	Տոկոս
Հիմնական միջոցներ	22%
Պահեստամասեր	19%
Վառելիք	18%
Ռեագենտներ	8.5%
Պողպատե գնդեր	7.4%
Հումք	7%
Այլ	18%

Հայաստանում ձեռք բերված ծառայությունների աշխարհագրական տեսանկյունից բաշխումը հետևյալն է՝ Երևանին բաժին է ընկնում 51%-ը, որին հաջորդում է Սյունիքի մարզը, ծառայությունների մյուս մասը ձեռք է բերվել Արմավիրի և Կոտայքի մարզերից:

Հայաստանում ձեռք բերված ծառայություններն ըստ մարզերի, 2024թ.



Սյունիքի մարզում ծառայությունների ձեռք բերման մոտ 90%-ը կենտրոնացած է Կապանում, Քաջարանում և շրջակա գյուղերում:

Ստորև ներկայացված է ձեռք բերված ընդհանուր ծառայությունների (ոչ տեղական ծառայություններ մատուցողներից) ամենամեծ խմբերի բացվածքը:

2024թ-ին ձեռք բերված ընդհանուր ծառայությունների ամենամեծ խմբերը

Ծառայության անվանում	Տոկոս
Բեռնափոխադրում	33%
Էներգիայի մատակարարում	22%
Տեխնիկական սպասարկում	16%
Մասնագիտական ծառայություններ	14%
Հումքի մշակում, հորատապայթեցման աշխատանքներ	5%
Վարձակալություն	6%
Այլ	4%

Ծառայություն մատուցողների

84%

գտնվում է Հայաստանում



2024թ-ին Կայուն զարգացման տնօրենության սոցիալական հարցերով զբաղվող խումբն իրականացրել է ԶՊՄԿ-ի գնումների տվյալների բազայում, որպես մատակարարներ ներառված Սյունիքի մարզի տեղական ձեռնարկությունների որոշակի ուսումնասիրություն: Ուսումնասիրության հիմնական նպատակն էր վերլուծել թիրախային ընկերությունների եկամտի դինամիկան 2022-2024թթ. ժամանակաշրջանի համար:

Ուսումնասիրվել է ընդհանուր առմամբ 55 ընկերություն, որոնցից 11-ում գրանցվել է հասույթի աճ: 2022-2023թթ. ընթացքում հասույթի միջին աճը կազմել է 35.5%, իսկ 2023-2024թթ. ընթացքում՝ 39.6%: Այսպիսով, ընկերությունների 20%-ը ցույց է տվել կայուն աճ, ինչը վկայում է տեղական գնումները խթանելու ԶՊՄԿ-ի ջանքերի դրական ազդեցության մասին: Ուսումնասիրված 55 ընկերություններից առաջատար 3-ը ցույց է տվել բացառիկ աճ՝ ընդամենը երկու տարվա ընթացքում ավելի քան կրկնապատկելով հասույթը:

Ամփոփելով, կարելի է ասել, որ չնայած ուսումնասիրությունը բացահայտել է հաջողությամբ զարգացող տեղական

ձեռնարկությունների օրինակներ՝ տեղական գնումների խթանման ԶՊՄԿ-ի ջանքերի շնորհիվ, այն նաև ի հայտ բերեց հետագա աճի և բարելավման զգալի ներուժը: Ձեռնարկվելիք հիմնական գործողությունները ներառում են՝

- > «Տեղական գնումների» ծրագրի ամրապնդում՝ ավելացնելով Սյունիքի մարզի մատակարարներից ձեռք բերվող ապրանքների մասնաբաժինը:
- > Լրացուցիչ վերլուծության իրականացում՝ ընկերությունների մնացած 80%-ի աճը սահմանափակող գործոնները բացահայտելու համար և աջակցության ռազմավարությունների մշակում:
- > Հաջողության հասած ձեռնարկությունների օրինակների ներկայացում, որոնք հանդես կգան որպես մոդելներ՝ տեղացի այլ արտադրողների համար:
- > Տեղացի մատակարարներից ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների տեսականին ընդլայնելու ուղիների որոնում: Տեղական գնումների բարելավմանն ուղղված շարունակական ջանքերը դրական ազդեցություն կունենան Սյունիքի մարզի ձեռնարկությունների գործունեության վրա, կստեղծվեն նոր աշխատատեղեր, կաճեն հարկային եկամուտները և կամրապնդվի տարածաշրջանի ընդհանուր տնտեսական զարգացումը:

2024թ-ին մեկնարկել է նաև Քաջարանում գործող տեղի գործարարից մածուն գնելու հաջողված նախաձեռնությունը: Սննդի անվտանգության և որակի չափանիշներին համապատասխանություն ապահովելու համար իրականացված մանրակրկիտ գնահատումից հետո ԶՊՄԿ-ն սկսել է մատակարարման համագործակցություն, որն աջակցում է տեղական ձեռնարկություններին՝ միաժամանակ իր աշխատողներին ապահովելով բարձրորակ և անվտանգ սննդամթերքով:

Տեղական գնումներին առնչվող մարտահրավերներ և ձեռքբերումներ

Թեև ԶՊՄԿ-ն ձգտում է ավելացնել տեղական գնումների ծավալը, ընդգրկելով Սյունիքի մարզի ավելի շատ համայնքներ, որոշակի խնդիրներ զգալի են առաջընթացը: Գնումների գործող սխեմաները և մատակարարների հետ հաստատված երկարատև հարաբերությունները ստեղծել են կառուցվածքային ինքնաշարժ, որը դժվարացնում է անցումը տեղական մատակարարումներին: Ավելին, Սյունիքի շատ կազմակերպություններ դժվարանում են

համապատասխանել Ընկերության չափանիշներին, ինչը սահմանափակում է որպես մատակարարներ ընտրվելու նրանց հնարավորությունները: Այդ հարցերի կարգավորումը մնում է Ընկերության առաջնահերթ խնդիրներից մեկը, քանի որ մենք շարունակում ենք ուսումնասիրել տեղական մատակարարման շղթաներն ամրապնդելու և մարզում մատակարարների կարողությունները զարգացնելու հնարավորությունները:

Կորպորատիվ կառավարում. ղեկավարության բարեվարքության պահպանում

- 40 — Կորպորատիվ կառավարման կառուցվածքը. արդյունավետ կառավարման և վերահսկողության ապահովում
- 45 — Ազդեցությունների կառավարման հաշվետվողականություն. ռազմավարական առաջնորդության խթանումը կայուն զարգացման ոլորտում
- 46 — Բարեվարքությունը որոշումների կայացման գործընթացում. կառավարման ամրապնդումը շահերի բախման կարգավորման միջոցով
- 47 — Վարձատրության ռազմավարություն. վարձատրության համապատասխանեցում ռազմավարական նպատակներին և գործունեության արդյունքներին
- 49 — Կոռուպցիայի դեմ պայքարի հանձնառություն. բարեվարքության ստանդարտների և համապատասխանության պահպանում
- 52 — Համապատասխանությունն օրենքներին և կանոնակարգերին. օրենսդրության պահանջների պահպանման և բարեվարքության սկզբունքների համաձայն կառավարման ապահովում
- 53 — Թվային փոխակերպման նախաձեռնություն. անցում աշխատանքային գործընթացների թվայնացմանը





Կորպորատիվ կառավարման համակարգի ամփոփ նկարագիր

GRI 3-3, 2-23, 2-24

ԶՊՄԿ-ն ձգտում է պահպանել կորպորատիվ կառավարման բարձր ստանդարտներ՝ առանձնակի ուշադրություն դարձնելով ազնվության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների վրա: Մենք շարունակաբար կատարելագործում ենք մեր կառավարման համակարգը՝ շահագրգիռ կողմերի վստահությունն ամրապնդելու և մեր երկարաժամկետ նպատակների իրագործմանը նպաստելու համար:

Մրցակցության կոմպլաենս ծրագիր

Թափանցիկություն և հաշվետվողականություն ապահովելու մեր հանձնառությանը համապատասխան՝ ԶՊՄԿ-ն մշակել է Մրցակցության կոմպլաենս ծրագիր, որը նախատեսվում է հաստատել 2025թ-ին: Այդ նախաձեռնության իրականացմանն աջակցելու և գործունեության ընթացքում օրենսդրության պահանջների հետ համապատասխանությունն ամրապնդելու նպատակով՝ ԶՊՄԿ-ն մտադիր է ստեղծել համապատասխանության նոր ծառայություն՝ Գլխավոր տնօրենի տեղակալի ղեկավարության ներքո: Այդ ծառայությունը կներառի երկու կարևոր ուղղություն՝ Ընդհանուր և Հակամրցակցային կոմպլաենս: Ընդհանուր կոմպլաենս ուղղության հիմնական պարտականությունները կներառեն գործընկերների մոնիտորինգը և ստուգումը, ինչպես նաև Ընկերության քաղաքականության համապատասխանության ապահովումը գործող օրենսդրությանը, կանոնակարգերին և միջազգային ստանդարտներին: Միաժամանակ, Հակամրցակցային կոմպլաենս համակարգողը կվերահսկի Մրցակցության կոմպլաենս ծրագրի իրականացումը, որը կարևոր դեր է խաղում հակամենաշնորհային սկզբունքները պահպանելու և արդար մրցութային գործընթաց ապահովելու գործում: Այդպիսով, գնումների թափանցիկ գործընթացը հնարավորություն է տալիս ստանալ ավելի որակյալ

Թափանցիկությունը և հաշվետվողականությունը համարվում են կորպորատիվ կառավարման առանցքային սկզբունքները, և հստակ, ճշգրիտ ու ժամանակին տրամադրվող տեղեկատվությունը կարևոր նախապայման է մեր շահագրգիռ կողմերի վստահությունը պահպանելու համար: Մենք հրապարակում ենք ֆինանսական հաշվետվություններ և կայուն զարգացման վերաբերյալ թարմացումներ, ապահովում ենք անմիջական ներգրավվածություն բաժնետերերի կանոնավոր ժողովների միջոցով և իրականացնում ենք ներքին հսկողություն և աուդիտ՝ մեր տվյալների ամբողջականությունն ապահովելու համար: Ընկերությունը պահպանում է ԱԺԹՆ-ի հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքները, ապահովում է կայուն զարգացման հաշվետվությունների համապատասխանությունը GRI և SASB չափանիշներին, TCFD-ի առաջարկություններ ին՝ միաժամանակ սկսելով ՖՀՄՍ S2 ստանդարտի հետ համապատասխանության ապահովման գործընթացը:

առաջարկներ, օգնում է ապահովել լավագույն գներ և ավելի լավ արդյունքներ՝ նվազագույն ռիսկերով:

Պատասխանատվությունը մեր գործունեության անբաժանելի մասն է, քանի որ մենք լիովին գիտակցում ենք մեր որոշումների ազդեցությունը շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ աշխատողների, մատակարարների, համայնքների և շրջակա միջավայրի վրա: ԶՊՄԿ-ի նպատակն է իր գործունեությունն իրականացնել գործարար բարեվարքության նորմերին համապատասխան, ապահովել արդար և անվտանգ աշխատանքային պայմաններ, նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունը, հնարավոր բացասական սոցիալական ազդեցությունը և, որտեղ հնարավոր է, առավելագույնի հասցնել դրական ազդեցությունը:

Իր 2023թ. հանձնառության համաձայն՝ 2024թ-ին ԶՊՄԿ-ն մշակել և հաստատել է մի շարք կարևոր քաղաքականություններ, որոնք պաշտոնապես ընդունվել են Տնօրենների խորհրդի կողմից 2024թ. նոյեմբերի 27-ին: Հաշվի առնելով, որ քաղաքականությունները ընդունվել են 2024թ-ի վերջին, ղեկավարության անդամների և աշխատողների համար դասընթացների իրականացումը նախատեսված է 2025թ-ին:

Հակակոռուպցիոն քաղաքականություն

Քաղաքականությունը մշակված է գործունեության բոլոր ոլորտներում կոռուպցիան և կաշառակերությունը կանխելու, թափանցիկության և բարեվարքության կանոններին համապատասխանող վարքագծի մշակույթը խթանելու համար:

1

Վարքագծի կանոնագիրք

Կանոնագիրքը սահմանում է բարեվարքության կանոնները և աշխատողների վարքագծի հետ կապված ակնկալիքները՝ ապահովելով գործունեության իրականացումը բարեվարքության չափանիշներին և գործող օրենքների պահանջներին համապատասխան:

4

Մարդու իրավունքների վերաբերյալ քաղաքականություն

Քաղաքականությունը ներկայացնում է Ընկերության հանձնառությունը հարգելու մարդու իրավունքները և խրախուսելու մարդու իրավունքների պաշտպանությունն իր գործունեության բոլոր ոլորտներում և գործարար հարաբերություններում:

7

Ազդարարման քաղաքականություն

Քաղաքականությունը հնարավորություն է տալիս աշխատողներին հայտնել Ընկերության ներսում անբարեվարք վարքագծի կամ անօրինական գործունեության մասին՝ առանց վախենալու հետևանքներից, ապահովելով խնդրի մասին հայտնած աշխատողների պաշտպանությունը և դրա մանրակրկիտ ուսումնասիրությունը:

10

Ընկերությունը մշակել է Գնումների քաղաքականություն, որի հաստատումը նախատեսված է 2025թ-ին, նպատակ ունենալով կարգավորել իր գործունեության համար կարևոր ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերումները: Քաղաքականությունը շեշտը դնում է այնպիսի հիմնական սկզբունքների վրա, ինչպիսիք են՝ գնի և որակի հարաբերակցությունը, տնտեսումը, արդյունավետությունը, արդարությունը, թափանցիկությունը և որակը: Այն նպատակ ունի բարձրացնել գնումների թափանցիկությունը, ապահովել

Կենսաբազմազանության քաղաքականություն

Քաղաքականությունը ներկայացնում է Ընկերության հանձնառությունը պաշտպանելու և բարելավելու կենսաբազմազանությունն իր գործունեության բոլոր տարածքներում: Այն կենտրոնանում է բնության պահպանության, էկոլոգիական հավասարակշռության ապահովման և տեղական էկոհամակարգերի վրա Ընկերության գործունեության բացասական ազդեցության բացառման ռազմավարությունների վրա:

2

Բնապահպանական քաղաքականություն

Քաղաքականությունը ներկայացնում է Ընկերության հանձնառությունն ապահովել շրջակա միջավայրի կայունությունը՝ ածխածնի հետքի կրճատման, թափոնների արդյունավետ կառավարման և բնական ռեսուրսների պահպանման միջոցով:

5

Տեղական զբաղվածության քաղաքականություն

Քաղաքականությունը խրախուսում է տեղական աշխատուժի ներգրավումը և աջակցում է տեղական մասնագետների զարգացմանը՝ նպաստելով համայնքների տնտեսական աճին:

8

Աշխատանքի անվտանգության և առողջության քաղաքականություն

Քաղաքականության նպատակն է պաշտպանել աշխատողներին՝ հայտնաբերելով հնարավոր վտանգները, ներդնելով անվտանգություն ապահովող համապատասխան միջոցներ և խթանելով անվտանգության մշակույթի ձևավորումը:

11

արդար մրցակցություն և կանխել կոռուպցիոն ռիսկերը՝ միաժամանակ ապահովելով միջոցների արդյունավետ օգտագործումը:

Այս քաղաքականությունները ներկայացնում են միջազգային լավագույն գործելակերպին համապատասխանելու, գործունեության բոլոր ոլորտներում բարեվարքության սկզբունքներին հետևելու, սոցիալական պատասխանատվությունը խթանելու և կայուն զարգացում ապահովելու Ընկերության հանձնառությունը:

Կլիմայի փոփոխության ոլորտի քաղաքականություն

Քաղաքականությունը սահմանում է կլիմայի փոփոխության հետևանքները մեղմելու և կենսաբազմազանությունը պահպանելու ռազմավարություններ՝ արտանետումների կրճատմանը և էկոհամակարգերի պաշտպանությանն ուղղված նպատակային միջոցառումների միջոցով:

3

Բողոքների դիտարկման քաղաքականություն

Քաղաքականությունը ներկայացնում է կառուցվածքային գործընթաց, որի միջոցով աշխատողները կարող են բարձրաձայնել իրենց մտահոգությունները կամ ներկայացնել բողոքներն աշխատանքի վերաբերյալ, և ապահովում է բարձրացված հարցերի արդար և ժամանակին լուծումը:

6

Սոցիալական քաղաքականություն

Քաղաքականությունը ներկայացնում է Ընկերության հանձնառությունը սոցիալական պատասխանատվության ոլորտում, որը ներառում է համայնքների ներգրավվածությունը, սոցիալական արդարությունը և բիզնես բարեվարքությունը:

9

Աշխատավայրում բռնության, ոտնձգությունների, խտրականության և հաշվհարդարի դեմ պայքարի քաղաքականություն

Քաղաքականությունը մշակված է անվտանգ և հարգալից աշխատանքային միջավայր ստեղծելու նպատակով՝ խստիվ արգելելով ոչ պատշաճ վարքագծի բոլոր ձևերը, և սահմանում է հստակ ընթացակարգեր այդպիսի միջադեպերի մասին հայտնելու և դրանք արդյունավետ կերպով լուծելու համար:

12

Կորպորատիվ կառավարման կառուցվածքը. արդյունավետ կառավարման և վերահսկողության ապահովում

GRI 2-9, 2-10

Բաժնետերերի ընդհանուր ժողով

Բաժնետերերի ընդհանուր ժողովը⁴ ԶՊՄԿ-ի կառավարման բարձրագույն մարմինն է: Ընկերությունը հրավիրում է Տարեկան ընդհանուր ժողով՝ տարին մեկ անգամ, ֆինանսական տարվա ավարտից հետո՝ փետրվարից 1-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում:

Տարեկան ընդհանուր ժողովից դուրս գումարվող բոլոր ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ընդհանուր ժողովը կարող է գումարվել Տնօրենների խորհրդի որոշմամբ կամ իր նախաձեռնությամբ, կամ Ընկերության գործադիր մարմնի, աուդիտորի կամ քվեարկության իրավունք ապահովող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսին տիրապետող բաժնետիրոջ(տերերի) պահանջով, եթե պահանջը ներկայացնելու պահին այդ բաժնետեր(եր)ն ունի(են) համապատասխան քանակի բաժնետոմսեր:

Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով կամ Ընկերության Կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:



Ընդհանուր ժողովի հանձնաժողովներ

Ընդհանուր ժողովն իրավասու է ձևավորել Վերստուգիչ հանձնաժողով⁵ և Հաշվիչ հանձնաժողով:

Ընդհանուր ժողովի կողմից ձևավորված Վերստուգիչ հանձնաժողովը պատասխանատու է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողության, կառավարման մարմինների որոշումների կատարման մոնիտորինգի, օրենքների, իրավական ակտերի և Կանոնադրության հետ Ընկերության փաստաթղթերի համապատասխանության ստուգման համար: Վերստուգիչ հանձնաժողովն իրականացնում է նաև Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգում և կարող է իրականացնել ստուգումներ իր նախաձեռնությամբ, Ընդհանուր ժողովի կամ Տնօրենների խորհրդի որոշմամբ կամ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսին տիրապետող բաժնետերերի պահանջով:

Թեև Ընկերության կանոնադրությունն Ընդհանուր ժողովին տալիս է Հաշվիչ հանձնաժողով ձևավորելու իրավասություն, հաշվետու տարվա համար այդպիսի հանձնաժողով չի ստեղծվել: Այնուամենայնիվ, ինչպես նշված է Ընկերության կանոնադրության 61-րդ կետում, Հաշվիչ հանձնաժողովի

Մտահոգիչ կարևորագույն խնդիրների հաղորդակցում

GRI 2-16

Մտահոգիչ կարևորագույն խնդիրները ներկայացվում են Բաժնետերերի ընդհանուր ժողովին տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների ընթացքում: Տարեկան ընդհանուր ժողովը ծառայում է որպես պաշտոնական հարթակ Ընկերության գործունեության արդյունքները և ռազմավարական ուղղությունը քննարկելու համար:

ԶՊՄԿ-ն նաև մշակել է կառուցվածքային գործընթացներ Ընկերությանը մտահոգիչ կարևորագույն խնդիրների մասին հաղորդակցելու համար, ինչպես սահմանված է Վարքագծի կանոնագրքում, Բողոքների դիտարկման քաղաքականությունում և Ազդարարման քաղաքականությունում: Աշխատողները և շահագրգիռ կողմերը կարող են նշյալ խնդիրների մասին հայտնել հաղորդակցման պաշտոնական ուղիներով՝ պահպանելով գաղտնիությունը և պաշտպանված լինելով հաշվհարդարից:

բացակայության դեպքում դրա գործառույթներն իրականացնում է Տնօրենների խորհրդի քարտուղարը (Կորպորատիվ քարտուղար): Այդ պարտականությունները վերջին երկու հաշվետու տարիների ընթացքում կատարել է Կորպորատիվ քարտուղարը:

Կանոնադրությամբ սահմանված Հաշվիչ հանձնաժողովի պարտականություններն են՝ ապահովել քվեարկության սահմանված կարգը և բաժնետերերի՝ քվեարկությանը մասնակցելու իրավունքը, իրականացնել ձայների հաշվարկ, ամփոփել քվեարկության արդյունքները, կազմել արձանագրություն և փոխանցել քվեաթերթիկներն Ընկերության արխիվ: Հաշվիչ հանձնաժողովի անդամ չեն կարող լինել Տնօրենների խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Գլխավոր տնօրենը կամ այդ պաշտոնների համար որպես թեկնածու առաջադրված անձինք:

Այս հանձնաժողովները կարևոր նշանակություն ունեն Ընկերության ներսում թափանցիկություն և հաշվետվողականություն ապահովելու համար:

⁴ Ընդհանուր ժողովի իրավասությունները ներկայացված են ԶՊՄԿ-ի Կանոնադրությունում:

⁵ 2023թ. Կայուն զարգացման հաշվետվությունում Վերստուգիչ հանձնաժողովն անվանվել էր «Աուդիտի կոմիտե»՝ Կանոնադրությունում թարգմանության սխալի պատճառով: 2024թ. հաշվետվությունում օգտագործվում է «Վերստուգիչ հանձնաժող» ճիշտ անվանումը:

1. ԶՊՄԿ-ի մասին
2. Տնտեսական ազդեցություն
3. Կորպորատիվ կառավարում
4. ԶՊՄԿ-ի աշխատողները
5. Բարեկեցության և կայունության ապահովում աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման մշակույթի ձևավորման միջոցով

6. Տեղական համայնքներ
7. Շրջակա միջավայրի պահպանություն և կայունություն
8. Կլիմայի փոփոխություն
9. Հավելվածներ

Համապատասխանության հանձնաժողովի⁶ անդամներն են՝

1

Կայուն զարգացման գծով տնօրենը (նախագահ)

2

Գործադիր տնօրենը

3

Գլխավոր տնօրենի առաջին տեղակալը

4

Գլխավոր տնօրենի տեղակալը վարչական գծով

5

Ֆինանսական տնօրենը

6

Իրավաբանական դեպարտամենտի ղեկավարը

Ի լրումն, յուրաքանչյուր շաբաթ անց են կացվում հանդիպումներ Գլխավոր տնօրենի և բոլոր ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությամբ, որոնց ընթացքում յուրաքանչյուրն ամփոփ ներկայացնում է նախորդ շաբաթվա գործունեությունը և առաջիկա անելիքներն ու պլանները: Այդ հանդիպումները հնարավորություն են տալիս ստորաբաժանումների

ղեկավարներին ներկայացնել կարևոր ընթացիկ խնդիրները և ստանալ դրանց վերաբերյալ Գլխավոր տնօրենի նկատառումները և առաջարկությունները: Անհրաժեշտության դեպքում ղեկավարության հետ կազմակերպվում են առանձին հանդիպումներ և կազմվում են գրավոր արձանագրություններ՝ հիմնական հարցերն ու նախագծերն ավելի մանրամասն քննարկելու համար:

Կատարողականի գնահատում

GRI 2-18

Ներկայումս սահմանված չէ Ընկերության կառավարման բարձրագույն մարմնի՝ Բաժնետերերի ընդհանուր ժողովի կատարողականի գնահատման գործընթացը: Այնուամենայնիվ, Բաժնետերերի ընդհանուր ժողովը պահպանում է Խորհրդի անդամների, Գլխավոր տնօրենի

կատարողականը գնահատելու և ԶՊՄԿ-ի կառավարման կառուցվածքի վերաբերյալ ռազմավարական որոշումներ կայացնելու իրավասությունը: Ընդհանուր ժողովը նաև իրավասու է նշանակել Խորհրդի անդամներին և դադարեցնել նրանց լիազորությունները:

Կառավարման բարձրագույն մարմնի դերը ազդեցությունների կառավարման վերահսկողության գործում

GRI 2-12

Ընկերության նպատակները, արժեքները և առաքելությունը սահմանված են Վարքագծի կանոնագրքում և համապատասխան քաղաքականություններում:

Տնօրենների խորհուրդը վերանայում և հաստատում է հիմնական կորպորատիվ ռազմավարությունները և քաղաքականությունները, ներառյալ՝ բոլորքների կառավարմանը, կորուպցիայի դեմ պայքարին,

շահագրգիռ կողմերի ներգրավվածությանը, համապատասխանության ապահովման մեխանիզմներին և կայուն զարգացման ռազմավարություններին վերաբերող քաղաքականությունները: Խորհուրդը և գործադիր ղեկավարությունը կանոնավոր հաշվետվությունների և թափանցիկ հաղորդակցության միջոցով ապահովում են Բաժնետերերի ընդհանուր ժողովի իրազեկումը՝ ուշադրություն պահանջող բոլոր հարցերին:

⁶ Համապատասխանության հանձնաժողովի մանրամասն կանոնակարգը նախատեսվում է մշակել 2025թ. ընթացքում:

Ստուգումների գործընթացների, հատկապես այն գործընթացների մշակումը, որոնք ուղղված են Ընկերության տնտեսական, բնապահպանական և սոցիալական ազդեցությունների բացահայտմանը և կառավարմանը, վերահսկվում է Տնօրենների խորհրդի կողմից՝ Բաժնետերերի ընդհանուր ժողովի աջակցությամբ:

Կառավարման գործընթացների՝ հատկապես կայուն զարգացմանը վերաբերող գործընթացների

Տնօրենների խորհուրդ

GRI 2-9, 2-10

Տնօրենների խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ռազմավարական կառավարումը: Տնօրենների խորհրդի անդամները ընտրվում են Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

Նշանակման և ընտրության գործընթացները ներկայացված են Ընկերության Կանոնադրությունում և Տնօրենների խորհրդի կանոնակարգում: Անդամներն ընտրվում են գումարային (կումուլյատիվ) քվեարկության սկզբունքով, երբ Տնօրենների խորհրդի կազմում ընտրված են համարվում ձայների առավելագույն քանակ ստացած թեկնածուները: Կառավարման հավասարակշռությունը պահպանելու նպատակով գործադիր մարմնի ներկայացուցիչները չեն կարող մեծամասնություն կազմել Տնօրենների խորհրդում: Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին տիրապետող բաժնետերերն իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել Տնօրենների խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցիչին: Յուրաքանչյուր բաժնետեր կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ Տնօրենների խորհրդում: Տնօրենների խորհրդի նախագահը ընտրվում է Խորհրդի անդամների կողմից՝ իրենց կազմից, ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Իր պարտականություններն արդյունավետ կատարելու համար Խորհուրդը իրավասու է ստեղծել մասնագիտացված հանձնաժողովներ, որոնց կազմում կարող են ընդգրկվել Խորհրդի անդամները, Ընկերության ղեկավարները, աշխատողները կամ արտաքին փորձագետները: Թեև այդ հանձնաժողովները ձևավորվում են խորհրդատվություն տրամադրելու նպատակով, դրանք նպաստում են հիմնավորված որոշումների կայացմանը և գործառնական վերահսկողությանը:

Կանոնադրության համաձայն՝ Տնօրենների խորհուրդը պետք է բաղկացած լինի հինգից ինը անդամից: Ներկայումս այն բաղկացած է յոթ անդամից՝ հիմնականում ոչ գործադիր ղեկավարության կազմից⁷: Խորհուրդը հարուստ հավաքական փորձ ունի գործունեության հիմնական ոլորտներում, այդ թվում՝

արդյունավետության ուսումնասիրության համար պատասխանատու է Գլխավոր տնօրենը: Տարբեր հանդիպումների և նախաձեռնությունների միջոցով Գլխավոր տնօրենը գնահատում է կորպորատիվ ռազմավարությունների և քաղաքականությունների իրականացումը և ազդեցությունը՝ խթանելով կառավարման գործելակերպի և կայուն զարգացման ցուցանիշների շարունակական բարելավումը:

հանքարդյունաբերության, ֆինանսական կառավարման և իրավական ոլորտներում: Տնօրենների խորհրդի անդամները նշանակվում են անորոշ ժամկետով և պաշտոնավարում են մինչև Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից վերընտրվելը կամ փոխարինվելը:

Ներկայումս Տնօրենների խորհրդի անդամներից միայն մեկն է կին: Տնօրենների խորհրդում ընդգրկված չեն շահագրգիռ կողմերի պաշտոնական ներկայացուցիչները, որոնք ներառված չեն բաժնետերերի կազմում: Թեև մենք դեռևս չունենք Տնօրենների խորհրդի մակարդակում փորձառություն կայուն զարգացման ոլորտում, կայուն զարգացման կարևորությունն ընդգծվում է Ընկերության Գլխավոր տնօրենի անմիջական վերահսկողության, ինչպես նաև Տնօրենների խորհրդի և Կայուն զարգացման գծով տնօրենի ակտիվ մասնակցության միջոցով:

Տնօրենների խորհրդի նիստերն անց են կացվում ճկուն ձևաչափով, որն ապահովում է անդամների համատեղ մասնակցությունը տարբեր միջոցներով, այդ թվում՝ հեռախոսակապի, հեռահաղորդակցման կամ անմիջական հաղորդակցության այլ միջոցներով, ինչպես նաև հեռակա քվեարկությամբ, եթե Ընկերության Կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ: Այս ճկուն ձևաչափը հատկապես արդյունավետ էր 2023թ-ին, որի ընթացքում տեղի էին ունեցել Տնօրենների խորհրդի երկու նիստեր: Նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս, քան վեց ամիսը մեկ անգամ:

Թեև Տնօրենների խորհրդի նիստերը որպես կանոն գումարվում են նախագահի նախաձեռնությամբ, դրանք կարող են գումարվել նաև Տնօրենների խորհրդի որևէ անդամի, Վերստուգիչ հանձնաժողովի, գործադիր մարմնի, աուդիտորի կամ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսին տիրապետող բաժնետերերի պահանջով: Այս ներառական մոտեցումը թույլ է տալիս ապահովել բոլոր հիմնական շահագրգիռ կողմերի մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին:

⁷ Տնօրենների խորհրդի երկու անդամներ զբաղեցնում են գործադիր ղեկավարի պաշտոններ ԶՊՄԿ-ում:

Տնօրենների խորհրդի նախագահ

GRI 2-11

Տնօրենների խորհրդի նախագահն առանձնացված է գործադիր մարմնից, ինչն ապահովում է կառավարման այնպիսի կառուցվածք, որի շրջանակում հստակ առանձնացված են ռազմավարական վերահսկողության և կառավարման գործառույթները:

Նախագահը նախագահում է Տնօրենների խորհրդի նիստերը: Նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները Խորհրդի որոշմամբ կատարում է Խորհրդի անդամներից մեկը:

Գործադիր ղեկավարություն . Գլխավոր տնօրեն

ԶՊՄԿ-ի Գլխավոր տնօրենը, որպես միանձնյա գործադիր մարմին, պատասխանատու է Ընկերության ամենօրյա

գործունեության կառավարման համար և ընտրվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

Ազդեցությունների կառավարման հաշվետվողականություն . ռազմավարական առաջնորդության խթանումը կայուն զարգացման ոլորտում

GRI 2-12, 2-13

Մենք նպատակ ունենք ներառել ազդեցությունների կառավարումն Ընկերության ղեկավարության կառուցվածքում՝ հաշվետվողականությանը և ռազմավարական նպատակներին համապատասխանությունն ապահովելու համար:



Ազդեցությունների կառավարման վերահսկողության համար պատասխանատու են Գլխավոր տնօրենը և Տնօրենների խորհուրդը, ինչը արտացոլում է տնտեսական, բնապահպանական և սոցիալական ազդեցությունների հետ կապված հարցերը լուծելու բարձրաստիճան ղեկավարության հանձնառությունը: Կառավարման այդ կառուցվածքի շրջանակում Կայուն զարգացման գծով տնօրենը պատասխանատու է կայուն զարգացման բոլոր ոլորտների կառավարման համար: Ներկայումս որևէ այլ աշխատակից լիազորված չէ կատարելու ազդեցությունների կառավարման հատուկ գործառույթ, ինչը վկայում է կարևոր հարցերի վերաբերյալ որոշումների կայացման կենտրոնացված գործընթացի մասին:

Գլխավոր տնօրենն առանցքային դեր է խաղում այս ռազմավարության իրականացման գործում՝ տալով պարտադիր հրամաններ և հրահանգներ բոլոր աշխատակիցներին: Վերջիններս ապահովում են Ընկերությունում միասնական քաղաքականության իրականացումը բոլոր ստորաբաժանումներում, ինչպես նաև հետևողական մոտեցման կիրառումը կայուն զարգացման և ազդեցության առնչվող հարցերի նկատմամբ:

GRI 2-14

ԶՊՄԿ-ի բարձրաստիճան ղեկավարությունն ուսումնասիրում և հաստատում է Կայուն զարգացման հաշվետվությունը: Թեև Տնօրենների խորհուրդը և Բաժնետերերի ընդհանուր ժողովն ուղղակիորեն չեն վերահսկում Կայուն զարգացման հաշվետվությունը, նրանք պարբերաբար տեղեկացվում են բնապահպանական, սոցիալական և կառավարման սկզբունքներին առնչվող հարցերի մասին՝ կորպորատիվ նպատակների հետ համապատասխանությունն ապահովելու համար:

Բարեվարքությունը որոշումների կայացման գործընթացում. կառավարման ամրապնդումը շահերի բախման կարգավորման միջոցով

GRI 2-15

Էթիկայի սկզբունքների վրա հիմնված կառավարումը և պատասխանատու որոշումների կայացումն ապահովում են շահերի բախման կառավարման սկզբունքների հստակ սահմանումը և պահպանումը ողջ Ընկերությունում: Շահերի բախման առանձին քաղաքականություն ընդունելու փոխարեն, Ընկերությունը համապատասխան դրույթներ է ներառել Վարքագծի կանոնագրքում: Այդ մոտեցումն արտացոլում է Ընկերության հանձնառությունը՝ բարեվարքության և թափանցիկության սկզբունքներն իր ամենօրյա աշխատանքային գործընթացներում ներդնելու մասով:

ԶՊՄԿ-ի Վարքագծի կանոնագիրքը ներկայացնում է բոլոր աշխատողներից, այդ թվում՝ բարձրաստիճան ղեկավարներից և Տնօրենների խորհրդի անդամներից ակնկալվող վարքագծի չափանիշները, այն է՝ գործել ելնելով Ընկերության լավագույն շահերից և խուսափել անձնական շահերից, ինչը կարող է ազդել վերջիններիս

կողմից կայացվող որոշումների վրա: Վարքագծի կանոնագիրքը սահմանում է նաև «շահերի բախում» հասկացությունը և տրամադրում է ուղեցույցներ այն հայտնաբերելու, բացահայտելու և դրան արձագանքելու համար:

Շահերի բախման և փոխկապակցված կողմերի հետ գործարքների մասին տեղեկատվությունը չի բացահայտվում արտաքին կողմերին, քանի որ Ընկերության ներկայիս գործելակերպը նախատեսում է այդ հարցերի ներքին կարգավորումը: Տեղեկատվությունը բացահայտվում է արտաքին կողմերին միայն այն դեպքում, երբ դա պահանջվում է համապատասխան օրենսդրությամբ: ԶՊՄԿ-ն ապահովում է թափանցիկություն շահերի բախման հարցերում իր կառավարման հայեցակարգի միջոցով: Վարքագծի կանոնագիրքը պահանջում է ներքին հաշվետվությունների ներկայացում և շահերի բախման դեպքերի պրոակտիվ կարգավորում:

Հակակոռուպցիոն քաղաքականությամբ (որի մասին լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է այս հաշվետվության 49 էջում) արգելվում են կաշառքը, հետվճարը, դյուրացման վճարը, «ծառայությունը»՝ ծառայության դիմաց» համաձայնությունները, կլիենտիզմը, նեպոտիզմը, ֆավորիտիզմը, «պտտվող դռները» սկզբունքը և չափազանց բարձրարժեք կամ անպատշաճ նվերներն ու հյուրընկալությունը՝ դրանով իսկ խթանելով բարեվարքության սկզբունքների հետևողական կիրառումը:

Վարձատրության ռազմավարություն. վարձատրության համապատասխանեցում ռազմավարական նպատակներին և գործունեության արդյունքներին

GRI 2-19, 2-20

Ընկերության շարունակական աճին և զարգացմանը զուգահեռ՝ կորպորատիվ կառավարման ամրապնդումը և արդար ու կատարողականի վրա հիմնված վարձատրության ապահովումը դարձել են առաջնահերթ խնդիրներ: Ընկերությունը նշանակալի առաջընթաց է արձանագրել այս ուղղությամբ 2024թ-ին:

Թեև 2024 հաշվետու տարում Վարձատրության քաղաքականությունը պաշտոնապես չի ընդունվել և համապատասխան Վարձատրության հանձնաժողովը չի ձևավորվել, Ընկերության ֆինանսական տնօրինությունը, հաշվի առնելով գործադիր ղեկավարների վարձատրության նկատմամբ կառուցվածքային մոտեցում կիրառելու անհրաժեշտությունը, նախաձեռնել է գործադիր պաշտոնների համար Մոտիվացիոն քաղաքականության մշակման գործընթացը:

Նոր քաղաքականությունը, որի ընդունումը նախատեսվում է մինչև 2026թ., կսահմանի թափանցիկ, կատարողականի հիմնական ցուցանիշների (ԿՀՑ) վրա հիմնված համակարգ: Գործադիր ղեկավարների վարձատրությունը կապակցված կլինի ոչ միայն ֆինանսական և գործառնական գործունեության արդյունքների, այլ նաև բնապահպանական, սոցիալական և կառավարման ցուցանիշների հետ: Անհատական կատարողականի գնահատման գործընթացում բնապահպանական, սոցիալական և կառավարման սկզբունքների վրա հիմնված ԿՀՑ-ներ ներդնելով՝ ԶՊՄԿ-ն նպատակ ունի ղեկավարության վարձատրությունը համապատասխանեցնել Ընկերության ռազմավարական նպատակներին՝ խթանելով հաշվետվողականությունը, կայուն զարգացումը և երկարաժամկետ արժեքների ստեղծումը:



Գործադիր ղեկավարների համար հաստատված Մոտիվացիոն քաղաքականության շրջանակում ԶՊՄԿ-ն սահմանել է բնապահպանական, սոցիալական և կառավարման սկզբունքներին վերաբերող ԿՀՑ-ներ, որոնք պետք է վերահսկվեն և պաշտոնապես կապակցվեն գործադիր ղեկավարների՝ կատարողականի վրա հիմնված տարեկան պարզևավճարների հետ: **Բնապահպանական, սոցիալական և կառավարման սկզբունքներին վերաբերող ԿՀՑ-ները ներառում են՝**

ԲՍԿ վարկանիշի բարելավում

Երրորդ կողմի միջոցով իրականացվող ԲՍԿ սկզբունքների գնահատումներում գրանցված առաջընթացը ծառայում է որպես ուղենիշ ռազմավարական տեսանկյունից կայուն զարգացման համակարգման համար:

Գրանցվող վնասվածքների ընդհանուր հաճախականություն (TRIFR)

աշխատանքի անվտանգության այս ցուցանիշը կատարողականի հիմնական ցուցանիշ է, որն արտացոլում է աշխատողների աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման ԶՊՄԿ-ի հանձնառությունը:

Բնապահպանական նորմերի պահպանում և արդյունավետություն

օրենսդրության պահանջների հետ համապատասխանության և շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցման ցուցանիշներին նույնպես Ընկերությունը հետևում է:

Սոցիալական և համայնքների ներգրավվածություն

կատարողականի գնահատումը ներառում է ներդրումը տեղական համայնքների զարգացման գործում, շահագրգիռ կողմերի պահանջներին և կարիքներին արձագանքելու, բողոքները դիտարկելու կարողությունը և սոցիալական ներդրումային ծրագրերի իրականացումը:

Այս ցուցանիշները կազմում են կառավարման և խրախուսման համակարգերում կայուն զարգացման ինտեգրմանն ուղղված ԶՊՄԿ-ի նախաձեռնությունների մի մասը՝ ապահովելով, որ գործադիր ղեկավարների կատարողականն արտացոլի ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական պարտավորությունները:

Բաժնետերերի տեսակետները հաշվի են առնվում վարձատրության վերաբերյալ որոշումներ կայացնելիս՝ Խորհրդում ուղղակի ներկայացվածության և քվեարկության գործընթացին մասնակցության միջոցով: Բաժնետերերի ընդհանուր ժողովը պատասխանատու է և՛ Տնօրենների խորհրդի, և՛ Գլխավոր տնօրենի վարձատրությունը սահմանելու համար:

Կոռուպցիայի դեմ պայքարի հանձնառություն . բարեվարքության ստանդարտների և համապատասխանության պահպանում

GRI 3-3, 205-1, 205-2, SASB EM-MM-510a.1

ԶՊՄԿ-ն պահպանում է բարեվարքության բարձր ստանդարտներ, ինչի մասին վկայում է կոռուպցիայի նկատմամբ զրոյական հանդուրժողականությունը քաղաքականությունը:

Հակակոռուպցիոն քաղաքականության համաձայն՝ կոռուպցիան հակասում է Ընկերության հիմնական արժեքներին, որոնք ներառում են պրոֆեսիոնալիզմը, արդարությունը, կայունությունը և իրավական և բարեվարքության կիրառելի ամենաբարձր չափանիշների պահպանումը ևսահմանված են ԶՊՄԿ-ի Վարքագծի կանոնագրերում: Ավելին, կոռուպցիայի մասին նույնիսկ ամենաչնչին կասկածը կարող է բացասաբար անդրադառնալ Ընկերության մասին հասարակության կարծիքի և Ընկերության հեղինակության վրա:

Հակակոռուպցիոն համապատասխան կանոնակարգը ներկայումս գտնվում է մշակման և հաստատման վերջնական փուլում և հետագայում կսահմանի համապատասխան դերերն ու պարտականությունները: Հակակոռուպցիոն քաղաքականությունը հասանելի է ԶՊՄԿ-ի կայքում և ներկայացվել է աշխատողներին: Ինչպես արդեն նշվել է, վերապատրաստման համապատասխան դասընթացի իրականացումը նախատեսված է հաջորդ հաշվետու տարի:

Համապատասխան քաղաքականությունների մշակումն արտացոլում է Ընկերության ակտիվ դիրքորոշումը բարեվարքության սկզբունքների պահպանման և տեղական ու միջազգային հակակոռուպցիոն ստանդարտների հետ համապատասխանության ապահովման հարցում:

Աշխատողները և գործընկերները (մատակարարները, կապալառուները և ենթակապալառուները) պետք է

պահպանեն ԶՊՄԿ-ի բարեվարքության և հակակոռուպցիոն սկզբունքները՝ ապահովելով թափանցիկություն և բարեվարքություն ողջ արժեշղթայում: Ընկերությունը խրախուսում է վերջիններիս կողմից կոռուպցիայի ցանկացած դրսևորման հետ կապված մտահոգիչ խնդիրների մասին հաղորդումը:

Սույն Հակակոռուպցիոն քաղաքականության շրջանակներում Ընկերությունը պլանավորում է 2025 թ-ին ընդունել Հակակոռուպցիոն կանոնակարգ, որում կսահմանվի կոռուպցիայի (ներառյալ վերջինիս այնպիսի տեսակների, ինչպիսիք են՝ կաշառքը, հետվճարը («ատկաստ»), դյուրացման վճարը, «ծառայությունը» ծառայության դիմաց» համաձայնությունները, կլիենտիզմը, նեպոտիզմը, ֆավորիտիզմը, «պտտվող դռների» սկզբունքը և չափազանց բարձրարժեք կամ անպատշաճ նվերներն ու հյուրընկալությունը) արգելքը: Կանոնակարգը միաժամանակ սահմանում է դրանից բխող պարտականությունները, ինչպես նաև սահմանափակումները՝ նվերների և հյուրասիրությունների մասով:

ԶՊՄԿ-ն ակտիվորեն աջակցում է ԱՃԹՆ⁸ իրականացմանը Հայաստանի Հանրապետությունում և ապահովում է համապատասխանությունը կոռուպցիայի դեմ պայքարին և ֆինանսական գործարքների թափանցիկությանը վերաբերող օրենքների և կանոնակարգերի պահանջներին: Մենք թափանցիկ կերպով ներկայացնում ենք մեր գործունեության արդյունքները ԱՃԹՆ-ին, ինչն արտացոլված է մեր տարեկան հաշվետվություններում և հիմնված է ԱՃԹՆ ստանդարտների վրա:

⁸ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԹՆ) բնական ռեսուրսների բաց և հաշվետու կառավարումը խթանող համաշխարհային ստանդարտ է:

Ազդարարում

GRI 2-26

ԶՊՄԿ-ն մշակել է Ազդարարման քաղաքականություն, որը հնարավորություն է տալիս աշխատողներին և շահագրգիռ կողմերին անանուն կերպով հայտնել իրենց մտահոգությունները: ԶՊՄԿ-ի Վարքագծի կանոնագրքի համաձայն՝ բարձրաձայնված մտահոգություններն ուսումնասիրելու և դրանց արձագանքելու համար պատասխանատու է Կայուն զարգացման գծով տնօրենի նախագահությամբ գործող Համապատասխանության հանձնաժողովը:

Ընկերության Ազդարարման քաղաքականությունը նախատեսված է անօրինական, խարդախ կամ կոռուպցիոն գործունեության, բարեկարքության կանոններին չհամապատասխանող վարքագծի կամ ԶՊՄԿ-ի Վարքագծի կանոնակարգի, քաղաքականությունների կամ ստանդարտների կոպիտ խախտումների մասին հաղորդումները կարգավորելու և կառավարելու համար: Քաղաքականության շրջանակում կարելի է նաև հայտնել անձանց, շրջակա միջավայրին, Ընկերությանը կամ վերջինիս հեղինակությանը վնաս պատճառող վարքագծի մասին: Քաղաքականությունն ապահովում է Ընկերության գործունեության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը, կիրառելի միջազգային օրենքներին և դրանցով սահմանված ստանդարտներին: Այն խրախուսում է աշխատողներին բարձրաձայնել իրենց մտահոգություններն այնպիսի վարքագծի կամ գործելակերպի մասին, որը կարող է սպառնալիք ներկայացնել ԶՊՄԿ-ի աշխատողների, այլ շահագրգիռ կողմերի կամ հասարակության համար:

Այս նպատակին հասնելու համար ԶՊՄԿ-ի ներդրվել են մտահոգությունների մասին հաղորդելու հասանելի, ապահով և գաղտնիություն ապահովող համակարգեր՝ Ազդարարման ընթացակարգի նախագծի համաձայն: Մենք պարտավորվում ենք պահպանել ազդարարողի ինքնության գաղտնիությունը, բացահայտելով այն միայն վերջինիս կողմից նախապես տրված գրավոր համաձայնության դեպքում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի կամ իրավապահ մարմիններին ներգրավելու անհրաժեշտության պարագայում: Հաղորդումներին վերաբերող բոլոր նյութերը պահվում են ապահով պայմաններում և հասանելի են միայն դրանց քննությանը ներգրավված անձանց:

ԶՊՄԿ-ն ձեռնարկում է միջոցներ պաշտպանելու ազդարարման հետևանքով առաջացող անբարենպաստ հետևանքներից կամ գործողություններից, որոնցից են օրինակ՝ աշխատանքից ազատումը, պաշտոնի իջեցումը, խտրականությունը, ոտնձգությունը կամ որևէ այլ տեսակի հետապնդումը, եթե ազդարարողը գործել է բարեխղճորեն: Այդ պաշտպանությունն ապահովվում է անկախ քննության արդյունքներից: 2025թ-ին Ընկերությունը պլանավորում է կազմակերպել դասընթաց իր բոլոր աշխատողների համար՝ նրանց Ազդարարման քաղաքականությանը և ընթացակարգին ծանոթացնելու և իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացնելու համար:

Բացի այդ, ԶՊՄԿ-ն անհրաժեշտ ռեսուրսներ է հատկացրել քաղաքականությունն արդյունավետ կերպով իրականացնելու համար և կատարում է կանոնավոր ուսումնասիրություններ ու ստուգումներ վերջինիս արդյունքները գնահատելու և բարելավում պահանջող ոլորտները հայտնաբերելու նպատակով:

Բողոքների դիտարկման ընթացակարգ

GRI 2-25

2024թ-ի աշնանից Ընկերությունը մշակում է Բողոքների դիտարկման ընթացակարգը՝ որպես սոցիալական, բնապահպանական և կառավարման սկզբունքներին վերաբերող մտահոգություններին արձագանքելու հիմնական մեխանիզմ: 2024թ-ին ԶՊՄԿ-ն էլ ավելի ամրապնդեց իր հաշվետվողականության համակարգը՝ ընդունելով Բողոքների դիտարկման պաշտոնական քաղաքականությունը: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը մշակել է նաև Բողոքների դիտարկման և Ազդարարման ընթացակարգերը պատասխանատու գործարար վարքագծի հետ կապված մտահոգությունները հայտնելու մասով աշխատողներին աջակցելու համար՝ ապահովելով այդ հարցերի համակարգված, գաղտնի և թափանցիկ կերպով դիտարկումը: Նշյալ ընթացակարգերը կապահովեն անվտանգ և գաղտնի հարթակ, որի միջոցով Ընկերության աշխատողները, շահագրգիռ կողմերը և արտաքին կողմերը կարող են խորհրդատվություն ստանալ բարեկարքության կանոններին համապատասխանող վարքագծի վերաբերյալ Ընկերության քաղաքականությունների և գործելակերպի կիրառման հետ կապված:

Հողային ռեսուրսներին հասցված վնասին վերաբերող բողոքների դիտարկման հատուկ ընթացակարգ է մշակվել՝ նպատակաուղղված հողին և անշարժ գույքին առնչվող հատուկ ուշադրություն պահանջող հարցերին արձագանքելուն, և որը, սակայն, հաշվետու տարվա ընթացքում պաշտոնապես չի հաստատվել: Ընթացակարգը ներառում է հասցված վնասի գնահատում և համապատասխան լուծման ապահովում, ինչպես նաև պատշաճ և հաշվետու որոշումների իրականացման ապահովում: Առաջարկվող հաղորդակցման ուղիների միջոցով շահագրգիռ կողմերը կարող են հայտնել մտահոգություններ՝ ոչ պատշաճ վարքագծի կամ Ընկերության բիզնես ստանդարտների խախտումների վերաբերյալ, ապահովելով հարցերի ժամանակին և արդյունավետ կարգավորումը:

Սույն ընթացակարգերի կիրառումը թույլ կտա Ընկերությանը ձևավորել թափանցիկ և հաշվետու աշխատանքային միջավայր, խրախուսել պատասխանատու գործարար գործելակերպ և կանխել բարեկարքության կանոններին չհամապատասխանող վարքագծի դրսևորումները: Ընթացակարգերի հաստատումը Գլխավոր տնօրենի կողմից նախատեսվում է 2025թ-ին:

Ընկերությունում ներկայումս գործում են մի շարք ընթացակարգեր, որոնք աշխատողներին, համայնքների անդամներին և այլ շահագրգիռ կողմերին տրամադրում են հաղորդակցման միջոցներ իրենց մտահոգությունները բարձրաձայնելու և խնդիրների մասին հայտնելու համար: Այդ միջոցներից են սոցհարթակներում Ընկերության պաշտոնական էջերը, 2025թ-ին գործարկված աշխատողների բողոքների թեժ գիծը և էլեկտրոնային հասցեն, համայնքի անդամների կողմից պաշտոնական (գրավոր) բողոքներ ներկայացնելու համար, ինչպես նաև բողոքների արկղերը, որոնք օգտագործվում են 2023թ-ից բողոքների դիտարկման ընդլայնված ընթացակարգի շրջանակում:

Բողոքների քննություն և մոնիտորինգ

Բողոքների քննությունը և մոնիտորինգն իրականացվում է հատուկ թիմի կողմից: Ընկերությունը գնահատում է քննության արդյունքները պարբերաբար անցկացվող հանդիպումների և շարունակական վերահսկողության միջոցով՝ հնարավոր հետևանքները հայտնաբերելու և կարգավորման համապատասխան միջոցառումներ մշակելու համար: Երրորդ կողմի անկախ գնահատողին հանձնարարվել է գնահատել հողին կամ գույքին հասցված վնասը՝ Ընկերությանը աջակցելով պատշաճ կերպով կարգավորել հողային/գույքային վնասին վերաբերող բողոքները:

Բողոքները ներկայացվում են ոչ միայն պաշտոնական ընթացակարգերի, այլև տարբեր հանդիպումների, զրույթունների ներկայացման և սոցիալական ցանցերի միջոցով՝ բացահայտելով գործող ընթացակարգերի բարելավում պահանջվող ոլորտները: Բոլոր մտահոգությունները, անկախ հաղորդակցման միջոցից, ներկայացվում են էլեկտրոնային եղանակով և ուսումնասիրվում են համապատասխան թիմերի կողմից: Այդ մտահոգությունները դիտարկվում են ընթացակարգի մշակման ընթացքում՝ շարունակական մոնիտորինգի և տարբեր ստորաբաժանումների ու համայնքների հետ սերտ համագործակցության միջոցով՝ նպատակ ունենալով բարելավել գործընթացը: Հաստատումից հետո Բողոքների դիտարկման ընթացակարգը կհրապարակվի, ինչպես տեղի է ունեցել Ընկերության մյուս քաղաքականությունների պարագայում՝ ապահովելով թափանցիկություն և հնարավորություն տալով բոլոր շահագրգիռ կողմերին ներկայացնել իրենց կարծիքը:

Բողոքների դիտարկման գործող ընթացակարգի արդյունավետությունը գնահատվում է շահագրգիռ կողմերի մասնակցությամբ և ազդեցության պարբերական գնահատումների միջոցով, որոնց հիման վրա Ընկերությունը կատարում է բարելավումներ՝ արձագանքման օպերատիվությունը և հասանելիությունը բարելավելու համար:

Բողոքները համակարգված կերպով փաստաթղթավորվում, վերահսկվում և ներկայացվում են Ընկերության սոցիալական գործունեության կիսամյակային թարմացումներում: 2024թ-ին ընդհանուր առմամբ ներկայացվել էր 43 բողոք, որոնց 84%-ը (36 դեպք) վերաբերում էր հողին կամ գույքին հասցված վնասին, մնացածը 16 դեպքը՝ առողջության ապահովագրությանը: Բողոքների արդար լուծում ապահովելու նպատակով մշակվել է փոխհատուցման մատրիցա՝ յուրաքանչյուր դեպքի համար վնասի չափը գնահատելու և համապատասխան փոխհատուցում առաջարկելու համար:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում շահագրգիռ կողմերին կամ գործընկերներին վերաբերող տվյալների գաղտնիության պահպանման կամ այդ տվյալների կորստի վերաբերյալ որևէ բողոք չի գրանցվել: Բոլոր բողոքները ստացվել են համայնքների շահագրգիռ կողմերից:



Համապատասխանությունն օրենքներին և կանոնակարգերին. օրենսդրության պահանջների պահպանման և բարելավարարության սկզբունքների համաձայն կառավարման ապահովում

GRI 2-27, 206-1, 205-3

ԶՊՄԿ-ն հանձնառու է պահպանել արդար մրցակցության սկզբունքները և խստորեն հետևում է կիրառելի հակամենաշնորհային և մրցակցության պաշտպանության մասին օրենքներին, ինչպես նշված է Վարքագծի կանոնագրքում: Ընկերությունում արգելվում է ցանկացած տեսակի հակամրցակցային վարքագիծ, ներառյալ գների շուրջ պայմանավորվածությունը, շուկայի մանիպուլյացիան և մենաշնորհային գործունեությունը:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում՝

1

2ի գրանցվել ԶՊՄԿ-ի դեմ հարուցված որևէ ընթացիկ կամ ավարտված դատական վարույթ հակամրցակցային վարքագծի, անբարեխիղճ մրցակցության, մենաշնորհային գործունեության կամ մրցակցության պաշտպանության մասին օրենքների խախտումների հետ կապված:

2

2են գրանցվել կոռուպցիայի հաստատված դեպքեր, և Ընկերությունը չի հայտնել կոռուպցիայի որևէ դեպքի մասին ՀՀ իրավապահ մարմիններին:

3

Գրանցվել են քիչ թվով վարչական տուգանքներ: 2024թ-ին գործող օրենքների և քաղաքականությունների խախտումների համար կիրառված բոլոր վարչական տուգանքների մանրամասները ներկայացված են Հավելված 3-ում:

Թվային փոխակերպման նախաձեռնություն. անցում աշխատանքային գործընթացների թվայնացմանը

GRI 3-3



Թվային փոխակերպման նախաձեռնությունն առանցքային դեր ունի Ընկերության գործունեության արդիականացման գործում՝ ապահովելով շարունակական մրցունակություն և կայունություն արագ զարգացող, տեխնոլոգիաների վրա հիմնված ոլորտում: Հանքարդյունաբերության ոլորտում թվային լուծումները հնարավորություն են տալիս ապահովել անվտանգություն, արդյունավետություն, օգնում են կառավարել ծախսերը՝ խրախուսելով նորարարական և կայունություն ապահովող գործելակերպը:

2023թ-ին ԶՊՄԿ-ն ներդրել է համապարփակ թվային ռազմավարություն՝ վերջինս անվանակոչելով հայ մաթեմատիկոս Սերգեյ Մերգելյանի պատվին, ինչն արտացոլում է Ընկերության մշակութային արմատները և առաջընթացին գերակայություն տալը:

Գործընթացը սկսվեց գործառնական կարիքների վերլուծությամբ և Ընկերության թվային տեսանկյունից հասունության համեմատական գնահատմամբ, որը թույլ տվեց մշակել փոխակերպման փուլային պլանը: Ի սկզբանե Ընկերությունը գործել է ավտոմատացման բազային և ֆրագմենտային թվային գործիքների կիրառմամբ: Ընկերության գործունեության շրջանակներում որոշ հիմնական գործընթացներ կախված են եղել Excel-ի

կիրառումից, և տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքից, որը արդիականացվել է՝ ավելի հուսալի և մասշտաբային դառնալու նպատկով:

Նոր մոտեցման շրջանակում ինտեգրվում են տվյալների վերլուծությունը, ավտոմատացումը և մոնիտորինգն իրական ժամանակում՝ որոշումների կայացման գործընթացը և սարքավորումների հուսալիությունը բարելավելու և շրջակա միջավայրի կայուն զարգացմանը նպաստելու համար: Այն նաև բարձրացնում է անվտանգությունը ռիսկերի վաղ հայտնաբերման և աշխատողների վրա ազդեցության մոնիտորինգի միջոցով՝ միաժամանակ խթանելով արդյունավետ համագործակցությունը և տվյալների փոխանակումը ստորաբաժանումների միջև:

Բացի տեխնոլոգիաների ներդրումից, նախաձեռնությունը խթանում է նորարարության, ճկունության և շարունակական կատարելագործման մշակույթը: Այն համահունչ է ԶՊՄԿ-ի գործառնական գերազանցության, շրջակա միջավայրի պահպանության և շահագրգիռ կողմերի համար արժեք ստեղծելու նպատակներին:

Այդ նպատակներն իրագործելու համար Ընկերությունն իր թվային փոխակերպումը կազմակերպել է հինգ հիմնական ծրագրերի միջոցով՝ նախագծերի համապարփակ պորտֆելի շրջանակում:

Ավտոմատացման գործընթացների կառավարման ծրագիր

Ավտոմատացման գործընթացների կառավարման ծրագիրը կենտրոնացած է արտադրական օբյեկտներում թվային համակարգերի արդիականացման և ընդլայնման վրա: Ծրագրի հիմնական նպատակներն են կենտրոնացնել սարքավորումների կառավարումը, օպտիմալացնել տվյալների հավաքագրման գործընթացը, բարելավել արտադրանքի որակը և բարձրացնել սարքավորումների հուսալիությունը: Ավտոմատացված մոնիտորինգի և կառավարման գործառնություններն ամրապնդելով՝ ծրագիրը նպաստում է արտադրության արդյունավետության բարձրացմանը, նվազեցնում է պարապուրդի ժամանակը և ապահովում է ավելի կայուն գործունեություն:

Արտադրության ծրագիր

Արտադրության ծրագիրը բազմահամակարգային նախաձեռնություն է, որը նախատեսված է հանքարդյունաբերության և վերամշակման աշխատանքների գործառնական արդյունավետությունը և անվտանգությունը բարելավելու համար: Այն ներառում է թվային հարթակներ ավտոպարկի կառավարման, արտադրության պլանավորման, արտադրական գործընթացների իրականացման, լաբորատորիայի աշխատանքների, երկրաբանական տվյալների ինտեգրման և հանքի պատերի կայունության մոնիտորինգի համար: Միասին, այս համակարգերը հիմք են ստեղծում տվյալների վրա հիմնված որոշումների կայացման, պլանավորման ճշգրտության բարձրացման և առավել կայուն գործունեության ապահովման համար:

Հաշվետու ժամանակաշրջանում զգալի առաջընթաց է գրանցվել հիմնական համակարգերի ներդրման գործում: Ներդրվել է ավտոպարկի կառավարման լուծում հանքարդյունաբերական սարքավորումների իրական ժամանակում բաշխումն օպտիմալացնելու, պարապուրդի ժամանակը կրճատելու և անվտանգությունը բարձրացնելու համար: Մշակվել է արտադրական գործընթացների իրականացման համակարգ՝ արտադրության տվյալների ամբողջական տեսանելիությունն ապահովելու համար՝ այդպիսով կրճատելով բացը պլանավորման և իրականացման

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը ներդրել է մի շարք նոր թվային գործիքներ իրական ժամանակում գործընթացների մոնիտորինգը և որոշումների կայացման գործընթացը բարելավելու համար: Արդիականացումները հնարավորություն են տվել ավելի արդյունավետ կառավարել պաշարների հոսքերը, օպտիմալացնել հիմնական սարքավորումների աշխատանքը և ապահովել գործառնական պարամետրերի և արտադրական նպատակների ավելի ամբողջական համապատասխանությունը: Առաջիկայում Ընկերությունը նախատեսում է ընդլայնել այդ տեխնոլոգիաների կիրառումը ձեռնարկության ոչ հիմնական օբյեկտներում, ինչը հետագայում կբարձրացնի գործընթացների հուսալիությունն ու արդյունավետությունը:

փուլերի միջև: Շարունակվել է նաև աշխատանքը պլանավորման նոր համակարգի ուղղությամբ, որը նախատեսված է հանքարդյունաբերության ոլորտի արժեշղթայում կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորումն օպտիմալացնելու համար:

Այլ նախաձեռնությունները ներառում են լաբորատորիայի տեղեկատվության կառավարման համակարգի ներդրումը՝ որակի վերահսկման գործընթացների արդյունավետությունը և հուսալիությունը բարձրացնելու համար, ինչպես նաև երկրաբանական տվյալների կենտրոնացված դատաբազայի ստեղծումը՝ տվյալների համապատասխանությունը և հասանելիությունը բարելավելու համար: Բացի այդ, հաջողությամբ գործարկվել է բացահանքի պատերի մոնիտորինգի համակարգը՝ հնարավոր երկրաբանական ռիսկերի մասին վաղ նախազգուշացումներ տրամադրելու համար՝ այդպիսով բարձրացնելով հանքի շահագործման անվտանգությունը:

Սույն նախագծերի իրականացումը կշարունակվի հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում, և ակնկալվում է, որ դա կապահովի շահագործման ավելի մեծ կանխատեսելիություն, անվտանգության չափանիշների բարելավում և ակտիվների առավել արդյունավետ օգտագործում:

Կորպորատիվ գործընթացների ծրագիր

Կորպորատիվ գործընթացների ծրագիրը կենտրոնացած է կազմակերպչական արդյունավետության բարձրացման վրա՝ ավտոմատացման և թվային փոխակերպման միջոցով: Ծրագիրը ներառում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կառավարման համակարգի և ձեռնարկության ռեսուրսների պլանավորման ժամանակակից հարթակի ներդրումը:

Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը հնարավորություն է տվել անցում կատարել թվայնացված փաստաթղթաշրջանառության՝ ստանդարտացնելով ողջ կենսափուլը և միաժամանակ բարելավելով համապատասխանության ապահովումն ու վերահսկողությունը: Ձեռնարկության ռեսուրսների պլանավորման համակարգի ամբողջական ներդրումից հետո

կապահովվի միասնական ինտեգրված հարթակ ֆինանսների, մարդկային ռեսուրսների, գնումների, մատակարարման շղթայի և արտադրության համար: Համակարգը նաև կամրապնդի թափանցիկությունը, կօպտիմալացնի ռեսուրսների օգտագործումը և կաջակցի հիմնավորված որոշումների կայացմանը՝ առաջադեմ տեխնոլոգիաների միջոցով կազմվող հաշվետվությունների և վերլուծությունների միջոցով:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունն ավարտել է երկու համակարգերի նախնական ներդրման փուլերը, ներառյալ գնահատումները, կարգաբերումը և գործընթացների քարտեզագրումը: Ներդրումը կշարունակվի փուլ առ փուլ՝ սահուն կիրառումը և բիզնեսի փոխակերպման նպատակներին համապատասխանեցումն ապահովելու համար:

Անվտանգության ծրագիր

Անվտանգության ծրագիրը նախատեսված է Ընկերության կառույցների պաշտպանության և աշխատանքի անվտանգության համակարգերի արդիականացման համար: Այն ներառում է մուտքի վերահսկման, հրդեհների հայտնաբերման և կանխարգելման, ինչպես նաև արտակարգ իրավիճակներին արձագանքման բարելավված մեխանիզմներ: Ծրագիրը նաև նպատակ ունի ամրապնդել համապատասխանության մոնիտորինգը և ինտեգրել թվային լուծումներ՝ ժամանակի կառավարման և աշխատողների անվտանգության ապահովման համար:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում բոլոր կառույցներում իրականացվել են գնահատումներ, և սկսվել է արդիականացման առաջին փուլը: Նախատեսված հաջորդ քայլերը ներառում են մուտքի վերահսկման և հակահրդեհային պաշտպանության համակարգերի հետագա ներդրումը՝ արտակարգ իրավիճակներին պատրաստվածության ապահովման ընդլայնված հնարավորությունների հետ մեկտեղ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքի ծրագիր

SS ենթակառուցվածքի ծրագիրը հանդիսանում է Ընկերության թվային փոխակերպման հիմքը: Այն կենտրոնացած է տվյալների կենտրոնի կարողությունների ընդլայնման, համակարգի կայունության ամրապնդման և տեղեկատվական անվտանգության ապահովման վրա: Ծրագիրը նաև ստեղծում է մասշտաբային ճարտարապետություն, որը կարող է աջակցել թվային փոխակերպման ոլորտում ինչպես ներկա, այնպես էլ ապագա նախաձեռնություններին:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը կատարելագործել է իր SS մոնիտորինգի հնարավորությունները և ներդրել է զաղտնի տեղեկատվության կառավարման անվտանգ հարթակներ: Ապագա աշխատանքները կներառեն տվյալների նոր կենտրոնների շահագործումը և հիմնական բիզնես համակարգերի տեղափոխումն այդ կենտրոններ՝ ապահովելով խափանումներին դիմակայող աշխատանքային գործընթացներ և պաշտպանություն կիբեր սպառնալիքներից՝ առաջադեմ տեխնոլոգիաների կիրառմամբ:

ԶՊՄԿ-ի աշխատողները. կայուն հաջողության մեր գրավականը

- 59 — Անձնակազմի կառավարում. համաշխարհային ստանդարտների հետ համապատասխանության ապահովում
- 60 — Տեղական զբաղվածության ապահովման քաղաքականություն. տնտեսության աճի և համայնքների զարգացման խթանում
- 61 — Աշխատողների իրավունքներ. խտրականության բացառում և կոլեկտիվ բանակցությունների խթանում
- 64 — Մարդկային կապիտալի դինամիկա. աշխատուժի կայունության և տեղական զբաղվածության ապահովում
- 67 — Տեսլականի կառավարում. Ընկերության բարձրաստիճան ղեկավարությունը
- 68 — Արտաքին մասնագետների ներգրավում. համագործակցություն Ընկերության աշխատող չհանդիսացող անձանց հետ
- 69 — Վերապատրաստում. աշխատողների մասնագիտական զարգացման ապահովում
- 72 — Կատարողականի և մասնագիտական աճի գնահատում
- 73 — Վարձատրություն և արտոնություններ. աշխատողների բարեկեցության ապահովում



GRI 3-3

Աշխատողները մեր գործունեության հիմքն են և մեր նվաճումների շարժիչ ուժը: Մենք վստահ ենք, որ Ընկերության կայուն աճն ապահովվում է բարձր պատրաստվածությամբ, մոտիվացված և աշխատանքի նկատմամբ նվիրվածություն դրսևորող աշխատողների շնորհիվ: Անձնակազմի հավաքագրման և մասնագիտական զարգացման վերաբերյալ յուրաքանչյուր որոշում ռազմավարական ներդրում է ԶՊՄԿ-ի երկարաժամկետ հաջողությունն ապահովելու գործընթացում:

Առաջնորդվելով այդ փիլիսոփայությամբ՝ մենք հանձնառու ենք խթանել շարունակական ուսուցման, մասնագիտական զարգացման և թիմային աշխատանքի մշակույթը: Ընկերությունը ներդրումներ է կատարում կանոնավոր վերապատրաստման ծրագրերում՝ աշխատողների հմտությունների զարգացման և գիտելիքների խորացման համար՝ հնարավորություն տալով նրանց աճել ինչպես անձնական, այնպես էլ մասնագիտական առումներով: Մենք ձգտում ենք ստեղծել բարենպաստ և թիմային աշխատանքին նպաստող միջավայր, որտեղ յուրաքանչյուր աշխատող կզգա, որ իրեն գնահատում են, հարգում են և որ իր աշխատանքը համապատասխանում է Ընկերության առաքելությանը:

ԶՊՄԿ աշխատողների մոտ 90%-ը Սյունիքի մարզի համայնքներից են: Մարդկային կապիտալում ներդրումներ կատարելով՝ մենք նաև նպաստում ենք այդ համայնքների սոցիալական զարգացմանը: Մասնագետների ռազմավարական կառավարումը մեր սոցիալական քաղաքականության անբաժանելի մասն է, որն ապահովում է շարունակական աճի և զարգացման հնարավորություններ մեր աշխատողների և, այդպիսով, մեր համայնքների համար:

Մարդկային կապիտալի կառավարման գործընթացում մեր Ընկերությունն առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջներով՝ գործելով միջազգային ստանդարտներին համապատասխան:

Աշխատողների մոտ

90%

Սյունիքի մարզի համայնքներից են:

Անձնակազմի կառավարում. համաշխարհային ստանդարտների հետ համապատասխանության ապահովում

2023թ-ին Անձնակազմի կառավարման բաժնից՝ Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին հաջող վերակազմավորումից հետո ԶՊՄԿ-ն, շարունակեց իր կազմակերպական կառուցվածքի վերափոխումները 2024թ. ընթացքում: Հաշվետու տարվա ընթացքում Ընկերությունը հետևել է միջազգային լավագույն գործելակերպին իր բազմաթիվ գործառույթներում՝ նպաստելով արդյունավետության, թափանցիկության և ընդհանուր կատարողականի շարունակական բարելավմանը:

2024թ-ին ԶՊՄԿ-ն ընդունել է մարդկային կապիտալի վերաբերող մի քանի հիմնական քաղաքականություններ, այդ թվում՝

Տեղական զբաղվածության քաղաքականությունը

1

Մարդու իրավունքների վերաբերյալ քաղաքականությունը

2

Աշխատավայրում բռնության, ոտնձգությունների, խտրականության և հաշվեհարդարի դեմ պայքարի քաղաքականությունը

3

Տեղական զբաղվածության ապահովման քաղաքականություն . տնտեսության աճի և համայնքների զարգացման խթանում

Տեղական տնտեսության աճը և համայնքների զարգացումը խթանելու նպատակով՝ Ընկերությունը ստեղծում է աշխատանքի ուղղակի, անուղղակի և խրախուսումների միջոցով ձևավորված հնարավորություններ բոլոր այն համայնքներում, որոնց վրա ԶՊՄԿ-ի գործունեությունն ազդեցություն է թողնում: Տեղական զբաղվածության քաղաքականությունը ներկայացնում է ԶՊՄԿ-ի հանձնառությունն առաջնահերթություն տալ տեղացիներին աշխատանքով ապահովմանը և նրանց մասնագիտական զարգացմանը՝ այդպիսով նպաստելով մարզի զարգացմանը և համայնքների բարեկեցությանը:

ԶՊՄԿ-ն վարում է տեղացի թեկնածուների տվյալների բազա, որը ներառում է տվյալներ նրանց հմտությունների և փորձի վերաբերյալ՝ տեղական մակարդակում անձնակազմի հավաքագրման գործընթացին աջակցելու նպատակով: Ընկերությունը պլանավորում է կազմակերպել նպատակային ուսուցողական ծրագրեր համայնքների անդամների, հատկապես երիտասարդների և խոցելի խմբերի անդամների համար, որպեսզի նրանք կարողանան ստանալ անհրաժեշտ որակավորում հնարավոր թափուր հաստիքների համար: ԶՊՄԿ-ի նպատակն է ապահովել աշխատանքի հավասար հնարավորություններ՝ առանց որևէ խտրականության: Ընկերությունը հատկացնում է միջոցներ տեղական զբաղվածությանն ուղղված նախաձեռնություններն արդյունավետ կերպով իրականացնելու համար: Այդ միջոցառումների միջոցով Ընկերությունն ամրապնդում է իր առանցքային դերը տարածաշրջանի տնտեսական կայունության և կայուն զարգացման ապահովման գործընթացում:

ԶՊՄԿ-ն պարբերաբար իրականացնում է տեղական զբաղվածության ապահովման ցուցանիշների մոնիտորինգ և դրանք քննարկում շահագրգիռ կողմերի հետ՝ արժևորելով թափանցիկությունը և համայնքների կարծիքը:

Աշխատողների իրավունքներ . խտրականության բացառում և կոլեկտիվ բանակցությունների խթանում

Մարդու իրավունքների վերաբերյալ քաղաքականությունը և Աշխատավայրում բռնության, ոտնձգությունների, խտրականության և հաշվեհարդարի դեմ պայքարի քաղաքականությունը խիստ կարևորություն են տալիս խտրականությունը բացառելու սկզբունքներին և կոլեկտիվ բանակցություններ կազմակերպելու և վարելու իրավունքին:

Վարքագիծն աշխատանքի վայրում . միավորման ազատություն և կոլեկտիվ բանակցություններ

GRI 3-3, SASB EM-MM-210b.2., EM-MM-310a.1.

ԶՊՄԿ-ն ընդունում և հարգում է իր աշխատողների՝ արհմիություններ ստեղծելու, դրանց միանալու կամ չմիանալու և կոլեկտիվ բանակցություններ վարելու իրավունքը՝ համաձայն գործող օրենսդրությանը: Ընկերությունն ապահովում է, որ աշխատողների կողմից այդ իրավունքներից

օգտվելը չհանգեցնի որևէ հաշվեհարդարի, ահաբեկման կամ ոտնձգությունների: ԶՊՄԿ-ն շարունակում է հավատարիմ մնալ աշխատողներին ներկայացնող արհմիությունների հետ բաց երկխոսության և կառուցողական սոցիալական գործընկերության ապահովման իր հանձնառությանը:

GRI 2-30

2024թ-ին Ընկերության աշխատողների 99%-ը շարունակում էր հանդիսանալ արհմիության անդամ, որը առանցքային դեր է խաղում աշխատողների իրավունքները ներկայացնելու և կոլեկտիվ բանակցությունները խթանելու գործում: Այս կայուն և համատեղ աշխատանքին նպաստող աշխատանքային միջավայրի ձևավորման արդյունքում 2024թ-ին տեղի չի ունեցել ոչ տեխնիկական գործոններով պայմանավորված որևէ տարածքի փակում կամ նախագծի հետ կապված ուշացում:

Թեև բարենպաստ աշխատանքային միջավայր ապահովելու Ընկերության ջանքերը մշտապես նպաստել են դրական աշխատանքային հարաբերությունների ձևավորմանը, 2025թ-ի սկզբին, այս հաշվետվության կազմման ընթացքում, աշխատողների մի խումբ նախաձեռնեց չարտոնված գործադուլ՝ պահանջելով աշխատավարձի 50% բարձրացում:

Գործադուլը, որը չէր հաստատվել արհմիության կողմից և չէր իրականացվել օրինական ընթացակարգերով, հանգեցրեց գործունեության ժամանակավոր 11-օրյա դադարեցմանը՝ մոտ հարյուր աշխատողների և համայնքի մի խումբ անդամների մասնակցությամբ պայմանավորված: Հարկ է նշել, որ այդ ընթացքում Ընկերությունը կամ իրավապահ մարմինները որևէ ուժ չեն կիրառել: Իրավիճակը կարգավորվեց գործադուլի առաջնորդների և Ընկերության բարձրաստիճան ղեկավարության միջև բանակցությունների միջոցով և Գլխավոր տնօրենի կողմից չարտոնված գործադուլը դադարեցնելու հրապարակային կոչից հետո: Ընկերության գնահատմամբ հասցվել է մոտ 1 միլիոն ԱՄՆ դոլարի չափով ֆինանսական վնաս յուրաքանչյուր չաշխատած օրվա համար և լրացուցիչ 300,000 ԱՄՆ դոլարի կորուստ՝ չվճարված հարկային մուտքերի տեսքով:

⁹ Մյուս աշխատողների աշխատանքային պայմանները նույնպես հիմնված են Ընկերության կոլեկտիվ պայմանագրի վրա:



Այս միջադեպը վկայում է աշխատողների ներգրավվածությունն ապահովող ռազմավարությունն ամրապնդելու, օրինական կոլեկտիվ գործողությունների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու և աշխատողների, արհմիության և Ընկերության ղեկավարության միջև հաղորդակցությունը բարելավելու անհրաժեշտության մասին:

Նայելով առաջ՝ Ընկերությունը շարունակում է

Վարքագիծն աշխատանքի վայրում. խտրականության բացառում և աշխատավայրում բռնության կանխարգելում

GRI 3-3

Մեր նպատակն է Ընկերությունում ձևավորել անվտանգ, հարգանքի վրա հիմնված և բարենպաստ աշխատանքային միջավայր մեր բոլոր աշխատողների համար: Այս հանձնառության հիմքում ընկած է զրո հանդուրժողականությունը խտրականության և աշխատավայրում բռնության նկատմամբ: Մենք հավաստարիմ ենք խտրականությունը բացառելու սկզբունքին և ապահովում ենք, որ մեր գործունեության հետ առնչություն ունեցող ոչ մի աշխատող կամ անձ չենթարկվի անարդար վերաբերմունքի՝ սեռի, ռասայի, էթնիկ ծագման, կրոնի, սեռական կողմնորոշման, հաշմանդամության, տարիքային կամ այլ անձնական բնութագրերից ելնելով:

Ընկերությունն ակտիվորեն խթանում է հավասար հնարավորությունները և աշխատողի կոմպետենցիայի հիման վրա որոշումների կայացումն Ընկերության բոլոր մակարդակներում: ԶՊՄԿ-ն ցուցաբերում է զրո հանդուրժողականություն աշխատավայրում բռնության բոլոր դրսևորումների, ոտնձգությունների կամ հաշվեհարդարի նկատմամբ և պաշտպանում է իր աշխատողներին սպառնալիքներից, ահաբեկումներից կամ ցանկացած վարքագծից, որը կարող է ստեղծել ոչ առողջ աշխատանքային միջավայր:

Մեր քաղաքականությունները վերաբերում են Ընկերության գործունեությունում ներգրավված աշխատողներին, կապալառուներին, մատակարարներին և բոլոր երրորդ կողմերին՝ ապահովելով հետևողական

առաջնահերթություն տալ բարենպաստ և թափանցիկ կոլեկտիվ բանակցությունների գործընթացների խթանմանը: Մենք կշարունակենք կատարելագործել մեր բանակցային գործընթացը, կարևորել աշխատողների ներկայացուցիչների դերը և ձևավորել համատեղ աշխատանքին նպաստող և փոխադարձ հարգանքի վրա հիմնված աշխատանքային միջավայր՝ Ընկերության կորպորատիվ արժեքներին և իրավական պարտավորություններին համապատասխան:

և միօրինակ պաշտպանություն մեր ողջ բիզնես էկոհամակարգում: Ընկերությանը հաղորդված խտրականության, բռնության կամ ոտնձգությունների վերաբերյալ բողոքները դիտարկվում են առավելագույն լրջությամբ, մանրակրկիտ հետաքննվում են և ստանում են արձագանք սեղմ ժամկետներում՝ անվտանգ, հարգանքի վրա հիմնված և բարենպաստ աշխատանքային մշակույթ ապահովելու համար:

Տեղեկացման և ահազանգման պատշաճ միջոցներ ապահովելու նպատակով՝ Ընկերությունը 2025թ-ի սկզբին ապահովել է հաղորդակցման մի քանի հարթակներ աշխատողների համար, որոնց միջոցով տրամադրված տեղեկատվությունը կանոնավոր կերպով վերահսկվում է և դրա հիման վրա ձեռնարկվում են համապատասխան քայլեր: Այս հարթակները ներառում են թեժ գիծը, էլեկտրոնային փոստը և կայքում տեղադրված բողոք ներկայացնելու հատուկ ձևը: Ընկերության Քաջարանի վարչական շենքում 2023թ-ին տեղադրվել էին բողոքների արկղեր, որտեղ աշխատողները կարող են թողնել իրենց նամակները՝ ցանկության դեպքում պահպանելով հաղորդման գաղտնիությունը:

Շարունակական վերապատրաստման, իրազեկման և իր քաղաքականություններին խստիվ հետևելու միջոցով ԶՊՄԿ-ն ձգտում է ձևավորել միջավայր, որտեղ բոլորը կզգան իրենց գնահատված, անվտանգ և մոտիվացված՝ իրենց ներուժը լիարժեք օգտագործելու համար:

GRI 406-1


2024թ-ին ԶՊՄԿ-ում չի արձանագրվել ներքին կամ արտաքին շահագրգիռ կողմերի վրա ազդեցություն ունեցող խտրականության որևէ դեպք՝ պայմանավորված ռասայի, մաշկի գույնի, սեռի, կրոնի, քաղաքական հայացքների, ազգության, սոցիալական ծագման կամ Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) կողմից սահմանված որևէ այլ հիմքով: Այս արդյունքը վկայում է վերջին չորս տարիների ընթացքում գրանցված դրական ցուցանիշների շարունակական պահպանման մասին:



Մարդկային կապիտալի դինամիկա. աշխատուժի կայունության և տեղական զբաղվածության ապահովում

GRI 2-7


Աշխատողների ընդհանուր թվի բացվածքը՝ ըստ սեռի



Աշխատողների ընդհանուր թվի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը, ներառյալ բացվածքն ըստ աշխատանքի տեսակի, սեռի և համայնքի, ներկայացված է Հավելված 3-ում:

2024թ. տարեկան զրոյալը ԶՊՄԿ-ի աշխատողների ընդհանուր թիվը կազմել է 4,654, որից 77.72%-ը (3,617 աշխատող) տղամարդիկ են, իսկ 22.28%-ը (1,037 աշխատող)՝ կանայք: Սեռերի հավասարակշռության այդ մակարդակը¹⁰ բարձր է ոլորտի միջին ցուցանիշից և վկայում է տեղացի

Աշխատողների ընդհանուր թվի բացվածքը՝ ըստ համայնքների



աշխատողների շարունակական զարգացման համար կատարված ներդրումների արդյունավետության մասին: Այդ ներդրումը երաշխավորում է կանանց հնարավորությունների ընդլայնումը մեր տեղական համայնքներում, քանի որ Ընկերության աշխատողների մեծամասնությունը, այդ թվում՝ կանայք, տեղական համայնքներից են: Կին աշխատողների թվի աճն արտացոլում է ոլորտում զբաղվածություն և զենդեքային բազմազանություն ապահովելու մեր հանձնառությունը: Շուրջ 40 կին զբաղեցնում է ղեկավար պաշտոն:

Ընկերությունը շարունակում է կարևոր դեր խաղալ տեղական տնտեսության զարգացման գործում. աշխատողների 88.74%-ը (4,130 աշխատող) Քաջարանի և Կապանի հարակից համայնքների բնակիչներ են: Տեղացի բնակիչների մեծ թիվն աշխատողների ընդհանուր կազմում վկայում է մարզում կայուն զբաղվածության հնարավորություններ ստեղծելու մեր երկարաժամկետ

հանձնառության մասին: Այդ հանձնառությունն ավելի ամրապնդվեց 2024թ-ին ԶՊՄԿ-ի Տեղական զբաղվածության քաղաքականության հաստատմամբ, որտեղ պաշտոնապես ձևակերպվում է տեղացի մասնագետներին առաջնահերթություն տալու մեր մոտեցումը:

GRI 401-1, 402-1

2024թ-ին ԶՊՄԿ-ն աշխատանքի է ընդունել 216 նոր աշխատող, ինչը կազմում է ընդհանուր աշխատողների 4.64%-ը: Աղյուսակում ներկայացված տվյալները վկայում են աշխատուժը ավելի բազմազան դարձնելու մեր հանձնառության մասին՝ ներգրավելով երիտասարդ մասնագետների և աշխատանքի ընդունելով տեղական և այլ համայնքների բնակիչներին:

Նոր աշխատողներ

Ցուցանիշ	2023թ.	2024թ.
Ըստ սեռի		
Տղամարդ	259	167
Կին	76	49
Ըստ տարիքային խմբի		
30 տարեկանից ցածր	105	71
30-50 տարեկան	181	117
50 տարեկանից բարձր	49	28
Ըստ մարզի		
Տեղացիներ (Քաջարան և Կապան համայնքներ)	256	160
Հայաստանի այլ մարզեր և արտերկիր	79	56
Ընդամենը նոր աշխատողներ	335	216

Թեև նոր մասնագետների ներգրավումը շարունակում է մնալ ԶՊՄԿ-ի հիմնական առաջնահերթությունը, Ընկերությունը նաև մեծապես կարևորում է սեփական աշխատողների հետ աշխատանքային հարաբերությունների երկարատևությունը:

2024թ-ին աշխատողների հոսունության ցուցանիշը նվազել է մինչև

4.89%
(228 աշխատող)

ցույց տալով դրական շարժ՝ 2023թ-ի համեմատ

5.53%
(256 աշխատող)

Այս դրական միտումը վկայում է աշխատողների ներգրավվածության բարձր մակարդակի, աշխատանքից գոհունակության և Ընկերության կայունության մասին:


¹⁰ 2024թ-ին կանայք կազմել են համաշխարհային հանքարդյունաբերության ոլորտի աշխատողների մոտ 15%-ը: Աղբյուրը՝ Women in Mining UK, 100 Global Inspirational Women in Mining 2024

Աշխատողների հոսունության կառավարումը շարունակում է մնալ Ընկերության ռազմավարական առաջնահերթություններից մեկը։ Այն ուղղակիորեն ազդում է ԶՊՄԿ աշխատանքի անխափան ընթացքի, աշխատուժի կայունության և գործունեության արդյունքների երկարաժամկետ կտրվածքով արդյունավետության վրա։ Այդ իսկ պատճառով, Ընկերությունը մշտապես հետևում է հոսունության միտումներին և իրականացնում է նպատակային նախաձեռնություններ՝ Ընկերության բոլոր մակարդակներում աշխատուժի պահպանումն ու աշխատողների ներգրավվածությունն ամրապնդելու համար։

Կանանց հոսունության ցուցանիշը 2023թ-ին գրանցված 6.1%-ից նվազել է 3.66%-ի 2024թ-ին։ Տղամարդկանց շրջանում հոսունության ցուցանիշը մնացել է համեմատաբար կայուն։ Հոսունության ամենաբարձր ցուցանիշը՝ 11.9%-ը, գրանցվել է 50 տարեկանից բարձր աշխատողների շրջանում՝ հիմնականում կենսաթոշակի անցնելով պայմանավորված։

Աշխարհագրական տեսանկյունից տեղացի աշխատողների (Քաջարան և Կապան) հոսունության ցուցանիշը 4.26% է, մինչդեռ Հայաստանի այլ մարզերից և արտերկրից եկած աշխատողների շրջանում գրանցվել է հոսունության շատ ավելի բարձր ցուցանիշ՝ 9.92%։

Աշխատուժի դինամիկայի մասին տեղեկացվածությունը կարևոր նշանակություն ունի ԶՊՄԿ-ի մարդկային ռեսուրսների երկարաժամկետ ռազմավարության մշակման համար։ Ընկերությունն օգտագործում է այդ տվյալներն աշխատուժի պահպանման համար իրականացվող քայլերն ամրապնդելու համար՝ կենտրոնանալով կենսաթոշակի անցնող աշխատողների կողմից գիտելիքների փոխանցման, սերունդների հաջորդականության պլանավորման և տեղական համայնքների բնակիչների համար կարիերայի զարգացման հնարավորությունների ընդլայնման վրա։



Աշխատողների հոսունությունը

Ցուցանիշ	2023թ.	2024թ.
Ըստ սեռի		
Տղամարդ	5.30%	5.25%
Կին	6.10%	3.66%
Ըստ տարիքային խմբի		
30 տարեկանից ցածր	2.70%	3.46%
30-50 տարեկան	1.90%	2.43%
50 տարեկանից բարձր	15.90%	11.91%
Ըստ մարզի		
Քաջարան և Կապան	4.60%	4.26%
Այլ	12.00%	9.92%
Ընդամենը	5.53%	4.89%

Տեսլականի կառավարում. Ընկերության բարձրաստիճան ղեկավարությունը

GRI 202-2

ԶՊՄԿ-ի բարձրաստիճան ղեկավարության կազմում ընդգրկված են 14 մասնագետներ, ովքեր համատեղ ղեկավարում են Ընկերության գործունեության ռազմավարական ուղղությունները և գործառնական գործընթացները։ Այդ խմբում ընդգրկված են բոլոր ղեկավարները՝ Գլխավոր տնօրենից մինչև Տնօրենները։

Հաշվի առնելով Ընկերության գործունեության մասշտաբները և ղեկավարներին տարածաշրջանում¹¹ տեղակայելու մեր ձգտումը՝ բարձրաստիճան ղեկավարության աշխարհագրական ներկայացվածությունը հետևյալն է. բարձրաստիճան ղեկավարներից 1-ը գտնվում է Քաջարանում, 11-ը՝ Հայաստանի այլ մարզերում և 2-ը՝ արտերկրում։

Ղեկավար պաշտոնների համար նոր աշխատողներ ընդունելիս՝ ԶՊՄԿ-ն նախապատվությունը տալիս է այն թեկնածուներին, ովքեր կարող են հեշտությամբ ինտեգրվել տեղական տնտեսական, սոցիալական և մշակութային միջավայր։ Մենք ներդրումներ ենք կատարում տեղացի մասնագետների զարգացման ուղղությամբ, աջակցելով մարզերի՝ հատկապես Սյունիքի մարզում գտնվող բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ հաջորդ սերնդի ղեկավարներ և տեխնիկական մասնագետներ պատրաստելու գործում։

GRI 405-1

Ղեկավարները և աշխատողները՝ ըստ սեռի և տարիքային խմբի

Ցուցանիշ	2023թ.						2024թ.					
	Տղամարդ	Կին	30 տարեկանից ցածր	30-50 տարեկան	50 տարեկանից բարձր	Ընդամենը	Տղամարդ	Կին	30 տարեկանից ցածր	30-50 տարեկան	50 տարեկանից բարձր	Ընդամենը
Տնօրենների խորհուրդ	6	1	-	3	4	7	6	1	0	2	5	7
Գործադիր ղեկավարներ ¹²	15	0	0	12	3	15	14	0	0	10	4	14
Աշխատողներ	3,625	1,026	603	2,885	1,163	4,651	3,603	1,037	578	2,916	1,146	4,640
Ընդամենը	3,640	1,026	603	2,897	1,166	4,666	3,617	1,037	578	2,926	1,150	4,654

¹¹ ԶՊՄԿ-ն «տարածաշրջան» ասելով ի նկատի ունի Հայաստանի Հանրապետության Քաջարան և Կապան քաղաքները, որտեղ կենտրոնացված է Ընկերության հիմնական գործունեությունը և որոնք համարվում են գործունեության հիմնական տարածքներ։

¹² 2023թ. հաշվետվությունում գործադիր ղեկավարների թվի մեջ ներառված էին նաև փոխտնօրենները։ 2024թ. հաշվետվությունում 2023թ. հաշվետու ժամանակաշրջանի թվերը համապատասխանաբար վերահաշվարկվել են՝ համապատասխանություն ապահովելու համար։

Արտաքին մասնագետների ներգրավում. համագործակցություն Ընկերության աշխատող չհանդիսացող անձանց հետ

GRI 2-8, SASB EM-MM-000.B

2024թ-ին ԶՊՄԿ-ն կնքել է ծառայությունների մատուցման պայմանագրեր Ընկերության աշխատող չհանդիսացող 38 անձանց հետ, ովքեր հիմնականում տրամադրել են թարգմանչական ծառայություններ և խորհրդատվություն՝ վարչական, իրավական և բիզնեսին առնչվող հարցերի շուրջ:

Ներգրավված մասնագետների փորձն ու գիտելիքները հնարավորություն են տալիս Ընկերությանը արդյունավետ կերպով օգտվել արտաքին աղբյուրներից՝ աջակցելով աշխատակիցներին և զարգացնելով նրանց կարողությունները:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության աշխատող չհանդիսացող անձանց թիվն էականորեն չի փոխվել, ինչը վկայում է կայուն գործառնական պահանջարկի և մասնագիտացված արտաքին աջակցության շարունակական անհրաժեշտության մասին՝ պայմանագրային հարաբերությունների հաստատման միջոցով:

Աշխատողներ և կապալառուներ

Ցուցանիշ	Չափման միավոր	2023թ.	2024թ.
Ընդամենը աշխատողներ ¹³	մարդ	5,268	7,554
Կապալառուների թիվը ¹⁴	մարդ	602	2,900 ¹⁵
Կապալառուների տոկոսային մասնաբաժինը	%	11.43	38.4

¹³ Այս ցուցանիշը ներառում է ԶՊՄԿ-ի աշխատողներին և կապալառուներին:

¹⁴ Ընկերության աշխատող չհանդիսացող անձանց թիվը հաշվարկվում է աշխատողների փաստացի թվի հիման վրա, որն ապահովում է ճշգրիտ և վերահսկելի տվյալներ: Տվյալները ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ստացված տվյալների հիման վրա՝ ներկայացնելով որոշակի ժամանակահատվածում Ընկերության աշխատող չհանդիսացող անձանց ներգրավվածության հստակ պատկերը:

¹⁵ Կապալառու աշխատողների թվի աճը ԶՊՄԿ-ի Աշխատանքի անվտանգության և առողջության կառավարման համակարգի շրջանակում պայմանավորված է մեկ կապալառու ընկերության ավելացմամբ, որի հետ Ընկերությունը պայմանագրային հարաբերություններ է հաստատել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:

Վերապատրաստում. աշխատողների մասնագիտական զարգացման ապահովում



GRI 404-1

Վարչական դեպարտամենտի ենթակայության ներքո 2023թ-ին ստեղծված Ուսումնական կենտրոնի միջոցով 2024թ-ին մենք զգալիորեն ընդլայնել ենք մեր ուսումնական ծրագրերի շրջանակը և ազդեցությունը:

2024թ-ին ԶՊՄԿ-ն կազմակերպել է 542 վերապատրաստման դասընթաց՝ ընդգրկելով տարբեր ձևաչափեր և մասնագիտական ոլորտներ: Ընկերությունում վերապատրաստման դասընթացների ընդհանուր տևողությունը կազմել է 1,656 ժամ, դասընթացներին մասնակցել է 3,491 աշխատող՝ բոլոր ստորաբաժանումներից և աշխատողների բոլոր խմբերից: Մասնակիցներից 619-ը կանայք էին, 2,872-ը՝ տղամարդիկ, ինչն արտացոլում է Ընկերության ներառական մոտեցումն ուղղված մասնագիտական զարգացմանը: Մասնակցության այս բարձր ցուցանիշը վկայում է իր աշխատողների շարունակական ուսուցման, հմտությունների կատարելագործման և կարողությունների զարգացման համար հնարավորություններ ստեղծելու Ընկերության հանձնառության մասին:

Վերապատրաստումները 2024թ-ին (ըստ սեռի)

Սեռը	2023թ.			2024թ.		
	Մարդ	Ընդհանուր տևողությունը, ժամ	Միջին տևողությունը, ժամ	Մարդ	Ընդհանուր տևողությունը, ժամ	Միջին տևողությունը, ժամ
Տղամարդիկ	3,640	9,100	2.5	2,872	1,374	0.48
Կանայք	1,026	2,565	2.5	619	282	0.46
Ընդամենը աշխատողներ	4,666	11,665	2.5	3,491	1,656	0.47

2024թ-ին վերապատրաստման դասընթացների միջին տևողությունը մեկ աշխատողի համար նվազել է մինչև 0.47 ժամ՝ ի համեմատություն 2.5 ժամի 2023թ-ին: Ժամերի այս կրճատումը հիմնականում պայմանավորված է 2023թ-ին անցկացված մի քանի պարտադիր տեղեկատվական և ատեստավորման դասընթացների ավարտով, որոնցից յուրաքանչյուրը տևում էր 1-ից 4 ժամ: Այդ դասընթացները վերաբերում էին այնպիսի կարևոր թեմաների, ինչպիսիք են՝ առաջին բուժօգնությունը, պայթուցիկ սարքերի հետ վարվելու կանոնները և էլեկտրական սարքերի հետ աշխատանքի անվտանգության կանոնները:

Վերապատրաստման դասընթացների միջին տևողությունը կազմում է

0.47 ժամ մեկ աշխատողի համար¹⁶

¹⁶ Բացառությամբ աշխատանքի անվտանգությանը և առողջությանը վերաբերող դասընթացների:

2024թ-ին անցկացված դասընթացներ (ըստ տեսակի)

Դասընթացի տեսակը	Դասընթաց	Տևողություն (ժամ)	Մասնակիցների քանակ
Պարտադիր դասընթաց	23	31	417
Տեղեկատվական/ներածական դասընթաց	31	40	893
Մասնագիտական դասընթաց	124	593	176
Տեխնիկական հմտություններին վերաբերող դասընթաց	180	568	266
Ոչ մասնագիտական հմտություններին վերաբերող դասընթաց	55	180	262
Ատեստավորման դասընթաց	58	107	870
Նախնական ատեստավորման դասընթաց	71	137	607
Ընդամենը	542	1,656	3,491

GRI 404-2

2024թ-ին Ընկերության վերապատրաստման դասընթացներն ընդգրկել են թեմաների լայն շրջանակ՝ նպատակ ունենալով ամրապնդել հիմնական մասնագիտական և առաջնորդության հմտությունները,

որոնց շրջանակից կարելի է առանձնացնել հետևյալները՝

Պարտադիր դասընթացներ. ներածական հրահանգավորում, ծանոթացում ատեստավորման գործընթացներին, ատեստավորման և նախաատեստավորման դասընթաց, առաջին օգնության դասընթացներ, աշխատանքի անվտանգության ընդհանուր դասընթաց և այլ պարտադիր հավաստագրման դասընթացներ,

Տեղեկատվության փոխանակում/Հրահանգավորում. իրազեկման դասընթացներ շրջակա միջավայրի պահպանության, քաղաքացիական պաշտպանության, թափոնների կառավարման և այլ համապատասխան թեմաներով,

Տեխնիկական և մասնագիտական հմտությունների զարգացում,

Ոչ մասնագիտական հմտությունների զարգացում:

ԶՊՄԿ-ն կիրառում է ռազմավարական և կառուցողական մոտեցում իր աշխատողների մասնագիտական զարգացմանը, որն ապահովվում է Ընկերության գործունեության

փոփոխվող պահանջներին համապատասխանեցված վերապատրաստման դասընթացների համապարփակ փաթեթի ներդրման միջոցով: 2024թ-ին նույնպես այդ դասընթացները միտված են եղել աշխատողների առանցքային խմբերի, այդ թվում՝ տեղամասերի անձնակազմի, ինժեներների թիմերի և միջին օդակի ղեկավարների կարողությունների զարգացմանն ու ամրապնդմանը: Դասընթացների ծրագիրը ներառում է անվտանգության և համապատասխանությանը վերաբերյալ պարտադիր մոդուլներ, տեխնիկական հմտությունների կատարելագործման և ոչ մասնագիտական հմտությունների զարգացման դասընթացներ՝ ապահովելով համապատասխանությունը գործառնական պահանջներին և Ընկերության հիմնական արժեքներին: Մասնագիտական դասընթացներում, որոնք նախատեսված են օրինակ՝ բեռնատարների վարորդների և օպերատորների համար, ներառված են տեսական և գործնական պարապմունքներ՝ նպատակ ունենալով ամրապնդել անվտանգության կանոնների իմացությունը և բարձրացնել գործառնական արդյունավետությունը: Նախնական ատեստավորման մոդուլների և մասնագիտական գիտելիքների գնահատումների նպատակն է գնահատել աշխատողների պատրաստվածությունը և ապահովել կատարողականի բարձր չափանիշների պահպանում աշխատողների կողմից:

Դասընթացների վերաբերյալ հետադարձ կապի տրամադրման գործընթացը, որը վերահսկում են անմիջական ղեկավարները և կանոնավոր կերպով վերլուծության է ենթարկվում Ուսումնական կենտրոնի կողմից, կարևոր դեր է խաղում դասընթացների հետևողական բարելավման համար՝ հաստատելով շարունակական կատարելագործումը և մարդկային կապիտալի երկարաժամկետ զարգացումն ապահովելու Ընկերության հանձնառությունը:



1. ԶՊՄԿ-ի մասին
2. Տնտեսական ազդեցություն
3. Կորպորատիվ կառավարում
4. ԶՊՄԿ-ի աշխատողները
5. Բարեկեցության և կայունության ապահովում աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման մշակույթի ձևավորման միջոցով

6. Տեղական համայնքներ
7. Շրջակա միջավայրի պահպանություն և կայունություն
8. Կլիմայի փոփոխություն
9. Հավելվածներ

Կատարողականի և մասնագիտական աճի գնահատում

Վարձատրություն և արտոնություններ. աշխատողների բարեկեցության ապահովում

GRI 404-3

GRI 3-3, 401-2

2024թ-ին ԶՊՄԿ-ն շարունակում է կատարել աշխատակիցների մասնագիտական զարգացումն ապահովելու իր հանձնառությունը՝ ներդնելով կատարողականի և մասնագիտական աճի կանոնավոր գնահատման կառուցվածքային համակարգ:

Մենք շարունակում ենք առաջնահերթություն տալ մեր աշխատողների բարեկեցության և անվտանգության ապահովմանը՝ գիտակցելով, որ բարձրակարգ մասնագետներ ներգրավելու և աշխատուժը պահպանելու համար անհրաժեշտ է համապարփակ և ճիշտ մտածված արտոնությունների փաթեթ:

Ուսումնական կենտրոնի կողմից համակարգվող այդ նախաձեռնությունը թույլ է տալիս համապատասխանեցնել անհատական կատարողականի արդյունքներն Ընկերության նպատակներին և ապահովել մասնագիտական առաջխաղացման երկարաժամկետ հնարավորություն բոլոր ստորաբաժանումներում: Գործընթացը ներառում է աշխատանքային պարտականությունների կատարման համար անհրաժեշտ գիտելիքների ստուգում՝ հիմնականում կենտրոնանալով մասնագիտական հմտությունների վրա: Բացի այդ, համապարփակ գնահատման շրջանակում գնահատվում են անձնական հատկանիշները, մոտիվացիան և մասնագիտական աճի հետ կապված ձգտումները: Այդ ատեստավորումներն իրականացվում են տարեկան կտրվածքով և հանդիսանում են աշխատողների կառուցվածքային զարգացմանն ուղղված Ընկերության մոտեցման հիմնական բաղադրիչը:

Հաշվետու տարվա ընթացքում կատարողականի և մասնագիտական աճի գնահատումներ իրականացվել են աշխատողների նպատակային խմբի համար՝ հիմնականում կենտրոնանալով գործառնական ոլորտի աշխատողների վրա: 2024թ-ին կատարողականի գնահատում անցած աշխատողների բաշխվածությունն արտացոլում է Ընկերության ընդհանուր գեոդերային կազմը: Մասնավորապես, կատարողականի գնահատում անցած աշխատողների 17%-ը կանայք են, 83%-ը՝ տղամարդիկ, ինչը համընկնում է ԶՊՄԿ-ի աշխատողների գեոդերային կառուցվածքի հետ: Ստորև ներկայացված են գնահատում անցած աշխատողների տոկոսային ցուցանիշներն ըստ խմբերի:

Կատարողականի և մասնագիտական աճի գնահատումներ

Աշխատողի կատեգորիա	Գնահատում անցած աշխատողների տոկոսային ցուցանիշը
Առասանողներ	12%
Ճնշման տակ գործող սարքավորումներով աշխատող աշխատակիցներ	8%
Կռունկավարներ	4%
Փոխակրիչների օպերատորներ	3.50%
Հանքային տեխնիկայի վարորդներ	7%

Համակարգի ներդրման նախնական փուլն արտացոլում է Ընկերության նպատակային մոտեցումը, որը առաջնահերթությունը տալիս է բարձր ռիսկային և գործառնական տեսանկյունից կարևոր պաշտոններին: Համակարգի զարգացմանը զուգընթաց մենք ձգտում ենք ընդլայնել վերջինիս գործողության շրջանակը՝ ընդգրկելով աշխատողների բոլոր կատեգորիաները՝ ապահովելով զարգացման հավասար և շարունակական հնարավորություններ բոլոր աշխատողների համար՝ անկախ պաշտոնից կամ սեռից:

Ընկերությունը կատարողականի գնահատումը համարում է աշխատողների ձեռքբերումների գնահատման, զարգացման հնարավորությունների բացահայտման և անձնական ձգտումների ու Ընկերության նպատակների համապատասխանության ապահովման կարևորագույն մեխանիզմ: Գնահատման գործընթացը թույլ է տալիս բարելավել աշխատողների կարողությունները և նպաստում է Ընկերության ռազմավարական նպատակների իրագործմանը՝ խթանելով հաշվետվողականության, մասնագիտական զարգացման և շարունակական կատարելագործման մշակույթը:

Առողջության ապահովագրություն

ԶՊՄԿ-ն շարունակում է ապահովել իր աշխատողներին և նրանց ընտանիքների անդամներին առողջության ապահովագրության ընդլայնված ծածկույթով՝ առաջարկելով ֆինանսական աջակցություն առողջապահական կարիքները հոգալու համար:

Առողջապահական ծառայություններ

առողջության ապահովագրությունից բացի «Զանգեզուրի պրնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամն առանձին ֆինանսավորում է այն առողջապահական ծառայությունները, որոնք ընդգրկված չեն ապահովագրական փաթեթում՝ ապահովելով, որ Ընկերության աշխատողները և նրանց ընտանիքի անդամները կարողանան ստանալ անհրաժեշտ բժշկական օգնությունը՝ առանց ֆինանսական դժվարությունների:

Հաշմանդամության և աննախատեսելիության ապահովագրում

աշխատավայրում տեղի ունեցած դժբախտ պատահարի դեպքում պետության կողմից սահմանված հաշմանդամության և անաշխատունակության նպաստից բացի ԶՊՄԿ-ն տրամադրում է լրացուցիչ աջակցություն՝ մեկ անգամ ևս հաստատելով աշխատողների անվտանգությունը և բարեկեցությունն ապահովելու իր հանձնառությունը:

Անվճար սնունդ

ԶՊՄԿ-ն շարունակում է տրամադրել անվճար սնունդ իր աշխատողներին: Հատուկ տարածքներում և տարբեր հերթափոխերի ընթացքում աշխատողները ստանում են անվճար սնունդ և աջակցություն:

Երեխայի խնամքի արձակուրդ և կենսաթոշակի անցնելու արտոնություններ

այս հարցերը կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով, և բոլոր աշխատողներն իրավունք ունեն երեխայի խնամքի արձակուրդի և կենսաթոշակի անցնելու արտոնությունների՝ սահմանված կարգով:

¹⁷ Այս արտոնությունները չեն տրամադրվում ոչ լրիվ դրույքով կամ ժամանակավոր հիմունքներով աշխատողներին և գործում են հատկապես Ընկերության գործունեության հիմնական տարածքների՝ Քաջարանի և Կապանի աշխատողների համար:

Մենք շարունակում ենք պարբերաբար վերանայել և բարելավել Ընկերության կողմից տրամադրվող արտոնությունների փաթեթը՝ աշխատողների արձագանքների, Ընկերության արժեքների և փոփոխվող կարգավորող ստանդարտների հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով: Մեր նպատակն է ապահովել աշխատողների բարեկեցությունը, որը համարում ենք մեր գործունեության երկարաժամկետ հաջողության և համայնքներում դրական ազդեցություն ունենալու կարևոր նախադրյալ:

GRI 401-3

Երեխայի խնամքի արձակուրդ

Երեխայի խնամքի արձակուրդ	2023թ.			2024թ.		
	Տղամարդ	Կին	Ընդամենը	Տղամարդ	Կին	Ընդամենը
Հղիության և ծննդաբերության կամ երեխայի խնամքի արձակուրդի իրավունք ունեցող աշխատողների թիվը (ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն)	3,640	1,026	4,666	3,617	1,037	4,654
Հղիության և ծննդաբերության և երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատողների թիվը	1	53	54	1	57	58
Արձակուրդից հետո աշխատանքի վերադարձած աշխատողների թիվը	-	8	8	1	29	30
Նախորդ տարվա ընթացքում հղիության և ծննդաբերության/ երեխայի խնամքի արձակուրդից հետո աշխատանքի վերադարձած և 12 ամիս անց աշխատանքը շարունակող աշխատողների թիվը	-	8	8	0	7	7
Աշխատանքի վերադարձած աշխատողների տոկոսային ցուցանիշը (%)	-	15.09	14.81	-	50.88	51.72
Աշխատուժի պահպանման տոկոսային ցուցանիշը (%)	-	100	100	--	24.14	23.33

Արդար վարձատրման հանձնառություն

GRI 202-1, 405-2

Մարդու իրավունքների վերաբերյալ քաղաքականության համաձայն՝ ԶՊՄԿ-ի նպատակն է վարձատրել բոլոր աշխատողներին օրենքի և մրցակցային պայմաններով կնքված աշխատանքային պայմանագրերի համաձայն, ինչպես նաև ապահովել նրանց աշխատանքային ժամերի համապատասխանությունը գործող օրենսդրության պահանջներին¹⁸ և միջազգային չափանիշներին:

Մեր կարևոր նպատակներից է ապահովել, որ բոլոր աշխատողները ստանան ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձը¹⁹ գերազանցող ամսական համախառն

աշխատավարձ: 2024թ-ին միջին աշխատավարձը 11.37 անգամ գերազանցել է նվազագույն աշխատավարձը: Այս մոտեցումն արտացոլում է աշխատանքի արդար պայմաններ և աշխատողների բարեկեցությունն ապահովելու մեր նպատակը ու միասնական ձևով կիրառվում է Ընկերության գործունեության հիմնական տարածքներում՝ Քաջարանում և Կապանում:

Գենդերային հավասարությունն ապահովելու Ընկերության հանձնառությունը արտացոլվել է վարձատրության կառուցվածքում 2024թ-ին նույնպես: Հանքին հարակից բոլոր տարածքներում պահպանվում է կանանց և

տղամարդկանց բազային աշխատավարձի և ընդհանուր վարձատրության 1:1 հարաբերակցությունը, ինչը վկայում է համարժեք աշխատանքի դիմաց հավասար վարձատրության սկզբունքը պահպանելու մեր նպատակի մասին՝ անկախ սեռից կամ բազմազանության այլ ցուցիչներից:

Գենդերային հավասարության և հավասար վարձատրության սկզբունքները պահպանվում են մեր գործունեության բոլոր ոլորտներում և վերահսկվում են ներքին աուդիտի և աշխատանքային պայմանագրերի, ինչպես նաև վարձատրության համակարգերի պարբերական վերանայումների միջոցով:

Ապահովելով արդար, ներառական և թափանցիկ վարձատրության համակարգ՝ ԶՊՄԿ-ն նպաստում է հավասարության և հարգանքի վրա հիմնված մշակույթի ձևավորմանը՝ միաժամանակ ամրապնդելով իր հեղինակությունը որպես նախընտրելի գործատու: Ընկերության այս ջանքերը նպաստում են մոտիվացված, հավատարիմ և բազմազան աշխատուժի ձևավորմանը, որն առանցքային նշանակություն ունի մեր երկարաժամկետ հաջողության և գործունեության կայունության համար:

2024թ-ին միջին աշխատավարձ

11.37 անգամ

գերազանցել է նվազագույն աշխատավարձը:

Հանքին հարակից բոլոր տարածքներում պահպանվում է կանանց և տղամարդկանց բազային աշխատավարձի և ընդհանուր վարձատրության

1:1

հարաբերակցությունը

¹⁸ Ներառյալ կիրառելի կոլեկտիվ պայմանագրերի պահանջները:
¹⁹ 2024թ-ին Հայաստանում նվազագույն ամսական աշխատավարձը սահմանված էր 75,000 ՀՀ դրամ:

Բարեկեցության և կայունության ապահովում աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման մշակույթի ձևավորման միջոցով

- 81 — Ռիսկերի համապարփակ գնահատում և անվտանգության կառավարում. աշխատավայրում ակտիվ պաշտպանության և անվտանգության մակարդակի բարձրացում
- 88 — Աշխատանքի անվտանգության ամրապնդում. աշխատավայրում առողջության պահպանման որակյալ ծառայությունների ապահովում վտանգների կանխարգելման և ռիսկերի նվազեցման համար
- 89 — Առողջության պահպանմանը և անվտանգությանը վերաբերող դասընթացներ. անվտանգության ապահովում աշխատավայրում ուսուցման և իրազեկման միջոցով
- 92 — Բազմակողմանի աջակցություն առողջության և անվտանգության ոլորտում. բարեկեցության ապահովում բժշկական ծառայությունները հասանելի դարձնելու միջոցով



GRI 3-3, 403-1, 403-7

Աշխատանքի անվտանգության և առողջության (ԱԱԱ) կառավարման համակարգը (ԱԱԱԿՀ) ԶՊՄԿ-ի անվտանգ և առողջ աշխատանքային միջավայր ապահովելու հանձնառության հիմքն է: Համակարգը ներդրվել է գործող օրենսդրության պահանջների համաձայն՝ ապահովելով համապատասխանությունը տեղական կանոնակարգերին և աշխատանքային անվտանգության ու առողջության միջազգային ստանդարտներին:

Համակարգի աշխատանքը կարգավորում են հետևյալ հրամանները, որոշումները և օրենքները.

- > «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքը,
- > ՀՀ կառավարության որոշումը «Պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ անվտանգության միասնական կանոնները հաստատելու մասին»,
- > ՀՀ կառավարության որոշումը «Բաց եղանակով մշակվող օգտակար հանածոների հանքավայրերի անվտանգ շահագործման տեխնիկական անվտանգության կանոնները սահմանելու մասին»,
- > ՀՀ կառավարության որոշումը «Օգտակար հանածոների ջարդման, տեսակավորման և հարստացման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին,
- > ՀՀ առողջապահության նախարարի հրամանը «Աշխատավայրում սանիտարական նորմերը հաստատելու մասին»,
- > ՀՀ կառավարության որոշումը «Էլեկտրականության շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին:

Այս որոշումները և կանոնակարգերը պահանջում են ԱԱԱ կառավարման կայուն համակարգի առկայություն, որը ներառում է, սակայն չի սահմանափակվում վերոնշյալ ցանկով:

Բացի օրենսդրության պահանջները բավարարելուց, ԶՊՄԿ-ի ԱԱԱ կառավարման համակարգը մշակված է նաև միջազգայնորեն ընդունված ստանդարտների և ուղեցույցների հիման վրա, ինչն ապահովում է համապատասխանությունը ռիսկերի կառավարման ոլորտում համաշխարհային լավագույն փորձին:



ԱԱԱ կառավարման համակարգի մշակման և ներդրման համար հիմք են ծառայել հետևյալ ստանդարտները և ուղեցույցները.

OHSAS 18001:2007

ստանդարտը հիմք է հանդիսանում Ընկերության ԱԱԱԿՀ-ի համար, որը հիմնականում ուղղված է ռիսկերի կառավարմանը, վտանգավոր գործոնների վերահսկմանը և օրենսդրության պահանջների հետ համապատասխանության ապահովմանը: Ստանդարտը նախատեսված է օգնելու կազմակերպություններին կառավարել

աշխատավայրում առողջության և անվտանգության ռիսկերը, ոչ թե կարգավորել արտադրանքի հետ կապված անվտանգության հարցերը: Աշխատանքի անվտանգության և առողջության կառավարման նկատմամբ իր մոտեցման պաշտոնականացման գործընթացը սկսելիս՝ ԶՊՄԿ-ն ընդունեց OHSAS 18001-ը որպես հիմնական ստանդարտ:

Ներկայումս ԱԱԱ կառավարման համակարգերի միջազգային ստանդարտ է հանդիսանում ISO 45001:2018-ը,

որը փոխարինել է OHSAS 18001-ին: Այն հիմնված է OHSAS 18001-ի սկզբունքների վրա, բայց առաջարկում է ավելի նախաձեռնողական, ռիսկի վրա հիմնված մոտեցում և համապատասխանեցված է կառավարման համակարգի այլ ISO ստանդարտներին (օրինակ՝ ISO 9001 և ISO 14001): Ընդունելով կատարելագործված համակարգի անցնելու կարևորությունը՝ ԶՊՄԿ-ն անցում կատարեց OHSAS 18001-ից ISO 45001-ի՝ ապահովելով շարունակական համապատասխանություն համաշխարհային

լավագույն գործելակերպին և ինտեգրված կառավարման ստանդարտներին: Այդ անցումն արտացոլում է աշխատանքի անվտանգության և առողջության ցուցանիշներն անընդհատ բարելավելու Ընկերության հանձնառությունը:

Ընկերության ԱԱԱԿՀ-ն հավաստագրվել է ISO 45001 ստանդարտով 2022թ-ին հավատարմագրված կազմակերպության կողմից և աուդիտ է անցնում տարեկան կտրվածքով՝ ստանդարտի պահանջների ճշգրիտ կիրառումն ապահովելու համար:

ILO-OSH 2001 ուղեցույցները

մշակել է Աշխատանքի միջազգային կազմակերպությունը՝ աշխատանքի անվտանգության և առողջության կառավարման արդյունավետ համակարգ ներդնելու գործում կազմակերպություններին աջակցելու համար: Այդ ուղեցույցներն օգնում են ձևավորել անվտանգության

և առողջության պահպանման կանխարգելիչ միջոցառումների մշակույթ և ապահովում են ճկուն համակարգ, որը կարող է հարմարեցվել կազմակերպության համատեքստին՝ նպաստելով աշխատավայրում առողջության և անվտանգության ցուցանիշների շարունակական բարելավմանը:

Այդ ստանդարտները և ուղեցույցները լայնորեն ճանաչված են՝ ապահովելով համապարփակ, պրակտիկ, ռիսկերի կանխարգելման և շարունակական կատարելագործման վրա կենտրոնացած ԱԱԱ կառավարման համակարգի առկայություն:

ԶՊՄԿ-ի ԱԱԱ կառավարման համակարգի շրջանակը

GRI 403-8

ԱԱԱ կառավարման համակարգի շրջանակն ընդգրկում է ԶՊՄԿ-ի գործունեության բոլոր ուղղությունները՝ ապահովելով համալիր և ինտեգրված մոտեցման կիրառում աշխատավայրում, անվտանգության ապահովման և առողջության պահպանման նկատմամբ: Այն վերաբերում է Ընկերության գործունեությունում ներգրավված աշխատողների բոլոր խմբերին՝ անկախ նրանց աշխատանքային կարգավիճակից կամ գործառույթից: Ներառում է լրիվ և ոչ լիարժեք դրույքով աշխատողներին, ժամանակավոր աշխատողներին, կապալառուներին և ենթակապալառուներին՝ ընդգրկելով բոլոր պաշտոնները, արտադրամասերում աշխատող օպերատիվ անձնակազմից մինչև գործադիր ղեկավարություն:

Համակարգն ընդգրկում է աշխատանքի անվտանգության և առողջության հետ կապված ռիսկեր առաջացնող գործունեության ամբողջ շրջանակը, որը ներառում է, բայց չի սահմանափակվում շինարարական և ենթակառուցվածքային աշխատանքներով, մարդատար և բեռնատար մեքենաների սպասարկմամբ ու վերանորոգմամբ, ներքին փոխադրումներով և լոգիստիկայով, ինչպես նաև տարբեր վարչական գործառույթներով: Գործունեության յուրաքանչյուր ոլորտ ենթակա է աշխատանքի անվտանգության և առողջության նույն սկզբունքներին, որոնք սահմանված են ԱԱԱ համակարգի շրջանակներում:

ԶՊՄԿ-ի աշխատողների թիվը ԱԱԱԿՀ-ում

	2023թ.		2024թ.	
	Մարդ	Մասնաբաժինը ԶՊՄԿ-ի աշխատողների ընդհանուր թվում (%)	Մարդ	Մասնաբաժինը ԶՊՄԿ-ի աշխատողների ընդհանուր թվում (%)
Ցուցանիշ				
ԶՊՄԿ-ի ԱԱԱԿՀ-ում ընդգրկված աշխատողների թիվը	4,487	96.2%	4,654	100%
ԶՊՄԿ-ի ԱԱԱԿՀ-ում ներքին աուդիտի մասնակից աշխատողների թիվ	≈3,634	≈78%	4,654	100%

ԶՊՄԿ-ի աշխատող չհանդիսացող անձանց (ենթակապալառուների) թիվը ԱԱԱԿՀ-ում

	2023թ.		2024թ.	
	Մարդ	Մասնաբաժինը ԶՊՄԿ-ի աշխատողների ընդհանուր թվում (%)	Մարդ	Մասնաբաժինը ԶՊՄԿ-ի աշխատողների ընդհանուր թվում (%)
Ցուցանիշ				
ԶՊՄԿ-ի ԱԱԱԿՀ-ում ընդգրկված աշխատող չհանդիսացող անձանց (ենթակապալառուների) թիվը	≈602	≈100%	2,900	≈100%
ԱԱԱԿՀ ԶՊՄԿ-ի աշխատող չհանդիսացող և ներքին աուդիտի մասնակից անձանց (ենթակապալառուների) թիվ	≈602	≈100%	2,900	≈100%

Ինչ վերաբերում է ֆիզիկական ծածկույթին՝ համակարգը ներդրված է բոլոր այն տարածքներում, որտեղ Ընկերությունն իրականացնում է իր գործունեությունը: Այն ներառում է պոչամբարը, պոչատար համակարգը, Գեղի ջրամբարը, բացահանքը՝ իր ենթակառուցվածքով, հարստացուցիչ ֆաբրիկան, հանքաքարի ջարդման և տեղափոխման արտադրամասը, տեխնիկական սպասարկման գոտիները, պահեստները և պահեստային տարածքները, ինչպես նաև վարչական շենքերը: Այն նաև ընդգրկում է մասնագիտացված տարածքները, այդ թվում՝ կարի արհեստանոցը, սպորտային-առողջարարական համալիրը և կապալառուների համար հատկացված գոտիները: Ընկերության հսկողության ներքո գտնվող ողջ գործառնական միջավայրն ինտեգրված է ԱԱԱԿՀ-ին՝ անվտանգության ընթացակարգերի միատեսակ կիրառումը և ռիսկերի շարունակական կառավարումն ապահովելու համար:

Նման համալիր մոտեցումը հնարավորություն է տալիս ԶՊՄԿ-ին ոչ միայն օրենսդրության պահանջներին հետևել, այլև իր գործելակերպը համապատասխանեցնել միջազգային ստանդարտներին և խթանել անվտանգության, հաշվետվողականության և շարունակական կատարելագործման մշակույթը գործունեության բոլոր ոլորտներում:

Ռիսկերի համապարփակ գնահատում և անվտանգության կառավարում. աշխատավայրում ակտիվ պաշտպանության և անվտանգության մակարդակի բարձրացում

GRI 3-3, 403-2

ԶՊՄԿ-ն կիրառում է «պլանավորել, իրականացնել, ստուգել, գործել» (PDCA) մոտեցումն իր ԱԱԱԿՀ-ն հետևողականորեն զարգացնելու համար: Այդ ինտերակտիվ մոտեցումը թույլ է տալիս ԶՊՄԿ-ին անընդհատ բարելավել անվտանգությունն աշխատավայրում, նվազեցնել ռիսկերը և խթանել նախաձեռնողական անվտանգության մշակույթը ողջ Ընկերությունում:

Պլանավորում

Ընկերությունը բացահայտում է առողջության և անվտանգության հետ կապված հնարավոր ռիսկերը և սահմանում է գնահատելի նպատակներ, ցուցանիշներ՝ աշխատավայրում պատահարները նվազեցնելու և ընդհանուր անվտանգության մշակույթը բարելավելու համար: Պլանավորումը ներառում է նաև քաղաքականությունների, ընթացակարգերի և ռիսկերի հսկողության ռազմավարությունների մշակում՝ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Իրականացում

Ընկերությունն իրականացնում է պլանավորված միջոցառումներ՝ ինտեգրելով անվտանգության ընթացակարգերն ամենօրյա աշխատանքում, անցկացնելով դասընթացներ և բարձրացնելով աշխատողների իրազեկվածության մակարդակը: Ընկերությունն ապահովում է պարտականությունների հստակ տարանջատում և անվտանգության հսկողության արդյունավետ մեխանիզմների ներդրում բոլոր ստորաբաժանումներում:

Ստուգում

Կանոնավոր իրականացվող ստուգումների, աուդիտների և պատահարների քննության միջոցով ԶՊՄԿ-ն վերահսկում է աշխատանքի անվտանգության և առողջության հետ կապված իր նախաձեռնությունների արդյունավետությունը: Արդյունավետության ցուցանիշները և համապատասխանության չափանիշներն ուսումնասիրվում են՝ նպատակների իրագործումը գնահատելու և հնարավոր բացթողումները բացահայտելու համար:

Գործողություն

Մոնիտորինգի արդյունքների հիման վրա Ընկերությունն իրականացնում է ուղղիչ և կանխարգելիչ գործողություններ՝ հայտնաբերված թերությունները կամ ի հայտ եկող ռիսկերը նվազեցնելու նպատակով: Պատահարներից և ստուգումներից ստացված փորձը օգտագործվում է հաջորդ պլանավորման փուլում՝ ապահովելով համակարգի զարգացումը՝ փոփոխվող պայմաններին և նոր գիտելիքներին համապատասխան:

Ռիսկերի գնահատման և վտանգավոր գործոնների բացահայտման ընթացակարգի շրջանակներում՝ Ընկերությունը նախկինում իրականացրել է վտանգավոր գործոնների բացահայտում և գնահատում ինչպես առօրյա, այնպես էլ ոչ առօրյա գործունեությունների համար: Միևնույն ժամանակ, իրականացվել են անվտանգության կանոնավոր ստուգումներ և դիտարկումներ՝ ամենօրյա աշխատանքի հետ կապված հնարավոր վտանգները բացահայտելու նպատակով: Այդ գործընթացները ներառում են անվտանգության համար պատասխանատու աշխատակիցների կազմած պլանային ստուգաթերթերը, ստուգման հաշվետվությունները և վտանգների ու ռիսկերի մասին հաշվետվությունները: Ոչ առօրյա գործունեության գնահատումները բացահայտվում են ոչ կանոնավոր կամ ժամանակավոր գործունեությունից, օրինակ՝ հատուկ նախագծերից, նոր սարքավորումներից կամ մեկանգամյա առաջադրանքներից ծագող վտանգները: Ռիսկերը գնահատվում են նախքան այդ առաջադրանքների կատարումը՝ հաշվի առնելով նոր վտանգները, որոնք կարող են առաջանալ անժամոթ պայմաններից, գործիքներից կամ ընթացակարգերից:

- ԶՊՄԿ-ում աշխատանքի հետ կապված վտանգներ, որոնք լուրջ հետևանքներով վնասվածք ստանալու ռիսկ են պարունակում.
- Վնասվածքի ռիսկ՝ չպաշտպանված հաստոցներից և սարքավորումներից, այդ թվում՝ փոխակրիչների ժապավեններից, մամլիչներից և այլ շարժական մասերից: Այս ռիսկը հատկապես բարձր է կողպեքավորման/ պիտակավորման ընթացակարգերը պատշաճ կերպով չիրականացնելու դեպքում:
- Վերջույթի ճգնման կամ կոտրման վտանգ՝ բաց կամ շարժվող մասեր ունեցող սարքավորումներից:
- Կյանքին սպառնացող վտանգ՝ բարձր լարման էլեկտրականությունից, մասնավորապես, էլեկտրատեխնիկական, շինարարության և տեխնիկական սպասարկման աշխատանքների ժամանակ:
- Ծանր վնասվածքի կամ մահվան մեծ ռիսկ բարձրության վրա աշխատելիս:
- Առողջությանը և անվտանգությանը սպառնացող ռիսկ՝ պարփակված տարածքներում (բաքեր, թունելներ կամ սիլոսներ), որոնք կարող են պարունակել թունավոր գազեր, թթվածնի ցածր մակարդակ կամ առաջացնել պարփակված մնալու վտանգ:



Համապատասխան դասընթացների, պաշտոնական հավաստագրման և կատարողականի կանոնավոր գնահատումների շնորհիվ ռիսկերի գնահատման համար պատասխանատու աշխատողները տիրապետում են պահանջվող մասնագիտական հմտություններին: Անվտանգության համար պատասխանատու աշխատողները և առանցքային անձնակազմի այլ անդամները որպես կանոն պետք է ունենան ճանաչված մասնագիտական որակավորում աշխատանքի անվտանգության և առողջության ոլորտում և մասնակցեն շարունակական մասնագիտական զարգացման ծրագրերին՝ լավագույն փորձին և օրենսդրական փոփոխություններին տեղյակ լինելու համար:

Վտանգավոր գործոնների բացահայտման և ռիսկերի գնահատման գործընթացների արդյունավետությունն ապահովելու համար Ընկերությունը կիրառում է վերահսկողության բազմաշերտ համակարգ, որը ներառում է համադրելի ընկերությունների

Մասնագիտական հիվանդություններ

GRI 403-9,430

2024թ-ին չի գրանցվել մասնագիտական հիվանդության կամ վտանգավոր միջավայրով պայմանավորված մահվան ելքով դեպք:

Դժբախտաբար, 2024թ-ին Ընկերությունում տեղի ունեցավ մահվան ելքով դժբախտ պատահար, որը ընդգծեց Ընկերության ողջ տարածքում անվտանգության մշակույթի լիարժեք ներդրման հետ կապված առկա մարտահրավերները: Դժբախտ պատահարը, որն ավելի մանրամասն նկարագրված է հաջորդ բաժիններում, վկայում է բոլոր մակարդակներում անվտանգության մասին իրազեկվածությունը բարձրացնելու և գործելակերպն ամրապնդելու համար շարունակական և ինտենսիվ միջոցառումների անհրաժեշտության մասին: Մենք ընդունում ենք, որ խորապես արմատավորված անվտանգության մշակույթի ձևավորումը դեռևս ընթացքի մեջ է և պարտավոր ենք ապահովել, որ այն դառնա Ընկերության ամենօրյա գործունեության և որոշումների կայացման գործընթացի անբաժանելի մասը²⁰:

Լայնամասշտաբ հանքարդյունաբերական գործունեություն իրականացնող Ընկերությունը, ենթարկում է իր աշխատողներին տարբեր մասնագիտական վտանգների, որոնք կարող են զգալի ռիսկեր առաջացնել առողջության համար: Դրանք են.

- ուսումնասիրությունը, կառավարման գնահատումները, ներքին և արտաքին աուդիտները: Անվտանգության աուդիտները և ստուգումները կարևոր դեր են խաղում որակի վերահսկողության և գնահատման մեթոդների պատշաճ կիրառումը ստուգելու գործում:
- Ընկերության ղեկավարությունը պարբերաբար ուսումնասիրում է վտանգավոր գործոնների բացահայտման և ռիսկերի գնահատման արդյունքները: Այդ հետադարձ կապի մեխանիզմը թույլ է տալիս Ընկերությանը բացահայտել միտումները, հայտնաբերել բացթողումները և բարելավել պահանջող ոլորտները ԱԱԱ կառավարման համակարգի շրջանակում: Անվտանգության հարցերին վերաբերող կանոնավոր հանդիպումները և հաշվետվողականության մեխանիզմները հնարավորություն են տալիս ուսումնասիրել անվտանգության արձանագրությունները և ընթացակարգերը, կատարել անհրաժեշտ ճշգրտումներ:
- > ֆիզիկական վտանգը, օրինակ՝ չափազանց բարձր աղմուկը, ձայնային տատանումները, ծայրահեղ ջերմաստիճանը (ինչպես բարձր, այնպես էլ ցածր), սալթաքելու, ընկնելու և ճառագայթման ռիսկը,
 - > քիմիական վտանգը (թունավոր նյութեր, փոշի, ծուխ, գոլորշիներ և տարբեր քիմիական նյութեր, որոնք օգտագործվում կամ առաջանում են աշխատանքի ընթացքում),
 - > մեխանիկական վտանգը, որն առաջանում է շարժվող մեքենաներից և սարքավորումների պտտվող մասերից,
 - > աշխատանքային միջավայրի վտանգը՝ ներառյալ ոչ բավարար օդափոխությունը, կարգուկանոնի պակասը, սահմանափակ աշխատանքային տարածքը և փակ տարածքները,
 - > հոգեցնցիկական ռիսկերը, այդ թվում՝ քրոնիկ սթրեսը, երկար հերթափոխների պատճառով հոգնածությունը, հանգստի համար ոչ բավարար ընդմիջումները և աշխատանքային ծանրաբեռնվածությունը:

²⁰ 2024թ-ին ԶՊՄԿ-ի աշխատող չհանդիսացող անձանց մահվան դեպք չի գրանցվել:

1. ԶՊՄԿ-ի մասին
2. Տնտեսական ազդեցություն
3. Կորպորատիվ կառավարում
4. ԶՊՄԿ-ի աշխատողները
5. Բարեկեցության և կայունության ապահովում աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման մշակույթի ձևավորման միջոցով
6. Տեղական համայնքներ
7. Շրջակա միջավայրի պահպանություն և կայունություն
8. Կլիմայի փոփոխություն
9. Հավելվածներ

Աշխատողների ներգրավվածությունը և անվտանգ աշխատանքային միջավայրում աշխատելու իրավունքը

GRI 403-4

ԶՊՄԿ-ում աշխատողներին խրախուսում են ակտիվորեն մասնակցել անվտանգ աշխատանքային միջավայր պահպանելու գործընթացին՝ վտանգների մասին հաղորդելով Ընկերությունում հասանելի կապի բազմաթիվ միջոցներով: Հաղորդակցման ուղիներն են՝ առաջարկությունների արկղը, անմիջական կապը ղեկավարի և անվտանգության համար պատասխանատու աշխատողի հետ և, անհրաժեշտության դեպքում, անանուն տեղեկացման հնարավորությունը: Հաղորդակցման բոլոր մեխանիզմները պարզ, գաղտնի և միշտ հասանելի են, այդ թվում՝ ոչ աշխատանքային ժամերին:

Վտանգների մասին հաղորդելու հստակ ուղեցույցները տեղադրված են տեսանելի վայրում, և աշխատողները պարբերաբար իրազեկվում են դրանց մասին: Այդ տեղեկատվությունը հաղորդվում է բազմաթիվ միջոցներով, ներառյալ հայտարարությունների համար նախատեսված վահանակները, տախտակները, պորտալները և անվտանգությանը վերաբերող տեղեկատվական հանդիպումները: Ընկերությունն օգտագործում է տարբեր հարթակներ, ներառյալ հանդիպումները, թվային հարթակները և տպագիր նյութերը՝ առողջության և անվտանգության ընթացակարգերի թարմացումները ու փոփոխությունները ներկայացնելու համար: Այդ մեթոդները ապահովում են բոլոր աշխատողների, այդ թվում՝ Ընկերությունում ուղղակիորեն չաշխատողներին, տեղեկացված լինել անվտանգության ռիսկերի և միջոցառումների մասին:

Վստահության և թափանցիկության մշակույթի ձևավորումը խթանելու համար Ընկերությունը կիրառում է Աշխատավայրում բռնության, ոտնձգությունների, խտրականության և հաշվեհարդարի դեմ պայքարի քաղաքականություն: Քաղաքականությունը հնարավորություն է տալիս բոլոր աշխատողներին հաղորդել վտանգավոր պայմանների մասին՝ առանց կարգապահական պատասխանատվության ենթարկվելու, աշխատանքից ազատվելու կամ որևէ այլ հետևանքների վախի: Պահպանվում է վտանգի մասին հաղորդած աշխատողի բոլոր անձնական տվյալների գաղտնիությունը՝ ապահովելով աշխատողների պաշտպանվածությունը և խրախուսելով նախաձեռնողական ներգրավվածությունը:

Մարդու կյանքը և առողջությունը Ընկերության բարձրագույն արժեքներն են, ինչն արտացոլված է Ընկերության քաղաքականությունում և գործելակերպում: Աշխատողները հստակորեն տեղեկացված են աշխատանքը դադարեցնելու իրենց իրավունքի մասին, եթե գտնում են, որ աշխատանքը շարունակելը կարող է հանգեցնել վնասվածքի կամ հիվանդության: Այդ իրավունքն ամրագրված է Ընկերության առողջության և անվտանգության ընթացակարգերում, և աշխատողները կանոնավոր իրազեկվում են այդ մասին տարբեր միջոցներով, այդ թվում՝ ներածական հրահանգավորումների, անվտանգությանը վերաբերող տեղեկատվական հանդիպումների, դասընթացների, պաստառների, թիմային հանդիպումների ընթացքում և տեղեկատվական վահանակների միջոցով:

Երբ աշխատողներն օգտվում են այդ իրավունքից, ակնկալվում է, որ նրանք անհապաղ կտեղեկացնեն իրավիճակի մասին իրենց անմիջական ղեկավարին կամ անվտանգության համար պատասխանատու աշխատողին: Ընկերությունը առաջնահերթ է համարում նման հաղորդագրությունները՝ սկսելով մանրակրկիտ հետաքննություն, ռիսկը գնահատելու և համապատասխան ուղղիչ գործողություններ ձեռնարկելու համար: Աշխատողները, ովքեր հրաժարվում են աշխատել վտանգավոր պայմաններում, լիովին պաշտպանված են, նրանց տրամադրվում է աշխատանքը պահպանելու և կարգապահական պատասխանատվության չենթարկվելու երաշխիք իրենց անվտանգությունն առաջնահերթ համարելու համար:

Ամենօրյա ստուգումները ԱԱԱ կառավարման համակարգում աշխատողների մասնակցությունն ապահովող հիմնական մեխանիզմն են, որոնք թույլ են տալիս աշխատողներին հայտնել իրենց կարծիքը առողջության և անվտանգության հարցերի վերաբերյալ: Այդ ստուգումների հիման վրա Ընկերության բարձրաստիճան ղեկավարության համար պատրաստվում են շաբաթական պրեզենտացիաներ՝ նրանց իրազեկելով առողջության և անվտանգության ոլորտի ընթացիկ խնդիրներին և համապատասխան միջոցառումների ձեռնարկմանը, դրանք որոշակի ժամանակահատվածում լուծելու համար:

Պատահարների և միջադեպերի հետաքննություն

ԶՊՄԿ-ն պատահարների և միջադեպերի հետաքննությունը համարում է անվտանգ աշխատանքային միջավայր

ապահովելու իր շարունակական գործողությունների կարևորագույն տարր: Ընկերությունը այդ

հետաքննությունները համարում է հիմնական պատճառները հայտնաբերելու, ապագա միջադեպերից հնարավորինս խուսափելու և անվտանգության ընթացակարգերն ամրապնդելու առանցքային գործիք: Առաջնորդվելով պատահարների մասին հաղորդելու և դրանք հետաքննելու չափանիշները սահմանող հաստատված ընթացակարգով՝ Ընկերությունը որոշում և իրականացնում է ուղղիչ գործողություններ ռիսկերը վերացնելու և անվտանգություն ապահովող իր միջոցառումների արդյունավետությունը բարձրացնելու համար:

Այդ գործընթացին աջակցելու համար, ինչպես նշված է 2023թ. հաշվետվությունում, մենք կիրառում ենք Միջադեպերի պատճառների վերլուծության մեթոդը (ՄՊՎՄ)՝ կառուցվածքային մեթոդաբանություն, որը նախատեսված է միջադեպերի պատճառները հայտնաբերելու և ոչ միայն

ուղղակի կամ տեսանելի արդյունքների վրա կենտրոնանալու համար: ՄՊՎՄ-ն հնարավորություն է տալիս համալիր կերպով ուսումնասիրել միջադեպերին նպաստող գործոնները՝ ներառյալ մարդկային գործոնով պայմանավորված սխալները, համակարգի խափանումները և միջադեպին հանգեցրած իրադարձությունների հաջորդականությունը: Այդ մանրակրկիտ վերլուծությունն Ընկերությանը տրամադրում է էական կազմակերպչական թերությունները վերացնելու համար անհրաժեշտ տեղեկատվություն:

ՄՊՎՄ-ի միջոցով Ընկերությունն իր հետաքննությունների արդյունքում հանգում է հիմնավորված եզրակացությունների և իրականացնում է պրակտիկ ուղղիչ գործողություններ, որոնք օգնում են կանխել դեպքերի կրկնությունը և նպաստում են ԱԱԱԿԸ-ի շարունակական կատարելագործմանը:

Վերահսկողական միջոցառումների ամրապնդում

Ինչպես նշված էր 2023թ. Կայուն զարգացման հաշվետվությունում, Ընկերությունը վերահաստատել է իր հանձնառությունը՝ ուղղված աշխատավայրում անվտանգության ամրապնդմանը՝ ներդնելով խստացված միջոցառումներ թմրանյութերի և ալկոհոլի օգտագործմամբ պայմանավորված ռիսկերը վերահսկելու և նվազեցնելու նպատակով: Այդ միջոցառման առանցքային բաղադրիչն ալկոհոլի թեստավորման սարքերի պլանավորված տեղադրումն էր ԶՊՄԿ-ի հիմնական օբյեկտների մուտքերում՝ ալկոհոլի օգտագործման հետ կապված վտանգները վերացնելու համար:

Այսօր, Ընկերությունն արդեն իսկ իրականացնում է ալկոհոլի կանոնավոր թեստեր տարբեր արտադրական օբյեկտներում՝ օգտագործելով շարժական ալկոթեստեր: Այդ թեստերն իրականացվում են շաբաթական երեքից չորս անգամ և արդեն երկար ժամանակ է, ինչ դարձել են Ընկերության անվտանգության ապահովման միջոցառումների անբաժանելի մասը: Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունում գրանցվել է աշխատավայրում ալկոհոլի օգտագործման 18 դեպք: Այժմ իրականացվում է համապատասխան մոնիտորինգ, որն արձանագրում է այդ ցուցանիշների հավանական նվազում, մասնավորապես 2025թ. 3-րդ եռամսյակի դրությամբ գրանցվել է խախտումների 3 դեպք:

Անվտանգությունն ապահովող միջոցառումների արդյունավետության ցուցանիշներ

GRI 403-9, SASB EM-MM-320a,EM-MM-320a.1

ԶՊՄԿ-ն շարունակում է հանձնառու մնալ իր աշխատողների և աշխատանքային միջավայրի անվտանգության ապահովմանը՝ շարունակաբար վերահսկելով և կառավարելով առողջության

և անվտանգության հետ կապված ռիսկերը, ապահովելով համապատասխանություն աշխատանքի առողջության և անվտանգության ոլորտի ստանդարտներին:

1. ԶՊՄԿ-ի մասին
2. Տնտեսական ազդեցություն
3. Կորպորատիվ կառավարում
4. ԶՊՄԿ-ի աշխատողները
5. Բարեկեցության և կայունության ապահովում աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման մշակույթի ձևավորման միջոցով

6. Տեղական համայնքներ
7. Շրջակա միջավայրի պահպանություն և կայունություն
8. Կլիմայի փոփոխություն
9. Հավելվածներ

2024թ-ին գրանցվել են անվտանգությունն ապահովող միջոցառումների արդյունավետության հետևյալ ցուցանիշները .

Վնասվածքների ցուցանիշներ (ԶՊՄԿ-ի աշխատողներ)²¹

Ցուցանիշ	2023թ.	2024թ.
ԶՊՄԿ-ի գործունեությամբ պայմանավորված մահվան դեպքերի թիվ	0.00	1.00
ԶՊՄԿ-ի գործունեությամբ պայմանավորված մահվան դեպքերի ցուցանիշ (%)	0.00	0.12
ԶՊՄԿ-ի գործունեությամբ պայմանավորված ծանր վնասվածքների (բացառությամբ մահվան դեպքերի) թիվ	6.00 ²²	5.00
ԶՊՄԿ-ի գործունեությամբ պայմանավորված ծանր վնասվածքների ցուցանիշ (%)	0.75 ²²	0.62
Ժամանակավոր անաշխատունակության կորստի հանգեցնող վնասվածքների թիվ	11.00	10
Ժամանակավոր անաշխատունակության կորստի հանգեցնող վնասվածքների հաճախականություն (%)	1.40	1.25
Աշխատաժամերի ընդհանուր քանակ (մարդ/ժամ)	8,009,520	7,983,472
Յուրաքանչյուր հաշվետու տարում արձանագրված աշխատանքային վնասվածքների հիմնական տեսակներ		
Վայր ընկնել, կոտրվածքներ (բաց և փակ), պատռված վերքեր, կտրած վերքեր, քերծվածքներ, սալջարդեր և բուք առարկայով հասցված վնասվածքներ		

Վնասվածքների ցուցանիշներ (կապալառուների աշխատողներ)

Ցուցանիշ	2023թ.	2024թ.
ԶՊՄԿ-ի գործունեությամբ պայմանավորված մահվան դեպքերի թիվ	-	-
ԶՊՄԿ-ի գործունեությամբ պայմանավորված մահվան դեպքերի ցուցանիշ (%)	-	-
ԶՊՄԿ-ի գործունեությամբ պայմանավորված ծանր վնասվածքների (բացառությամբ մահվան դեպքերի) թիվ	-	1
ԶՊՄԿ-ի գործունեությամբ պայմանավորված ծանր վնասվածքների ցուցանիշ (%)	-	0.23
Ժամանակավոր անաշխատունակության կորստի հանգեցնող վնասվածքների թիվ	2	2
Ժամանակավոր անաշխատունակության կորստի հանգեցնող վնասվածքների հաճախականություն (%)	0.73 ²²	0.47
Աշխատաժամերի ընդհանուր քանակ (մարդ/ժամ)	≈ 2,719,080	≈ 4,176,000

Հաշվետու ժամանակաշրջանում ԶՊՄԿ-ում գրանցվել է մահվան ելքով մեկ դժբախտ պատահար:

2024թ. օգոստոսի 2-ին կենտրոնական պահեստում բեռնման աշխատանքների ժամանակ (Կապանի բազա) տեղի է ունեցել դժբախտ պատահար՝ բեռնակիր տեխնիկայի շահագործման ընթացքում: Աշխատանքներն իրականացվում էին հիմնական մուտքի մոտ, որտեղ գետինն անհարթ էր: Բեռը վերադասավորելիս կռունկը սկսել է ճոճվել (նաև՝ գետնի անհարթության պատճառով), որի հետևանքով բեռնաբռնիչը սահել է և բեռնամբարձիչը շրջվել է: Բեռնատար կռունկի օպերատորը, որի ամրագրտին ամրակապված չէր, դուրս է ընկել խցիկից և

հայտնվել մեքենայի տակ՝ սեղմված վիճակում: Կանչվել է շտապօգնություն, և տեղամասի բուժքույրը ցուցաբերել է առաջին բուժօգնություն: Տուժածը տեղափոխվել է Կապանի բժշկական կենտրոն, որի վերակենդանացման բաժանմունքում արձանագրվել է նրա մահը:

Այդ պատահարը կրկին անգամ ընդգծում է անվտանգության ապահովման խիստ միջոցառումների անհրաժեշտությունը՝ աշխատանքային անվտանգության կանոնակարգերին համապատասխան:

²¹ Դրույքները հաշվարկվել են աշխատած 1,000,000 ժամի հիման վրա:

²² 2023թ. տվյալները վերահաշվարկվել են տվյալների ուղղման արդյունքում:

Պատահարից հետո ԶՊՄԿ-ն իրականացրել է մանրակրկիտ հետաքննություն և ձեռնարկել է ուղղիչ գործողություններ ապագայում հնարավոր դժբախտ պատահարները կանխարգելելու և աշխատանքային անվտանգության կանոնակարգերի հետ համապատասխանություն ապահովելու համար՝ ներառյալ հետևյալ .

1

Բեռնաբարձիչ մեքենաները կարող են շահագործել միայն հատուկ թույլտվություն ունեցող աշխատողները:

2

Աշխատանքը սկսելուց առաջ պետք է իրականացվի ռիսկերի գնահատում:

3

Արգելվում է ոչ անվտանգ սարքավորումների օգտագործումը և պարտադրվում է անհատական պաշտպանության միջոցների (սաղավարտ, բաճկոն, մետաղյա պաշտպանիչ առաջամասով կոշիկներ և այլն) օգտագործումը:

4

Մասնագիտությունների համար տրված որակավորման վկայականների վավերականությունը պետք է խստիվ վերահսկվի:

5

Հարթեցնել անհարթ աշխատանքային մակերեսները Կապանի բազայի տեղամասում՝ անվտանգ աշխատանքային պայմաններ ապահովելու համար:

6

Իրականացնել ոչ պլանային ուսումնասիրություն՝ վտանգավոր գործոնները հայտնաբերելու նպատակով, ինչպես նաև ռիսկերի գնահատում պատահարի տեղամասում:

Անվտանգության մշակույթի ներդրումը մեր աշխատողների գործունեության բոլոր ոլորտներում շարունակում է մնալ մարտահրավեր, այնուամենայնիվ, ԶՊՄԿ-ն հանձնառու է շարունակել այդ նպատակի իրագործումը՝ շարունակական ուսուցման և հաղորդակցության միջոցով:

Մազապուրծ դեպք²³

Անվտանգության պահանջների մասին իրազեկվածության մշակույթի ձևավորումը խթանելու նպատակով՝ Ընկերությունը մեծապես կարևորում է պոտենցիալ վտանգավոր միջադեպերի հայտնաբերումը և դրանց մասին տեղեկացումը: Աշխատողները խրախուսվում են հաղորդել այդպիսի միջադեպերի մասին բազմաթիվ միջոցներով՝ ներառյալ հատուկ ձևաթղթերը, անվտանգությանը վերաբերող տեղեկատվական հանդիպումները և

թվային գործիքները: Բացի այդ, իրականացվում են անվտանգության կանոնավոր աուդիտներ և ստուգումներ՝ չբացահայտված պոտենցիալ վտանգավոր միջադեպերը հայտնաբերելու համար: Այդ գործընթացին աջակցելու համար Ընկերության արտադրամասերում և շենքերում հասանելի է թեժ գիծ՝ 041 004 014:

2024թ. ընթացքում պոտենցիալ վտանգավոր միջադեպեր չեն գրանցվել:

²³ Մազապուրծ դեպքերը իրադարձություններ են, որոնք կարող էին հանգեցնել դժբախտ պատահարի կամ վնասվածքի, բայց չեն հանգեցրել: Դրանք դասակարգվում են ըստ ծանրության, հաճախականության և ռիսկի մակարդակի և խմբավորվում են ըստ վտանգի կամ գործունեության տեսակի, օրինակ՝ մեխանիկական անսարքություններ, մարդկային գործոնով պայմանավորված սխալ կամ շրջակա միջավայրի գործոններ:

Աշխատանքի անվտանգության ամրապնդում. աշխատավայրում առողջության պահպանման որակյալ ծառայությունների ապահովում վտանգների կանխարգելման և ռիսկերի նվազեցման համար

GRI 403-3

ԱԱԱԼ ծառայությունները կարևոր դեր են խաղում աշխատանքային վայրի վտանգներն ու ռիսկերը հայտնաբերելու, վերացնելու և նվազեցնելու գործում: Այդ ծառայությունները նախատեսված են աշխատողների առողջությունը պահպանելու, անվտանգությունը և ընդհանուր բարեկեցությունն ապահովելու համար՝ միաժամանակ խթանելով արդյունավետ աշխատանքային միջավայրի ձևավորումը: Ստորև ներկայացված է, թե ինչպես են այդ ծառայությունները նպաստում վտանգավոր գործոնների հայտնաբերմանը և ռիսկերի նվազեցմանը և ինչպես է Ընկերությունն ապահովում որակյալ ծառայությունների մատուցումը և դրանց հասանելիությունն աշխատողների համար:

ԱԱԱԼ բաժնի մասնագետները իրականացնում են կանոնավոր գնահատումներ աշխատավայրում ֆիզիկական, մեխանիկական, քիմիական, կենսաբանական և էրգոնոմիկ վտանգները հայտնաբերելու համար: Ռիսկերը գնահատվում են հայտնաբերված վտանգների հետ կապված ռիսկերի հավանականությունը և լրջությունը գնահատելու համար, ինչը հնարավորություն է տալիս սահմանել միջամտությունների առաջնահերթությունը՝ կախված վնասի առաջացման հնարավորությունից: Այդ գնահատումները ներառում են աշխատավայրի ստուգումներ՝ էլեկտրամագնիսական կանոնների ու հրդեհային անվտանգության պահպանման, օդի որակի մոնիտորինգի, աղմուկի մակարդակի ստուգման, աղտոտման կամ վնասվածքի հնարավոր աղբյուրների հայտնաբերման, արտադրամասերի ֆիզիկական վիճակի, աշխատողների սանիտարական պայմանների և մեքենաների ու սարքավորումների շահագործման անվտանգության տեսանկյունից:

Վտանգավոր գործոնների հայտնաբերման և ռիսկերի գնահատման գործընթացներում Ընկերությունը հաճախ անմիջականորեն ներգրավում է հանքարդյունաբերության ոլորտում գործական փորձ ունեցող աշխատողներին: Նրանց փորձառությունն ու գիտելիքներն անփոխարինելի են այդ ռիսկերը հայտնաբերելու գործում, որոնք կարող են տեսանելի չլինել ավելի բարձր մակարդակի ղեկավարների համար:

Ռիսկերի գնահատումը սկսվում է ամենօրյա ստուգումներից, որոնց ընթացքում փաստաթղթավորվում են հայտնաբերված վտանգները,

որոշվում է ռիսկի սկզբնական մակարդակը և առաջարկվում են ուղղիչ գործողություններ՝ համաձայն ռիսկերի կառավարման աստիճանակարգի:

ԶՊՄԿ-ն համակարգված մշակում և իրականացնում է վարչական հսկողություն, որը ներառում է անվտանգության արձանագրությունները, գործառնական ընթացակարգերը և աշխատանքային գրաֆիկները: Դրանք նախատեսված են վտանգներին ենթարկվելու հնարավորությունը նվազագույնի հասցնելու համար: Օրինակ, աշխատողները կարող են աշխատել հերթափոխով բարձր ռիսկային գոտիներում՝ հոգնածությունը կամ երկարատև բացասական ազդեցությունը նվազեցնելու համար: Ռիսկերի վերահսկման միջոցառումները կարող են նաև ներառել անվտանգության արգելապատնեշների տեղադրում կամ փոփոխություններ աշխատանքային գործընթացներում:

Անհատական պաշտպանության միջոցները (ԱՊՄ) պաշտպանության կարևոր շերտ են հանդիսանում մնացորդային ռիսկերից պաշտպանվելու գործում: Մենք տրամադրում ենք համապատասխան անհատական պաշտպանության միջոցներ, այդ թվում՝ մետաղյա պաշտպանիչ առաջամասով կոշիկներ, սաղավարտներ, ձեռնոցներ, ակնոցներ, շնչառական դիմակներ ու պաշտպանիչ հագուստ և խստորեն պահանջում դրանց օգտագործումը՝ վտանգավոր միջավայրում աշխատողներին պաշտպանելու համար:

Թեև վտանգավոր գործոնների հայտնաբերման և ռիսկերի նվազեցման միջոցառումների արդյունավետության գնահատման պաշտոնական գրաֆիկ դեռևս չի սահմանվել, իրականացվում են արտադրական տարածքների ամենօրյա ստուգումներ: Այդ ստուգումների միջոցով առողջապահության պահպանման և անվտանգության համար պատասխանատու թիմը փաստաթղթավորում և ուսումնասիրում է հայտնաբերված ռիսկերն ու վտանգները՝ հիմնվելով նախնական դիտարկումների և ուղղիչ գործողությունների վրա: Այդ շարունակական գործընթացը ծառայում է որպես ոչ պաշտոնական համակարգ՝ կրկնվող խնդիրները հայտնաբերելու, ակնհայտ վտանգներին արագ արձագանքելու և վտանգների վերահսկմանն ուղղված միջոցառումների ընդհանուր արդյունավետությունը գնահատելու համար:

Առողջության պահպանմանը և անվտանգությանը վերաբերող դասընթացներ. անվտանգության ապահովում աշխատավայրում ուսուցման և իրազեկման միջոցով

GRI 403-5, SASB EM-MM-320a.1.

ԶՊՄԿ-ն ընդունում է, որ առողջության պահպանման և անվտանգության վերաբերյալ դասընթացներն աշխատանքի անվտանգության և առողջության կառավարման արդյունավետ համակարգի առանցքային տարրն են: Այդ դասընթացները կարևոր դեր են խաղում աշխատողների անվտանգության և բարեկեցության, ինչպես նաև առողջության և անվտանգության ոլորտում Ընկերության նախաձեռնությունների ընդհանուր հաջողության ապահովման գործում: Առողջության պահպանման և անվտանգության վերաբերյալ դասընթացների նպատակն է ապահովել աշխատողներին անհրաժեշտ բազային գիտելիքներով և գործնական հմտություններով, որոնք անհրաժեշտ են աշխատավայրում անձնական

անվտանգությունը և գործընկերների անվտանգությունը պահպանելու համար:

Դասընթացները համակարգվում են արտադրամասերի ղեկավարների հետ համատեղ: Գործընթացը սկսվում է դասընթացների կարիքների գնահատմամբ՝ պարզելու համար, թե որ արտադրամասերը և աշխատողների որ խմբերը դասընթացների կարիք ունեն, ինչպես նաև մասնակիցների թիվը և դասընթացների տևողությունը: Արտադրամասերի ղեկավարներին ուղարկվում է պաշտոնական գրավոր ծանուցում, որտեղ նշվում են դասընթացի ամսաթիվը, մասնակիցների ցուցակը, վայրը և դասընթացի տևողությունը:



Ուսումնական ծրագիրը ներառում է հետևյալ չորս դասընթացները.

Աշխատանքի անվտանգության և առողջության վերաբերյալ ընդհանուր դասընթաց

որը ներկայացնում է Ընկերության անվտանգության քաղաքականությունը, ելքերը արտադրամասից արտակարգ իրավիճակների դեպքում, տարհանման ընթացակարգերը, անվտանգության հիմնական կանոնները և համապատասխան ԱՊՄ-ների՝ սաղավարտների, ձեռնոցների, ակնոցների և լսողության պաշտպանիչների ընտրությունը և օգտագործումը:

Աշխատանքի հետ կապված բարձր վտանգավորության դասընթաց

որն անդրադառնում է հրդեհային անվտանգությանը (հրդեհի բռնկման վտանգի հայտնաբերում և հրդեհաշիջման միջոցների ճիշտ օգտագործում), քիմիական նյութերի հետ աշխատանքի անվտանգությունը, էլեկտրաանվտանգության կանոններին և աշխատանքային պայմաններին, օրինակ՝ աղմուկին և ձայնային տատանումներին վերաբերող հարցերին:

Վտանգավոր գործունեության վերաբերյալ դասընթաց

որը ներառում է բարձրության վրա աշխատանքը (սանդուղքների, կառույցների, փայտամածների, հարթակների և ընկնելուց պաշտպանող ամրագոտիների անվտանգ օգտագործում), պարփակված տարածքներում աշխատանքը, առասանման, բեռնման և բեռնաթափման աշխատանքները, ինչպես նաև ծանր հանքարդյունաբերական սարքավորումների շահագործումը:

Վտանգավոր իրավիճակների վերաբերյալ դասընթացին

աշխատողները սովորում են, թե ինչպես պետք է արձագանքել արտակարգ իրավիճակներին, մասնավորապես, ինչ քայլեր պետք է ձեռնարկել հրդեհների, պայթյունների, բնական աղետների կամ աշխատավայրին հատուկ այլ արտակարգ իրավիճակների դեպքում:

2024թ-ին ԶՊՄԿ-ն շարունակեց ամրապնդել աշխատանքի անվտանգության ապահովման և առողջության պահպանման իր հանձնառությունն Առողջության և աշխատանքի անվտանգության բաժնի կողմից իրականացվող համապարփակ ուսումնական ծրագրի միջոցով: Դասընթացները ներառեցին բարձր ռիսկային և տեխնիկական գործունեության լայն շրջանակ, այդ թվում՝ բարձրության վրա աշխատանքը, առասանման աշխատանքները, աշխատանքը պարփակված տարածքում, հրդեհաշիջումը, բեռնաբարձիչ մեքենաների շահագործումը, պայթեցումները և անվտանգության ընդհանուր ընթացակարգերը:

Տարվա ընթացքում մոտ 3500 աշխատող մասնակցել է աշխատանքի անվտանգությանը վերաբերող տարբեր դասընթացներին: Միջինում յուրաքանչյուր աշխատող

անցել է 30 ժամյա ուսուցում, որի նպատակն էր ապահովել անվտանգության տեխնիկայի կարևոր կանոնների լավ իմացություն: Այդ համալիր մոտեցումը կարևոր նշանակություն ունի լավ տեղեկացված և ակտիվորեն ներգրավված աշխատուժ ունենալու համար, որը կարող է պահպանել անվտանգ և առողջ աշխատանքային միջավայր:

Բացի աշխատանքի անվտանգության և առողջության վերաբերյալ պարտադիր դասընթացի, որին մասնակցում են բոլոր աշխատողները, ԶՊՄԿ-ն իրականացնում է մի շարք նախաձեռնություններ, որոնք ուղղված են Ընկերության բոլոր մակարդակներում անվտանգ վարքագծի ամրապնդմանը: Այդ նախաձեռնությունները ներառում են աշխատանքի անվտանգության վերաբերյալ հրահանգները, անվտանգության հարցերի շուրջ

քննարկումները և մասնագիտացված ուսումնական մոդուլները, որոնք մշակված են գործառնական կոնկրետ ռիսկերը վերացնելու համար:

Որոշ աշխատողներ, օրինակ՝ ՀՀ օրենսդրության համաձայն, եռակցողները, առասանողները և էլեկտրիկները, պետք է անցնեն տարեկան ատեստավորում: Ընկերությունն աջակցում է այդ գործընթացին աշխատանքի անվտանգությանը և առողջությանը վերաբերող հատուկ հրահանգների միջոցով, որոնք մշակված են հաշվի առնելով այդ դերերից յուրաքանչյուրին բնորոշ ռիսկերը: Այդ միջոցառումներն ապահովում են օրենսդրության պահանջների ոչ միայն

կատարումը, այլև գերակատարումը՝ գործնական և ռիսկերին վերաբերող հատուկ դասընթացների միջոցով:

Անվտանգության կանոններին առնչվող ինչպես ընդհանուր, այնպես էլ յուրաքանչյուր աշխատատեղին համապատասխանեցված դասընթացների միջոցով ԶՊՄԿ-ն զգալիորեն նվազեցնում է աշխատավայրում դժբախտ պատահարների, վնասվածքների և մասնագիտական հիվանդությունների ռիսկը՝ նպաստելով բոլոր աշխատողների համար առավել անվտանգ և կայուն աշխատանքային միջավայրի ստեղծմանը:



Մասնագիտացված դասընթացներ

Դասընթաց	Մասնակիցների թիվ (2023թ.)	Մասնակիցների թիվ (2024թ.)
Աշխատանքի անվտանգության և առողջության վերաբերյալ ընդհանուր դասընթաց նոր և նոր պարտականություններ ստանձնած աշխատողների համար	478	593
Աշխատանք բարձրության վրա	379	354
Առասանողներ	418	455
Աշխատանք պարփակված տարածքներում	195	181
Հրդեհաշիջում	161	184
Բեռնաբարձիչ մեքենաները շահագործող օպերատորների քննություն, որակավորում և վերատեստավորում	129	134
Պայթեցնողների քննություն, որակավորում և նախնական վերատեստավորում	34	36
Եռակցողներ	-	97
Օպերատորների՝ ճնշման տակ գտնվող տարաների և ճնշման տակ աշխատող սարքավորումների անվտանգ շահագործման համար անհրաժեշտ գիտելիքների ստուգում, որակավորում և վերաորակավորում	-	66
Անվտանգ վարում	-	179
Հերթափոխի վարպետների վերապատրաստում	146	152

Բազմակողմանի աջակցություն առողջության և անվտանգության ոլորտում. բարեկեցության ապահովում բժշկական ծառայությունները հասանելի դարձնելու միջոցով

GRI 403-6



ԶՊՄԿ-ի նպատակն է պահպանել իր աշխատողների առողջությունը և բարեկեցությունը՝ տեղում տրամադրելով բժշկական ծառայությունների լայն շրջանակ, առողջապահական աջակցություն և բժշկական ծառայություններ մատուցող արտաքին հաստատությունների հետ համագործակցության միջոցով: Ընկերությունը համագործակցում է Կապանի և Քաջարանի բժշկական կենտրոնների հետ և կնքել է կոլեկտիվ պայմանագիր ապահովագրական ընկերության հետ բոլոր աշխատողներին և նրանց ընտանիքի անդամներին ապահովագրելու համար: Այդ գործընկերությունը թույլ է տալիս աշխատողներին օգտվել իրենց աշխատանքին չառնչվող բժշկական ծառայություններից, այդ թվում՝ անցնել ընդհանուր բժշկական զննում, ստանալ հոգեկան առողջության աջակցության ծառայություններ, կանխարգելիչ բուժօգնություն և ուղեգրեր մասնագետներին այցելելու համար:

Բացի այդ, բժշկական ծառայությունների բաժնի թիվը համակարգում է լրացուցիչ աջակցություն այն դեպքերի համար, որոնք ներառված չեն ապահովագրական փաթեթում: Աշխատողներին և նրանց ընտանիքների անդամներին տրամադրված բժշկական ծառայությունների լրացուցիչ ծախսերը վճարում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամը:

Ընկերության տարածքում գործում է առաջին բուժօգնության տասնչորս կետ՝ վնասվածք ստացած կամ հիվանդ աշխատողներին անհապաղ բժշկական օգնություն ցուցաբերելու համար, նախքան հետագա մասնագիտացված բուժօգնություն ստանալը: Հաշվի առնելով հանքարդյունաբերական գործունեության բարձր ռիսկայնությունը՝ առաջին բուժօգնության անհրաժեշտ բոլոր պարագաներով հագեցած այդ կետերը կարևոր նշանակություն ունեն վնասվածքների, արտակարգ իրավիճակների և մասնագիտական հիվանդությունների հետ կապված խնդիրների դեպքում բուժօգնություն ցուցաբերելու համար:

SASB EM-MM-320a.1.

2024թ-ին ԶՊՄԿ-ում գրանցվել է առաջին բուժօգնության 61 դեպք, և 5 դեպք, երբ, բացի առաջին բուժօգնությունից, պահանջվել է այլ բժշկական միջամտություն՝ չկորցնելով աշխատանքային օրը:

Աշխատանքի ընդունվելուն նախորդող բժշկական զննումներ

ԶՊՄԿ-ում աշխատանքի ընդունվել ցանկացողները նախապես անցնում են բժշկական մանրակրկիտ զննում՝ իրենց աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելու կարողությունը հաստատելու համար: Այդ զննումը ներառում է ընդհանուր ֆիզիկական զննում, թոքերի ֆունկցիայի հետազոտություն՝ սպիրոմետրիա,

կրծքավանդակի ռենտգեն հետազոտություն՝ թոքերի հիվանդությունները, օրինակ՝ պնևմոկոնիոզը հայտնաբերելու համար, լսողության թեստեր՝ աուդիոմետրիա, տեսողության թեստեր, արյան և մեզի հետազոտություն և, անհրաժեշտության դեպքում, էլեկտրասրտագրություն (ԷՍԳ)՝ հատկապես բարձր ռիսկային ոլորտում աշխատողների համար:

Պարբերական բժշկական զննումներ

Պարբերաբար իրականացվող բժշկական զննումները կարևոր են հիվանդությունների կանխարգելման և վաղ ախտորոշման տեսանկյունից՝ ապահովելով աշխատողների երկարատև բարեկեցությունը: Վաղ ախտորոշումը հնարավորություն է տալիս աշխատողին ժամանակին ձեռնարկել միջոցներ՝ առողջության հետ կապված խնդիրները լուծելու համար և արդյունավետ կատարել աշխատանքային պարտականությունները երկարաժամկետ հորիզոնում: Այդ զննումները սովորաբար ներառում են շնչառական օրգանների վիճակի գնահատումներ՝ փոշին երկարատև շնչելու հետևանքով առաջացող հիվանդությունները հայտնաբերելու

համար, օրինակ՝ սիլիկոզը և ասբեստոզը, լսողության թեստեր՝ լսողության իջեցումն աղմուկի պատճառով հայտնաբերելու համար, արյան հետազոտություն՝ ծանր մետաղների՝ կապարի, սնդիկի և մկնդեղի առկայությունը ստուգելու համար, լյարդի և երիկամների ֆունկցիայի հետազոտություններ՝ թունավոր քիմիական նյութերի ազդեցության հետևանքները հայտնաբերելու համար, հենաշարժիչ համակարգի հետազոտություններ՝ հոդերի կամ ողնաշարի խնդիրները հայտնաբերելու համար, և սրտանոթային հետազոտություններ, մասնավորապես, բարձրության վրա կամ սթրեսային միջավայրում աշխատողների համար:

2024թ-ին վնասակար աշխատանքային պայմաններում աշխատողներից պահանջվում էր անցնել պարտադիր բժշկական զննում:

Բժշկական զննումը ցուցված էր ընդհանուր թվով

3,010 աշխատողի

որոնցից՝

450-ը կանայք էին

Բժշկական զննում անցել են նրանցից 2,983-ը, որոնցից 448-ը կանայք էին, արդյունքում գրանցվել են հետևյալ ցուցանիշները՝ բժշկական զննում անցել է ընդհանուր աշխատողների 99.1%-ը և կանանց՝ 99.6%-ը: Մասնագիտական հիվանդությունների դեպքեր չեն հայտնաբերվել:

Բժշկական զննումների անցկացման ժամանակացույցը համաձայնեցվել է Ընկերության աշխատանքային գրաֆիկին՝ աշխատողների ներկայությունը և նրանց համար առավելագույն հարմարավետությունը ապահովելու համար:

Աշխատանքի կոնկրետ պահանջների հետ անհամատեղելի առողջական խնդիրների հայտնաբերման դեպքում աշխատողի՝ աշխատանքը շարունակելու կարողության գնահատումը և որոշումը կայացվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

Վարչական անձնակազմի դեպքում ԶՊՄԿ-ն առաջնահերթությունը տալիս է էրգոնոմիկ բարելավումներին, ճկուն աշխատանքային պայմաններին և քանի որ այդ աշխատողներն իրենց ութժամյա աշխատանքային օրվա ընթացքում անընդհատ չեն ենթարկվում վտանգավոր արտադրական գործոններին, նրանք չեն անցնում կանոնավոր տարեկան բժշկական զննումներ:

Տեղական համայնքներ. ներգրավվածություն և ընդհանուր արժեքների ձևավորում

- 98 — Համայնքային ներդրումներ
- 101 — Համայնքների կարիքների և ազդեցության գնահատում
- 102 — Շահագրգիռ կողմերի ներգրավվածություն

GRI 3-3



Ավելի քան յոթ տասնամյակ մենք համայնքի մաս ենք կազմում. համայնքները միշտ եղել են մեր գործունեության առանցքը: Մեր աշխատողներն այդ համայնքների բնակիչների սերունդներ են: ԶՊՄԿ-ի համար համայնքների հետ համատեղ արժեքների ձևավորումը դարձել է գործունեության օրգանական և անբաժանելի մասը: Գիտակցելով, որ հանքարդյունաբերական գործունեությունը անխուսափելիորեն ազդում է շրջակա համայնքների վրա՝ մենք ձգտում ենք նվազագույնի հասցնել և չեզոքացնել այդ ազդեցությունը արդյունավետ համագործակցության և ներգրավվածության միջոցով՝ կառուցողական և կայուն ներդրումներ կատարելով համայնքների զարգացման և բնապահպանության ոլորտներում: Համայնքների և այլ շահագրգիռ կողմերի հետ համագործակցային, թափանցիկ և հարգալից հարաբերությունների պահպանումը հիմնարար նշանակություն ունի մեր երկարաժամկետ հաջողության համար:

Թեև մենք ունենք համայնքների հետ համագործակցության տասնամյակների պատմություն, բայց այսօր ձգտում ենք այդ հարաբերությունները ձևավորել նաև ինստիտուցիոնալ շրջանակում՝ համապատասխանելով ոլորտի լավագույն չափանիշներին և գործելակերպին:

2022-2023թթ. Ընկերությունը ազդակիր համայնքների հետ ստորագրել է սոցիալական ներդրման մասին հուշագրեր: 2024թ-ին մենք ինստիտուցիոնալ հիմք ենք տվել մեր սոցիալական ներգրավվածությանը՝ ընդունելով Սոցիալական քաղաքականությունը և Մարդու

իրավունքների վերաբերալ քաղաքականությունը, նպատակ ունենալով խթանել պատասխանատու և ներառական գործելակերպ մեր գործունեության բոլոր ոլորտներում՝ դրանով իսկ ամրապնդելով վստահությունը և ապահովելով երկարաժամկետ դրական արդյունքներ ներկայիս և ապագա սերունդների համար: Մեր շահագրգիռ կողմերը, ներառյալ աշխատողները, տեղական համայնքները, բաժնետերերը և կապալառուները, ունեն արդարացի ակնկալիք, որ մեր գործունեությունը կնպաստի կայուն զարգացմանը և կապահովի փոխադարձ օգուտներ և ընդհանուր արժեքներ:

ԶՊՄԿ-ն կառավարում է իր սոցիալական գործունեությունը՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության օրենքների վրա: Համապատասխան միջազգային չափորոշիչները, ներառյալ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և ՄՖԿ-ի կատարողականի ստանդարտները բնապահպանության և սոցիալական կայունության ոլորտներում ուղղորդում են մեր գործողությունները սոցիալական կառավարման ոլորտում: Մենք նաև խրախուսում ենք մեր գործընկերներին ստանձնել նույն հանձնառությունները:

2022թ. սկզբից Կայուն զարգացման գծով տնօրենությունը ձևավորվել է սոցիալական կառավարման հարցերով զբաղվող թիմ: Այս թիմում ընդգրկված են սոցիալական կառավարման գծով երկու մասնագետ, համայնքների հետ հարաբերությունների համար պատասխանատու երկու և տեղական զարգացման ոլորտի երկու մասնագետ: Թիմը ղեկավարվում է սոցիալական զարգացման ոլորտում հարուստ միջազգային փորձ ունեցող առաջատար մասնագետի կողմից:

Սոցիալական պատասխանատվություն

ԶՊՄԿ-ի բիզնես արժեքների հիմքում ընկած է սոցիալական պատասխանատվությունը: Հետևաբար, մեր նպատակն է նպաստել կենսունակ և կայուն համայնքների զարգացմանը՝ կենտրոնանալով այն նախաձեռնությունների վրա, որոնք բարելավում են տարածքի բարեկեցությունը սոցիալական և բնապահպանական տեսանկյունից: Այդ նախաձեռնությունները ներառում են՝ համայնքի ներգրավվածություն, տեղական բիզնեսի զարգացում, զբաղվածության մակարդակի բարձրացում մրցունակ աշխատավարձերի միջոցով: Բացի այդ, մեր աշխատողների ավելի քան 90%-ը Քաջարանի և Կապանի համայնքներից են, իսկ մոտ 10%-ը՝ Սյունիքի մարզի այլ համայնքներից, ինչը ԶՊՄԿ-ին իսկապես դարձրել է համայնքահեն և ներգրավվածությամբ գործող ընկերություն:

ԶՊՄԿ-ի՝ զարգացած և տնտեսական առումով բազմազան համայնքների առաջընթացին նպաստելու հանձնառությունը չի սահմանափակվում միայն աշխատատեղեր ստեղծելով: Իրականում, մենք չենք ձգտում կախվածություն ստեղծել ԶՊՄԿ-ում աշխատանքի հնարավորությունից, փոխարենը մեր նպատակն է աջակցել տեղական համայնքներին դառնալ ավելի անկախ և կայուն: Այդ իսկ պատճառով, մենք հատուկ ուշադրություն ենք դարձնում համայնքների բարեկեցության հիմքերի բարելավմանը՝ կատարելով ներդրումներ այնպիսի կարևոր ոլորտներում, ինչպիսիք են առողջապահությունն ու կրթությունը, ենթակառուցվածքները, սպորտը և մշակույթը, տեղական զննումներն ու ձեռնարկատիրությունը, ինչպես նաև կարողությունների զարգացումը: Այդ նախաձեռնություններն

ուղղված են տեղական համայնքների հզորացմանը, ապահովելով կայուն զարգացման և համայնքների ներսում աշխատատեղեր ստեղծելու հնարավորություն՝ սեփական ներուժի, ռեսուրսների և առավելությունների արդյունավետ օգտագործման միջոցով:

Վստահության պահպանումը կարևոր նշանակություն ունի համայնքների հետ մեր հարաբերություններում, ուստի մենք առաջնահերթություն ենք տալիս բաց և թափանցիկ հաղորդակցությանը բոլոր շահագրգիռ կողմերի հետ: Մենք ապահովում ենք նրանց տեղեկացվածությունը, հարգալից վերաբերմունքը և անհրաժեշտության դեպքում ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում:

Մենք օգտագործում ենք բոլոր հնարավորությունները տարբեր միջոցներով համագործակցելու համար, ներառյալ՝ անհատական հանդիպումներ, թիրախավորված խմբային քննարկումներ, սոցիալական հարցումներ, խորհրդակցություններ տեղական հասարակական կազմակերպությունների, համայնքի անդամների և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ:

Բացի այդ, մենք փորձում ենք օրինակ հանդիսանալ մեր գործընկերների համար համայնքների հետ հարաբերություններում հարգանքի և ներառականության բարձր նշաձող սահմանելու հարցում՝ ապահովելով հետևողական մոտեցում կայուն վստահություն ձևավորելու համար:

Մշակութային ժառանգություն

SASB EM-MM-210b.1.

Սոցիալական զարգացման նախաձեռնությունների շրջանակում մշակութային ժառանգության պահպանությունը և վերականգնումը հանդիսանում են շարունակական և առաջնահերթ նպատակ: Այդ նպատակով անժամկետ պայմանագիր է կնքվել Հայաստանի Հանրապետության գիտությունների

ազգային ակադեմիայի Հնագիտության ինստիտուտի հետ, որն անհրաժեշտության դեպքում իրականացնում է զարգացման ծրագրերի մոնիտորինգ տեղում՝ մշակութային ժառանգության պահպանությունը և համապատասխան ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

Պատասխանատու համագործակցություն

Մենք պահպանում ենք բարձր չափանիշներ մեր գործընկերների, այդ թվում՝ կապալառուների և մատակարարների հետ մեր գործարար հարաբերություններում: ԶՊՄԿ-ն պահանջում է, որ նրանք նույնպես հետևեն սահմանված բնապահպանական, սոցիալական և կառավարման

սկզբունքներին: Պարբերաբար իրականացվող աուդիտները, կատարողականի մոնիտորինգը և համապատասխանության ստուգումներն օգնում են համոզվել, որ գործընկերները համապատասխանում են այդ ակնկալիքներին և անընդհատ կատարելագործում են իրենց գործելակերպը, ըստ անհրաժեշտության:

1. ԶՊՄԿ-ի մասին
2. Տնտեսական ազդեցություն
3. Կորպորատիվ կառավարում
4. ԶՊՄԿ-ի աշխատողները
5. Բարեկեցության և կայունության ապահովում աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման մշակույթի ձևավորման միջոցով

6. Տեղական համայնքներ
7. Շրջակա միջավայրի պահպանություն և կայունություն
8. Կլիմայի փոփոխություն
9. Հավելվածներ

Համայնքային ներդրումներ

GRI 203-1


Ընկերությունը հանձնառու է խթանել համայնքների զարգացումը՝ իր հիմնական գործունեության սահմաններից դուրս նախաձեռնությունների միջոցով: Գյուղական ենթակառուցվածքում հետևողականորեն ներդրումներ կատարելով և սուբվենցիոն ծրագրերի միջոցով տեղական ու մարզային ինքնակառավարման մարմիններին աջակցելով՝ Ընկերությունն օգնում է ամրապնդել համայնքների կենսական նշանակություն ունեցող ծառայությունները և հաստատությունները: Այդ նախաձեռնություններին զուգահեռ իրականացվում են նաև տարեկան խոշոր ներդրումներ առողջապահության, կրթության և սոցիալական աջակցության ոլորտներում, որոնցից օգտվում են ինչպես տեղական համայնքների բնակիչները, այնպես էլ Ընկերության աշխատակիցները:

Սերտ համագործակցելով տեղական համայնքների և ինքնակառավարման մարմինների հետ՝ Ընկերությունն իրականացնում է կենսական նշանակություն

ունեցող ենթակառուցվածքային նախագծեր և այլ նախաձեռնություններ, որոնք ստեղծում են ընդհանուր արժեք: Այդ համագործակցությունը ձևակերպվում է Համայնքային զարգացման հուշագրերի և տեղական հասարակական կազմակերպությունների հետ գործընկերության մասին տարբեր համաձայնագրերի միջոցով, որոնք ապահովում են ընդհանուր տեսլական և զարգացում՝ միաժամանակ ընդգծելով կողմերի պատասխանատվության շրջանակը և հանձնառությունները:

Բացի այդ, Ընկերությունն ակտիվորեն աջակցում է մշակութային, արվեստի և երիտասարդական ծրագրերին, այդ թվում՝ սպորտային և մշակութային նախաձեռնություններին, որոնք նպաստում են համայնքային կյանքի աշխուժացմանը և երիտասարդների համար հնարավորությունների ստեղծմանը:

Սոցիալական ներդրումներն ըստ տարածաշրջանների 2024թ.



Ստորև ներկայացված է 2024թ-ին ներդրումների բացվածքը՝ ըստ ոլորտների:

Համայնքներում ներդրումները՝ ըստ ոլորտների և աշխարհագրության (հազար ԱՄՆ դոլար)²⁴

Ոլորտ	Կապան	Քաջարան	Սյունիք	ՀՀ այլ մարզեր	Ընդամենը	Մասնաբաժին
Սոցիալական աջակցություն, այդ թվում՝ աջակցություն անհատներին (նաև աշխատողներին), համայնքներին, ենթակառուցվածքների զարգացմանը, շինարարության խթանմանը, սուբվենցիոն ծրագրերին	3,830	2,935	1,299	—	8,064	43.98%
Բուժսպասարկում, Առողջապահական ծառայություններ	477	533	51	54	1,114	6.08%
Ուսման վարձ, աջակցություն ուսումնական հաստատություններին	318	318	—	1,148	1,784	9.73%
Սպորտի զարգացում (այդ թվում՝ «Սյունիք» ՖԱ)	1,461	124	—	135	1,720	9.38%
Մշակութային միջոցառումներ (այդ թվում՝ «Սյունիք» հեռուստաընկերություն)	1,005	48	—	70	1,123	6.12%
Աջակցություն կազմակերպություններին և հիմնադրամներին (առողջապահական, սոցիալական, հաշմանդամներին ուղղված, հանքարդյունաբերական)	—	—	311	1,004	1,315	7.17%
Աջակցություն բանակին	—	—	—	1,177	1,177	6.42%
Օդանավի և ինքնաթիռի տեխնիկական սպասարկում	—	2,041	—	—	2,041	11.13%
Ընդամենը	7,091	5,999	1,661	3,587	18,338	100%

Ընկերությունը հանձնառու է աջակցել ազդակիր համայնքների բնակչության սոցիալական բարեկեցությանը՝ տրամադրելով ամսական օգնություն բոլոր տնային տնտեսություններին: 2024թ-ին հողօգտագործման փոխհատուցման ծրագրի շրջանակում հատկացվել է մոտ 1.6 միլիոն ԱՄՆ դոլար ամսական վճարների տեսքով՝ հինգ համայնքներում շուրջ 1,250 անձի աջակցելու համար:

Տարբեր գործընկերային նախաձեռնությունների միջոցով առողջապահական կամ սոցիալական աջակցություն, կրթաթոշակներ ստացած կամ երիտասարդական և մանկական ծրագրերին մասնակցած անձանց ընդհանուր թիվը կազմել է մոտ 7,770՝ հիմնականում ազդակիր համայնքներում: Բացի այդ, ԶՊՄԿ-ն աջակցում է սպորտային և մշակութային ծրագրերին, որոնք նշանակալի դրական ազդեցություն են ունեցել հարյուրավոր երիտասարդների վրա:

²⁴ 1 ԱՄՆ դոլար = 392.73 ՀՀ դրամ



Համագործակցություն տեղական հասարակական կազմակերպությունների հետ²⁵

2024թ-ին ԶՊՄԿ-ն համագործակցել է 13 հասարակական և այլ կազմակերպությունների հետ, որոնք ուղղված են հաշմանդամություն ունեցող երեխաների աջակցությանը, սոցիալապես անապահով խմբերի համար առողջապահական ծառայությունների բարելավմանը և գյուղական համայնքների զարգացմանը:

Այդ ծրագրերը նպատակաուղված են խոցելի տնային տնտեսություններին ջերմոցային տնտեսությունների նախագծերի միջոցով աջակցելուն, դրանց հասանելիություն ապահովելուն, ինչպես նաև երեխաների և երիտասարդների համար կրթական հնարավորություններ ապահովելուն:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Սյունիքի մարզում տեղադրվել են արևային էլեկտրակայաններ և արևային ջրատաքացուցիչներ: Մասնավորապես, «Ֆրիներջի» ընկերության հետ համագործակցության շրջանակում Կապանի մեր ազդակիր համայնքներում 38 շահագրգիռ կողմերի համար տեղադրվել են 2.32 կՎտ հզորությամբ արևային էլեկտրակայաններ և 200 լիտր տարողությամբ ջրատաքացման համակարգեր, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 81,300 ԱՄՆ դոլար: Բացի այդ, «Կանաչ էկո շրջան» բնապահպանական հասարակական կազմակերպության հետ համագործակցության շրջանակում չորս համայնքների չորս և ավելի երեխա ունեցող ընտանիքներին տրամադրվել են արևային ջրատաքացուցիչներ: 38,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով այդ նախագծից օգտվել է ընդհանուր առմամբ 24 ընտանիք՝ 18՝ Արծվանիկում, 2՝ Չափնիում, 1՝ Սևաքարում և 3՝ Աճանանում: 2025թ-ին նախատեսվում է շարունակել այդ ձևաչափով համագործակցությունը 293,000 ԱՄՆ դոլար ընդհանուր բյուջեով՝ 140 շահագրգիռ կողմերի աջակցություն ցուցաբերելու նպատակով: Ընկերությունը նաև պլանավորում է տեղադրել լրացուցիչ 26 արևային վահանակ Ըրկենանց գյուղում:

Հաշվետվողականությունը ԶՊՄԿ-ի գործընկերային ծրագրերի կարևորագույն բաղադրիչն է: Սոցիալական

կառավարման հարցերով զբաղվող թիմը պարբերաբար այցելում է ծրագրերի իրականացման վայրերը՝ գնահատելու ծրագրերի համապատասխանությունը նախապես համաձայնեցված նպատակներին և ակնկալվող արդյունքներին: Թիմը հավաքագրում է հասարակական կազմակերպությունների և ծրագրի շահագրգիռ կողմերի կարծիքները: Այցերի արդյունքները, դիտարկումները և առաջարկվող գործողությունները համակարգված կերպով փաստաթղթավորվում են ներքին օգտագործման նպատակով և տրամադրվում են ծրագրերն իրականացնող գործընկերներին՝ շարունակական կատարելագործում ապահովելու համար:

Հաշվետվողականությունն ավելի ամրապնդելու համար հասարակական կազմակերպություններից պահանջվում է ներկայացնել առաջընթացի վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններ նաև ֆինանսական հաշվետվություններ՝ օգտագործելով ԶՊՄԿ-ի կողմից տրամադրված ստանդարտ ձևաչափերը: Հաշվետվություններին վերաբերող այդ պահանջները հստակորեն նշված են համագործակցության մասին պայմանագրերում՝ Ընկերության հաշվետվողականության և թափանցիկության չափանիշներին համապատասխանությունը ապահովելու համար:

Սոցիալական ներդրումների շատ նախագծեր հիմնված են համայնքների առաջնահերթ կարիքների վրա, որոնք գնահատվում են կառուցվածքային հարցումների, տարեկան ելակետային տվյալների հավաքագրման, թիրախային խմբային քննարկումների և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև համայնքի անդամների հետ հանդիպումների միջոցով: Այդ տեղեկատվությունը ծառայում է որպես հիմք համայնքային զարգացման ներդրումների նախագծման համար:

Ընկերությունը սերտորեն համագործակցում է պետական մարմինների հետ՝ պահպանելով զգոնություն՝ հակամարտության ռիսկի հետ կապված, հաշվի առնելով ծրագրի հարևանությունը սահմանային բարձր ռիսկային տարածքներին: 2024թ-ին ԶՊՄԿ-ն շարունակել է մարդասիրական օգնություն տրամադրել Լեռնային Ղարաբաղի տարածքից տեղահանված էթնիկ հայերին, որոնք բնակություն են հաստատել Ընկերության գործունեությանը մոտ գտնվող համայնքներում:

Համայնքների կարիքների և ազդեցության գնահատում

GRI 413-1, SASB EM-MM-210b.1.

Համայնքների դինամիկայի մասին պատկերացում կազմելու համար 2022թ-ից ի վեր ԶՊՄԿ-ն իրականացնում է Ընկերության գործունեության ազդեցությանը ենթարկվող համայնքների տարեկան ելակետային տվյալների հավաքագրում, որի միջոցով ստանում է արժեքավոր տեղեկատվություն ժողովրդագրության միտումների, խոցելիության դրսևորումների, զբաղվածության մակարդակի, համայնքային ենթակառուցվածքների, միգրացիայի դինամիկայի, համայնքին սպառնացող մարտահրավերների և յուրաքանչյուր համայնքում առկա հրատապ կարիքների վերաբերյալ: Տարեցտարի տվյալների հետևողական հավաքագրումը թույլ է տալիս Ընկերությանը հետևել փոփոխություններին և առավել արդյունավետ արտացոլել դրանք սոցիալական ներդրումներում և ծրագրերում:

ԶՊՄԿ-ն «Wardel Armstrong International»-ի (SLR խմբի կազմի մեջ մտնող միջազգային խորհրդատվական ընկերություն) աջակցությամբ, 2024թ-ին իրականացրել է համայնքների ներգրավվածությունն ապահովող լայնածավալ աշխատանքներ, որոնք ներառում էին երկու մեթոդով անցկացված հարցումներ՝ հարցազրույցներ, հիմնական տեղեկատվությունը տրամադրողների հետ և հինգ համայնքներում թիրախային խմբային քննարկումներ կանանց հետ: Բոլոր համայնքներում թիրախային խմբային քննարկումները կազմակերպվել են միայն կանանց հետ՝ գենդերային/սեռային առանձնահատկություններին համապատասխանող կարծիքի ստացումը ապահովելու համար: Քննարկումները կենտրոնացած էին համայնքների կարիքների, սոցիալական և տնտեսական խնդիրների, բնակչության առողջության, կանանց առջև կանգնած մարտահրավերների, կենսապահովման, զբաղվածության և այլ հարցերի վրա: Կանանց տեսակետն ամբողջական առումով արտացոլվել է տվյալների հավաքագրման գործընթացում: Գնահատման արդյունքների հիման վրա որոշվել են այն հիմնական ուղղությունները, որտեղ կարող են կենտրոնացվել մեր նախաձեռնությունները:

Այդ աշխատանքների հիման վրա 2024թ. աշնանը մեր միջազգային խորհրդատուն՝ տեղական թիմի հետ համատեղ, ավարտին հասցրեց ավելի լայնածավալ՝ 16 համայնքների տնային տնտեսություններն ընդգրկող հարցման տեխնիկական առաջադրանքը: 2025թ. ձմռանն իրականացվեց մոտավորապես 915 տնային տնտեսության կառուցվածքային սոցիալ-տնտեսական ուսումնասիրություն: Թեմաները ներառում էին ժողովրդագրությանը, ընտանիքի կազմին, կենսապահովման գործունեությանը, առողջապահությանը, տրանսպորտին, ջրի հասանելիությանը, կրթությանը, տնային տնտեսության եկամուտների և ծախսերի կառուցվածքին, կենսակերպին, զբաղվածությանը, միգրացիային, հոդօգտագործմանը, սննդին, հասանելի ծառայություններին, մշակութային ժառանգությանը և սոցիալական համախմբվածությանը վերաբերող հարցերը:

Ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվությունը կներկայացվի 2025թ. հաշվետվությունում:



²⁵ Գործընկերային ծրագրերը ԶՊՄԿ-ի հետ պարտադիր կատարման համաձայնագրերի միջոցով համաձայնեցված և վերջինիս կողմից աջակցվող ծրագրեր են, որոնց նպատակն է բարելավել հաշմանդամություն ունեցող երեխաներին մատուցվող ծառայությունները, անապահով խմբերին տրամադրվող առողջապահական ծառայությունները, գյուղական զարգացման և այլ ոլորտները: Հասարակական կազմակերպություններին տրամադրվող այլ աջակցությունը ներառում է տարբեր կազմակերպություններին, այդ թվում, օրինակ՝ Հայաստանի հանքարդյունաբերական ասոցիացիային, այլ հիմնադրամներին տրամադրվող ֆինանսական աջակցությունը: Այդպիսով, հասարակական կազմակերպություններին տրամադրվող ընդհանուր աջակցությունն ուղղվում է ինչպես ԶՊՄԿ-ի կողմից աջակցվող նախագծերին, այնպես էլ այլ կազմակերպություններին՝ նրանց ընթացիկ գործունեությանը աջակցելու համար:

Շահագրգիռ կողմերի ներգրավվածություն

GRI 2-29

ԶՊՄԿ-ն մշակել է Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան (ՇՆՊ), որն ուղղորդում է իր համագործակցությունը դեպի ներքին և արտաքին շահագրգիռ կողմերի լայն շրջանակ: Այդ պլանը համապատասխանում է միջազգային լավագույն գործելակերպին և հիմք է ծառայում թափանցիկ, ներառական և կարիքներին արձագանքող հարաբերություններ հաստատելու համար:

Ընկերության շահագրգիռ կողմերի հիմնական խմբերն են՝ աշխատողները, ազդակիր համայնքները, հասարակական կազմակերպությունները, կապալառուները, մատակարարները, պետական մարմինները (տեղական, մարզային և ազգային), ինչպես նաև գիտակրթական և քաղաքացիական հասարակության հաստատությունները:

Շահագրգիռ կողմերի դասակարգման և քարտեզագրման գործընթացի միջոցով ԶՊՄԿ-ն իրականացնում է վերջիններիս ընտրություն ու սահմանում է առաջնահերթությունները: Այդ գործընթացը շահագրգիռ կողմերին դասակարգում է որպես ներքին կամ արտաքին և գնահատում է հիմնվելով հիմնական գործոնների վրա, որոնցից են վերջիններիս ազդեցության մակարդակը, Ընկերության գործունեության նկատմամբ հետաքրքրվածությունը, գործունեության օբյեկտներին մոտ գտնվելը, խոցելիությունը և շահագրգիռ կողմերի վրա Ընկերության գործունեության ազդեցության մակարդակը: Այդ գնահատումը թույլ է տալիս Ընկերությանը կիրառել նպատակային և ներառական մոտեցում՝ ապահովելով շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը:

Շահագրգիռ կողմերի ներգրավմանն ուղղված ԶՊՄԿ-ի գործունեության հիմնական նպատակներն են՝ պահպանել գործունեություն իրականացնելու իր սոցիալական լիցենզիան, ամրապնդել փոխադարձ վստահությունը, խրախուսել թափանցիկությունը և համայնքների աջակցությունը, ինչպես նաև ապահովել շահագրգիռ կողմերի իրազեկված և լսելի լինելը:

Այդ նպատակներն իրագործելու համար ԶՊՄԿ-ն օգտագործում է մի շարք մեթոդների համադրություն՝ ներառյալ՝

- > խորհրդակցություններ և հանրային լսումներ՝ բաց երկխոսություն և տեղեկատվության փոխանակում ապահովելու համար,
- > հաղորդակցման կառուցվածքային ուղիներ՝ կանոնավոր թարմացումների և հետադարձ կապի համար,

- > համայնքի կարիքներին համապատասխանող սոցիալական ծրագրեր և ներդրումներ,
- > պարբերաբար իրականացվող սոցիալական հարցումներ և թիրախային խմբային քննարկումներ՝ տեղեկատվություն հավաքագրելու և խնդիրները հայտնաբերելու համար,
- > վերահսկողության էլեկտրոնային համակարգեր՝ փաստաթղթավորման, մոնիտորինգի և հետագա հսկողության համար:

Ընկերությունն ապահովում է շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը շարունակական հիմունքով՝ անհատական հանդիպումների, պաշտոնական խորհրդակցությունների, հանրային միջոցառումների և թվային հաղորդակցության հարթակների միջոցով: Միայն 2024թ-ին սոցիալական կառավարման հարցերով զբաղվող թիմն անց է կացրել ավելի քան 50 պաշտոնական հանդիպում մի շարք շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների, համայնքների ղեկավարների և պետական հաստատությունների ներկայացուցիչների հետ: Շահագրգիռ կողմերի կարծիքը հաշվի է առնվում գործառնական պլանավորման և որոշումների կայացման գործընթացում:

Շահագրգիռ կողմերի ներգրավվածությունն ապահովելու համար իրականացված աշխատանքները համակարգված կերպով փաստաթղթավորվում են: Գործիքները ներառում են՝

- > հանդիպումների գրանցամատյան՝ համայնքների, հասարակական և այլ կազմակերպությունների հետ բոլոր պաշտոնական փոխազդեցությունները գրանցելու համար,
- > այցելությունների գրանցամատյան՝ տեղամասեր կատարվող այցելություններին հետևելու համար,
- > բոլորքների գրանցամատյան՝ բոլորքներին, դրանց կարգավորման ժամկետներին և կրկնվող խնդիրներին հետևելու համար,
- > համայնքների հարցումների տվյալների բազա՝ հարցումների արդյունքներն ըստ սեռի, մարզի, ոլորտի և տեսակի դասակարգելու համար:



Շրջակա միջավայրի պահպանություն և կայունություն. շարունակական կատարելագործման ուղի

- 109 — Էներգիայի կառավարման ռազմավարություն. սպառման վերահսկողություն և արդյունավետության բարձրացում
- 111 — Զրային ռեսուրսների կառավարման ռազմավարություն. սակավության կառավարում՝ պատասխանատու օգտագործման և համապատասխանության ապահովման միջոցով
- 116 — Թափոնների կառավարում. մոնիտորինգ, նվազեցում և համապատասխանեցում օրենսդրության պահանջներին
- 119 — Մթնոլորտ արտանետումներ,նվազեցմանն ուղղված նախաձեռնություններ և անվտանգ աշխատանքային միջավայրի ապահովում
- 121 — Պոչամբարային տնտեսություն և մոնիտորինգ. անվտանգության համակարգերի ամրապնդում և համապատասխանեցում միջազգային ստանդարտներին
- 122 — Կենսաբազմազանության կառավարում և Էկոհամակարգի վերականգնում, գործունեության համապատասխանեցում բնապահպանական ստանդարտներին և միջազգային ընդհանուր սկզբունքներին
- 124 — Շրջակա միջավայրի վերականգնում և հանքի փակման պլանավորում. վերականգնողական աշխատանքների ինտեգրում ակտիվ գործողությունների և բնապահպանական երկարաժամկետ նպատակների հետ



SASB EM-MM-160a.1

ԶՊՄԿ-ն ձգտում է կայուն զարգացումը դարձնել ոչ միայն նպատակ, այլև հիմնարար սկզբունք իր գործունեության յուրաքանչյուր ոլորտում:

Կայուն զարգացման գծով տնօրենի գլխավորությամբ և Բնապահպանության բաժնի հմուտ մասնագետների աջակցությամբ մենք նախաձեռնողական մոտեցում ենք ցուցաբերում Ընկերության բնապահպանական ազդեցության կառավարման հարցում: Մեր գործունեության արդյունքները գնահատվում են ներքին և արտաքին աուդիտների, ռիսկերի գնահատման և շահագրգիռ կողմերի հետ համագործակցության միջոցով:

2024թ-ին իրականացված կառավարչական բարելավումներ

2024թ-ին ԶՊՄԿ-ն մի շարք կարևոր ձեռքբերումներ է ունեցել բնապահպանական կառավարման համակարգի զարգացման գործում: Մշակվել և Տնօրենների խորհրդի կողմից պաշտոնապես հաստատվել են երեք կարևոր քաղաքականություններ, ինչը բնապահպանական հարցերի ռազմավարական և համալիր կառավարմանն ուղղված էական քայլ էր:

- Բնապահպանական քաղաքականությունը սահմանում է մեր նպատակը ներդնել կայուն աշխատանքային մթնոլորտ գործունեության բոլոր ոլորտներում և նվազագույնի հասցնել ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:
- Կլիմայի փոփոխության ոլորտի քաղաքականությունը ներկայացնում է մեր ռազմավարական մոտեցումը կլիմայի հետ կապված ռիսկերի կառավարմանը, կլիմայի փոփոխություններին դիմակայության

բարձրացմանը և Հայաստանի՝ ցածր ածխածնային ու կայուն տնտեսության անցման գործում աջակցությանը:

- Կենսաբազմազանության քաղաքականությունը ներկայացնում է կենսաբազմազանության վրա Ընկերության գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցությունները նվազագույնի հասցնելու մեր հանձնառությունը՝ ՄՖԿ-ի կատարողականի ստանդարտ 6-ի հիմնական սկզբունքների համաձայն:

Վերոնշյալ քաղաքականությունները ներկայացնում են բացառապես համապատասխանության վրա հիմնված մոդելից դեպի ապագայամետ, նախաձեռնողական մոտեցման անցնելու մեր հանձնառությունը, որի նպատակն է նվազեցնել Ընկերության գործունեության ազդեցությունը երկարաժամկետ հեռանկարում, ապահովել էկոհամակարգի պաշտպանությունը և առաջատար դիրք զբաղեցնել բնապահպանության ոլորտում:

Բնապահպանական կառավարման համակարգ

Ինչպես նշված էր 2023թ. Կայուն զարգացման հաշվետվությունում, բնապահպանական կառավարման համակարգը հիմնված է 12 կառավարման պլանների վրա, որոնք անդրադառնում են բնապահպանության կարևոր ոլորտների, այդ թվում՝ թափոնների, ջրի, հողի, օդի, վտանգավոր նյութերի և կենսաբազմազանության կառավարմանը: Հիմնականում բնապահպանության, առողջապահության և անվտանգության ոլորտի արտաքին մասնագետների հետ համագործակցությամբ

մշակված այդ պլաններն ինտեգրված են ակտիվների կենսաշրջանի բոլոր փուլերում՝ սկսած մրցույթի հայտի ներկայացումից առաջ իրականացվող ուսումնասիրությունից մինչև մշակումը, շահագործումը, փակումը և տեղանքի վերականգնումը: Հարկ է նշել, որ թափոնների կառավարման պլանը մշակվել է ԶՊՄԿ-ի աշխատակիցների կողմից, ինչը վկայում է բնապահպանության ոլորտում նրանց հարուստ փորձառության մասին:

2024թ-ին համակարգում իրականացված հիմնական բարելավումները ներառում են .

1

Բնապահպանության մոնիտորինգի պլանի գործարկումը, որի նպատակն է իրականացնել շրջակա էկոհամակարգերի վրա Ընկերության գործունեության ազդեցության շարունակական և տվյալների վրա հիմնված վերահսկողություն:

2

Էկոհամակարգերի և կենսաբազմազանության պաշտպանության միջոցառումների ընդլայնումը՝ առավել մեծ ուշադրություն դարձնելով զգալուն տարածքներին, օրինակ՝ Արևիկ ազգային պարկի մոտ գտնվող բուֆերային գոտիներին:

3

Վտանգավոր նյութերի կառավարման պլանի բարելավումը՝ ընդլայնելով դրա գործողության ոլորտը, ներառելով ոչ միայն ներքին գործունեությունը, այլև կապալառուներին, մատակարարներին և հարակից համայնքներին:

Բացի վերոնշյալից, ծրագրերի իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշակվել են ընթացակարգեր, որոնք վերանայվում են տարեկան կտրվածքով, կամ երկու տարին մեկ անգամ: Այս բարելավումները հանդիսանում են ԶՊՄԿ-ի շարունակական ջանքերի դրսևորումը՝ շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված պատասխանատվությունը գործնականում կիրառելու համար, որոնք հիմնված են կառուցվածքային մոտեցման և միջազգային լավագույն փորձի վրա:

Համապատասխանությունը միջազգային ստանդարտներին և ԲՍԿ սկզբունքներին

Հաշվետու տարվա ընթացքում ԶՊՄԿ-ն առավել ամբողջական է ապահովել համապատասխանությունը միջազգայնորեն ընդունված բնապահպանական ստանդարտներին՝ վերահաստատելով հանքարդյունաբերական գործունեությունում բնապահպանության տեսանկյունից պատասխանատու և ապագայամետ մեթոդներ կիրառելու իր հանձնառությունը:

Յուրաքանչյուր տարի մենք անցնում ենք վերահավաստագրում ISO 14001 ստանդարտով՝ Ընկերության գործունեության համապատասխանությունը ստանդարտի պահանջներին ապահովելու և մեր ձգտումը բնապահպանական կառավարման համակարգի շարունակական կատարելագործմանը վերահաստատելու համար: Միաժամանակ, մենք շարունակում ենք ՄՖԿ-ի կատարողականի ստանդարտների ինտեգրման գործընթացը՝ հատուկ ուշադրություն դարձնելով հիմնական ոլորտներին, մասնավորապես, կենսաբազմազանության պահպանությանը (PS6), աղտոտման կանխարգելմանը (PS3), աշխատանքի անվտանգությանը և համայնքների անդամների, ինչպես նաև աշխատողների առողջության պահպանմանը (PS4) և ռիսկերի կառավարումը (PS1):

2024թ-ին իրականացվել են անկախ գնահատումներ՝ մեր համապատասխանության մակարդակը սահմանելու նպատակով, որոնց արդյունքում ներկայացվել են մի շարք նպատակային, գործնական առաջարկություններ բնապահպանության ոլորտում կատարողականը բարելավելու համար՝

- > Ընդլայնել Բնապահպանական կառավարման համակարգը՝ իրական ժամանակում բնապահպանության մոնիտորինգ ինտեգրելու նպատակով:
- > Պոչամբարի շուրջ և դեպի տեխնիկական սպասարկման կետեր տանող ճանապարհների երկայնքով կանաչապատ տարածքների ընդարձակում և բուսականության վերականգնում:
- > Վտանգավոր նյութերի հետ աշխատելիս առաջացող արտակարգ իրավիճակների արձագանքման պլանի և գործողությունների տեղայնացման համակարգի բարելավում:
- > Վտանգավոր թափոնների ժամանակավոր պահեստների արդիականացման և արտադրամասերի ապագործարկման ընթացակարգերի բարելավման ռազմավարական պլանավորում:
- > Իրականացնել արտաքին տեսքի բարելավման և էկոհամակարգի վերականգնման աշխատանքներ Աճանան գետի արտանետման կետի հարակից տարածքում:

> Կենսաբազմազանության վերաբերյալ համապարփակ ելակետային տվյալների մշակում՝ արտաքին մասնագետների և ազգային պարկերի ղեկավարության հետ համատեղ:

Այդ միջոցառումների իրականացումն ընթացքի մեջ է և կազմում է ԶՊՄԿ-ի ճանապարհային քարտեզի անբաժանելի մասը, որն ուղղված է ՄՖԿ-ի կատարողականի ստանդարտների հետ համապատասխանության և ԲՍԿ սկզբունքների վերաբերյալ բացահայտվող տեղեկատվության թափանցիկության ապահովմանը:

Բացի այդ, ԶՊՄԿ-ն սկսել է ներքին նախապատրաստական աշխատանքներ միջազգային ԲՍԿ վարկանիշ ստանալու ուղղությամբ, ինչը կարևոր քայլ է կայուն զարգացման ճանապարհին: Այդ աշխատանքները ներառում են մեր հաշվետվողականության համապատասխանեցումը տեղեկատվության բացահայտման առաջատար համաշխարհային ստանդարտներին, ինչպիսիք են SASB-ը և GRI-ը, ինչպես նաև ԲՍԿ ներքին համեմատական վերլուծության իրականացումը՝ թափանցիկությունը և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:



Էներգիայի կառավարման ռազմավարություն . սպառման վերահսկողություն և արդյունավետության բարձրացում

GRI 3-3, 302-1, 302-4, SASB EM-MM-130a.1.

Մեր էներգիայի կառավարման ռազմավարության նպատակն է վերահսկել և կառավարել էներգիայի սպառումը գործունեության բոլոր ոլորտներում: Կանոնավոր ստուգումները և արդյունավետության ցուցանիշներն օգնում են մեզ բացահայտել արդյունավետությունը բարձրացնելու և էներգիայի սպառումը նվազեցնելու հնարավորությունները:

Մենք շարունակաբար կատարելագործում ենք մեր մոտեցումը՝ իրականացնելով էներգախնայողության ապահովմանն ուղղված նախաձեռնություններ, որոնք ներառում են սարքավորումների արդիականացումը, գործընթացների արդյունավետության բարձրացումը և իրական ժամանակում էներգիայի սպառման մոնիտորինգի և վերահսկողության առաջադեմ համակարգերի ներդրումը:

2024թ-ին մեր աշխատանքները կենտրոնացած էին էներգիայի սպառումը նվազեցնելու, համեմատաբար ցածր գին առաջարկող ցանցային մատակարարներից ստացվող էլեկտրաէներգիայի օգտագործման ծավալն ավելացնելու և ընդհանուր գործառնական արդյունավետությունը բարձրացնելու եղանակներ գտնելու վրա: Առաջընթացի հիմնական ուղղությունը էներգիայի մոնիտորինգի համակարգի հետագա զարգացումն էր և արտադրամասերում և տեղամասերում ներքին հաշվետվողականության բարելավումը:

Որպես ՀՀ-ում էլեկտրաէներգիայի ամենախոշոր սպառող՝ մենք դեռ չենք օգտագործում վերականգնվող էներգիա, այնուամենայնիվ, մենք արդեն իսկ ձեռնարկել ենք քայլեր էլեկտրաէներգիայի աղբյուրները դիվերսիֆիկացնելու ուղղությամբ: Էներգետիկ կայունությունն ամրապնդելու համար մենք նպատակ ունենք դիվերսիֆիկացնել

էլեկտրաէներգիայի ձեռքբերումը՝ ընդլայնելով Հայաստանի ազատ էլեկտրաէներգիայի շուկայից մատակարարումների ծավալը, միաժամանակ պահպանելով կայուն մատակարարումը Հայկական ատոմային էլեկտրակայանից: 2025թ-ին մենք նախատեսում ենք սկսել երկու խոշոր նախաձեռնություն վերականգնվող էներգիայի ոլորտում՝ ներդնելով արևային և քամու էլեկտրակայաններ էներգիայի մեր ներքին կարիքները բավարարելու համար: Ակնկալվում է, որ այդ նախագծերը կկրճատեն ընդհանուր սպառումը, կբարելավեն էներգաարդյունավետությունը և կնվազեցնեն ածխածնի արտանետումները: Միևնույն ժամանակ, մենք ակտիվորեն զբաղվում ենք Կլիմայի փոփոխության երկարաժամկետ ռազմավարության մշակմամբ, որը կհրապարակվի հետագա հաշվետվություններում:

ԶՊՄԿ-ի գործունեության համար էներգիայի հիմնական աղբյուրը շարունակում է մնալ էլեկտրաէներգիան, որին բաժին է ընկնում էներգիայի ընդհանուր սպառման ավելի քան 61%-ը²⁶: Դրան հաջորդում են դիզելային վառելիքը, որն օգտագործվում է հիմնականում բացահանքում աշխատող ծանր բեռնատարների համար, և բենզինը, որի գերակա մասը օգտագործվում է արտադրամասերում և տեղամասերում ուղևորատար տրանսպորտային միջոցների համար: Բնական գազն օգտագործվում է գոլորշու արտադրության համար²⁷:

²⁶ Ընկերությունը չունի էներգիայի արտադրություն:
²⁷ 2024թ-ին գոլորշու արտադրությունը կազմել է 50,005 ՄԿտժ: Ամբողջ գոլորշին օգտագործվել է ներքին նպատակների համար՝ առանց ջեռուցման, սառեցման կամ էներգիայի լրացուցիչ տեսակների վաճառքի:

1. ԶՊՄԿ-ի մասին
2. Տնտեսական ազդեցություն
3. Կորպորատիվ կառավարում
4. ԶՊՄԿ-ի աշխատողները
5. Բարեկեցության և կայունության ապահովում աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման մշակույթի ձևավորման միջոցով
6. Տեղական համայնքներ
7. Շրջակա միջավայրի պահպանություն և կայունություն
8. Կլիմայի փոփոխություն
9. Հավելվածներ

Էներգիայի սպառման ընդհանուր ծավալը (գիգաջոուլ)^{28,29,30}

Ցուցանիշ	2023	2024	Տոկոսային փոփոխություն
Դիզելային վառելիք	882,594	984,445	11.54%
Բենզին	38,264	42,008	9.78%
Բնական գազ	228,240	203,317	-10.92%
Գնված կամ ստացված էլեկտրաէներգիա	1,908,113	1,919,553	0.60%
Զվերականգնվող աղբյուրներից սպառման ընդհանուր ծավալ	3,057,211	3,149,323	3.01%
Վաճառված էլեկտրաէներգիա	-34,375	-24,002	-30.18%
Ընդամենը Էներգիայի սպառում	3,022,836	3,125,321	3.39%

2024թ-ին ԶՊՄԿ-ում Էներգիայի սպառման ընդհանուր ծավալն աճել է մոտ 3%-ով: Էներգիայի սպառման աճը հիմնականում պայմանավորված է ծանր և թեթև մեքենաներով իրականացվող փոխադրումներով: Ընկերությունն ակտիվորեն աշխատում է Էներգախնայողության հնարավորություններ բացահայտելու և իրականացնելու ուղղությամբ՝ աճի բացասական ազդեցությունը մեղմելու համար:

Էներգիայի սպառման ինտենսիվության գործակիցը հաշվարկվել է պղնձի և մոլիբդենի խտանյութի արտադրությունում Էներգիայի օգտագործման արդյունավետությունը գնահատելու և կառավարելու համար:

GRI 302-3

Էներգիայի սպառման ինտենսիվությունը՝ հիմնված պղնձի և մոլիբդենի խտանյութի արտադրության վրա³¹

Ցուցանիշ	Չափման միավոր	2023թ.	2024թ.	Տոկոսային փոփոխություն
Ընդհանուր Էներգիայի սպառում	ԳՋ	3,022,836	3,125,321	3.39%
Էներգիայի սպառման ինտենսիվություն	ԳՋ/տ	13.43	15.63	16.38%
Պղնձի և մոլիբդենի խտանյութ	Տոննա	225,042	199,934	-11.16%

Էներգիայի սպառման ինտենսիվությունը, ըստ հասույթի

Ցուցանիշ	Չափման միավոր	2023թ.	2024թ.	Տոկոսային փոփոխություն
Ընդհանուր Էներգիայի սպառում	ԳՋ	3,022,836	3,125,321	3.39%
Տեսակարար Էներգիայի սպառում	ԳՋ/միլիոն դոլար	3,799	4,383	15.38%
Հասույթ ³²	միլիոն դոլար	795.787	713.087	-10.39%

²⁸ Բոլոր խոշոր արտադրամասերի և գործունեության իրականացման տարածքների 2024թ. տվյալները հավաքագրվել և ստուգվել են Արտադրության սպասարկման բաժնի կողմից:

²⁹ Զեռուցման և սառեցման համար Էներգիայի սպառման առանձին ծավալը 2024թ. ընթացքում չի ենթարկվել մոնիտորինգի և համապատասխան տվյալներ առկա չեն:

³⁰ ԶՊՄԿ-ն պլանավորում է շարունակական բարելավումներ իրականացնել տվյալների հավաքագրման և կառավարման գործընթացներում՝ առաջիկա տարիներին մշակելով Էներգիայի սպառման գնահատման հստակ մեթոդաբանություն: Այդ գործընթացները կկազմակերպվեն արդյունավետությունը բարձրացնելու համար՝ նվազագույնի հասցնելով մարդկային միջամտությունը, գործիքների և հաշվարկման մեթոդների ավտոմատացման շնորհիվ: Բացի այդ, ԶՊՄԿ-ն արդեն սկսել է դասընթացներ անցկացնել համապատասխան աշխատողների համար՝ հնարավորություն տալով ձեռք բերել Էներգիայի սպառման տվյալները ճշգրիտ և արդյունավետ հավաքագրելու և կառավարելու համար անհրաժեշտ հմտություններ: Ներկայում տվյալների հավաքագրման գործընթացը հիմնականում իրականացվում է զանգերի, հաղորդագրությունների և քննարկումների միջոցով: Չնայած դեռևս չի կիրառվում մեկ միասնական ստանդարտացված մեթոդաբանություն, տվյալները ճշգրտվում են Հաշվապահական հաշվառման բաժնից ստացված տեղեկատվության հիման վրա, ինչպես նաև կիրառվում են լրացուցիչ մեխանիզմներ՝ Էներգիայի սպառման տվյալների ճշգրտությունը և հուսալիությունն ապահովելու համար:

³¹ Տվյալները հավաքագրվել են ԶՊՄԿ-ի տարբեր ստորաբաժիններից, ներառյալ Արտադրության և Արտադրության սպասարկման բաժինները: Հաշվարկների համար օգտագործվող մեթոդաբանությունը և փոխակերպման գործակիցները համապատասխանում են ոլորտի ստանդարտներին և ստուգվել են Ընկերության ներքին ատդիտի թիմի կողմից՝ ճշգրտություն ու համապատասխանությունն ապահովելու համար:

³² Ներկայացված է «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի և «Լեռ-Էքս» ՍՊԸ-ի հասույթը:

Ջրային ռեսուրսների կառավարման ռազմավարություն. սակավության կառավարում՝ պատասխանատու օգտագործման և համապատասխանության ապահովման միջոցով

GRI 3-3, GRI 303-1, GRI 303-2



Ջուրը մեր գործունեության կարևոր ռեսուրսներից է և շարունակում է պահպանել իր ռազմավարական նշանակությունը: Մարզում կլիմայի փոփոխությամբ պայմանավորված ջրային ռեսուրսների սակավությունը

2024թ-ին ևս բացասաբար ազդեց Ընկերության գործունեության վրա: Ի պատասխան՝ մենք վերահաստատում ենք ջրային ռեսուրսների կայուն և արդյունավետ կառավարման սկզբունքներին հետևելու մեր երկարաժամկետ հանձնառությունը: Մեր մոտեցումը հիմնված է Ջրային ռեսուրսների կառավարման պլանի վրա, որը համապատասխանում է ինչպես տեղական օրենսդրությանը, այնպես էլ ՄՖԿ-ի կատարողականի ստանդարտներին: Պլանն արտացոլում է, թե ինչպես ենք մենք ստանում, վերահսկում, օգտագործում և արտանետում ջուրը Ընկերության բոլոր օբյեկտներում՝ վստահ լինելով, որ մեր գործելակերպը համապատասխանում է Ընկերության գործառնական կարիքների և բնապահպանական պատասխանատվության պահանջներին:

Ջրային ռեսուրսների կայուն կառավարման իր շարունակական հանձնառության շրջանակում, 2023թ. վերջում Ընկերությունը Տեխնիկական տնօրինության կազմում ստեղծեց հատուկ ստորաբաժանում՝ ջրային ռեսուրսների կառավարման բոլոր բաղադրիչները և Ընկերության տարածքում գտնվող հիդրոլոգիական կառույցները վերահսկելու համար: 2024թ. ընթացքում այդ նորաստեղծ ստորաբաժանումը սերտորեն

համագործակցել է այլ թիմերի հետ՝ ջրային ռեսուրսների կառավարման համապարփակ ռազմավարություն մշակելու և հստակ, գործնական նպատակներ սահմանելու համար: Առաջնահերթ խնդիրներն են՝ պոչամբարի պատվարի կայունության բարձրացումը, ջրի վերամշակման ջանքերի ակտիվացումը և կայուն զարգացմանն ուղղված տարբեր նախաձեռնությունների իրականացումը: Այդ համալիր մոտեցումը Ընկերությանը հնարավորություն է տալիս ավելի պատասխանատու կերպով կառավարել ջրային ռեսուրսները և ձևավորել երկարաժամկետ հեռանկարում ապագա մարտահրավերներին դիմակայելու կարողություններ:

Ջրային ռեսուրսների կառավարման պլանի իրականացումը վերահսկվում է կայուն զարգացման գծով տնօրենի և Բնապահպանության բաժնի կողմից՝ Արտադրության սպասարկման բաժնի կողմից տրամադրվող ամենօրյա աջակցությամբ:

Ընկերության ջրային ռեսուրսների կառավարման աշխատանքները վերահսկվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից: Օրենսդրությամբ սահմանված գործընթացի շրջանակում Ընկերությունը կազմում և ներկայացնում է նախագծի առաջարկ, որում մանրամասն նկարագրվում են արտադրության համար պահանջվող ջրային ռեսուրսների ծավալի գնահատականը և կեղտաջրերի հետ կապված պահանջները: Ներկայացված առաջարկի ուսումնասիրությունից հետո լիազոր մարմինը տրամադրում է ջրօգտագործման թույլտվություն³³: Այդ թույլտվությունում նշվում են ջրառի կետերը, ջրառի թույլատրելի ծավալը և այլ հիմնական պայմանները:

³³ Ընկերության ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված ջրօգտագործման և ջրահեռացման նորմերը գերազանցելու դեպքում Ընկերությունը վճարում է հավելավճար կառավարությանը՝ ՀՀ հարկային օրենսգրքի պահանջների համաձայն . <https://www.arlis.am>

1. ԶՊՄԿ-ի մասին
2. Տնտեսական ազդեցություն
3. Կորպորատիվ կառավարում
4. ԶՊՄԿ-ի աշխատողները
5. Բարեկեցության և կայունության ապահովում աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման մշակույթի ձևավորման միջոցով

Զրոգտագործման թույլատրված ծավալի պահպանումը խստիվ վերահսկվում է ներքին վերահսկողության միջոցներով: Դրանք ներառում են վերահսկողություն Բնապահպանության բաժնի աշխատողների կողմից և ջրաչափիչ սարքերի տեղադրումը ջրառի յուրաքանչյուր կետում՝ ապահովելով ջրօգտագործման իրական ծավալի համապատասխանությունը ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված պայմաններին:

Շահագրգիռ կողմերի հետ համագործակցությունը ջրային ռեսուրսների կառավարման և ջրջակա միջավայրի պահպանության Ընկերության մոտեցման առանցքային տարրն է: Մենք ակտիվ երկխոսություն ենք վարում տեղական համայնքների և իշխանությունների հետ, մասնավորապես

Քաջարանում, հնարավոր ազդեցությունները հայտնաբերելու և ներառական, արդյունավետ լուծումներ մշակելու համար: Քննարկման փուլում գտնվող խոստումնալից նախաձեռնություններից մեկը վերաբերում է քաղաքային կեղտաջրերի մաքրմանը և արդյունաբերական գործընթացների համար վերաօգտագործմանը: Ներկայումս ընթացքի մեջ են տեխնիկատնտեսական գնահատումը և իրականացման պլանավորումը՝ նպատակ ունենալով ստեղծել ջրային ռեսուրսների օգտագործման համընդհանուր արժեք, որը շահավետ կլինի ինչպես Ընկերության, այնպես էլ համայնքների համար: Աշխատանքների իրականացման համար 2025թ-ին նախատեսվում է ներգրավել կապալառու և սկսել կայանի կառուցման համար անհրաժեշտ նյութերի ձեռք բերումը:

Զրային ռեսուրսների կառավարման ոլորտում պլանավորված նախաձեռնություններ

1

Խտացուցիչի տեղադրում, որը հնարավորություն կտա նվազեցնել քաղցրահամ ջրի օգտագործումը և վերաօգտագործել արդյունաբերական ջրի մոտ 20%-ը:

2

Բացահանքի ջրային ռեսուրսներն օգտագործել հանքաքարի հարստացման գործընթացների և փոշու նստեցման համար, այդպիսով նվազեցնելով կախվածությունը քաղցրահամ ջրից:

3

Բացահանքի վարչական տարածքում կառուցել մեքենաների վերանորոգման և սպասարկման կետ՝ կեղտաջրերի պատշաճ կառավարումն ապահովելու համար:

4

Բացահանքի մեքենաների լվացման կետում տեղադրել ժամանակակից մաքրման կայան՝ շրջանառու համակարգով, թարմ ջրի սպառումը նվազագույնի հասցնելու և կեղտաջրերի արտահոսքը բնական ջրավազաններ կանխելու համար:

5

Ապահովել ջրօգտագործման շարունակական վերահսկողություն՝ քաղցրահամ ջրի խողովակաշարերի վրա տեղադրված ջրաչափիչ սարքերի և ջրամբարներում ջրի մակարդակի մոնիտորինգի ավտոմատացված համակարգի միջոցով:

Այս նախաձեռնությունները նախատեսվում է ավարտել մինչև 2027 թվականը:

6. Տեղական համայնքներ
7. Շրջակա միջավայրի պահպանություն և կայունություն
8. Կլիմայի փոփոխություն
9. Հավելվածներ

Զրառի ծավալ

GRI 303-3, SASB EM-MM-140a.1

2024թ-ին Ընկերությունը շարունակում էր շահագործել ջրառի 13 կետ, ներառյալ Մականաջուրը, Սակքար 1 և 2, Փուխրուտը, մի քանի կետեր Ողջի գետի երկայնքով, Գեղիի ջրամբարը և «Արցախ» ջրահեռացման թունելը: Զրի այս աղբյուրներն օգտագործվում են ինչպես տեխնիկական աշխատանքների՝ հանքաքարի վերամշակման, փոշու նստեցման, մեքենաների և սարքավորումների լվացման, այնպես էլ կոմունալ կարիքների, օրինակ՝ տնկարանի ոռոգման համար:

Տարվա ընթացքում ջրառի ընդհանուր ծավալը կազմել է 50,650 մեգալիտր: Այդ ծավալի մեծ մասը՝ մոտ 49,960 մեգալիտրը, կամ տեխնոլոգիական նպատակների համար ջրօգտագործման մոտ 99%-ը, օգտագործվել է հարստացուցիչ ֆաբրիկայի կողմից, հիմնականում հանքաքարի մանրացման և ֆլոտացիայի գործընթացների ընթացքում: Մնացած մասն օգտագործվել է օժանդակ աշխատանքների, այդ թվում՝ մեքենաների սպասարկման, կանաչապատ տարածքների ոռոգման և բնապահպանական կառավարման աշխատանքների համար:

Վերցված ջրի մեծ մասը՝ մոտ 48,383 մեգալիտրը, դասակարգվել է որպես քաղցրահամ ջուր, որտեղ լուծված պինդ նյութերի ընդհանուր քանակը (TDS) կազմել է 1,000 մգ/լ կամ պակաս: Մնացած 2,267 մեգալիտրը ստացվել է այլ աղբյուրներից՝ լուծված պինդ նյութերի ընդհանուր քանակի ավելի բարձր ցուցանիշով (TDS > 1,000 մգ/լ), հիմնականում «Արցախ» ջրահեռացման թունելից:

Զրառի ընդհանուր ծավալը (մեգալիտրերով)³⁴

Ցուցանիշ	2023թ.	2024թ.	Տոկոսային փոփոխություն
Զրառի ընդհանուր ծավալ	47,164	50,650	7.39%
Մակերևութային ջրեր՝ ներառյալ ճահիճներ, գետեր, լճեր	47,027	50,487	7.36%
Երրորդ կողմին պատկանող ջուր (քաղաքային և ջրամատակարարման այլ համակարգեր)	137	163	18.98%

2024թ-ին մակերևութային ջրերի օգտագործման ծավալի աճը հիմնականում պայմանավորված է տարվա ընթացքում վերամշակված հանքաքարի ավելի մեծ ծավալով: 2024թ-ին 899,626 տոննա ավել հանքաքար է մշակվել, քան 2023թ-ին:

Երրորդ կողմերից գնվող ջրի ծավալի աճը հիմնականում պայմանավորված է Կապանի և Երևանի քաղաքային կոմունալ ծառայություններից ձեռք բերված ջրի ավելի

Մենք շարունակել ենք ջրի որակի ամսական մոնիտորինգը ջրառի կետերում՝ հսկողություն ապահովման նպատակով, կենտրոնանալով այնպիսի պարամետրերի վրա, ինչպիսին TDS-ն է: Զրաչափման ենթակառուցվածքի բացակայության դեպքում ջրառի ծավալները գնահատվել են ներքին չափումների և հոսքի մոդելավորման հիման վրա:

Հիմք ընդունելով Ընկերության ռիսկերի վրա հիմնված կառավարման մոդելը և ISO 14001:2015 ստանդարտով հավաստագրումը՝ 2023թ-ին իրականացվել էր ջրառի կետերի ռիսկերի գնահատում, օգտագործելով 5x5 մատրիցան, որը կիրառելի է 2024թ-ին: Այդ գնահատման շրջանակում ջրառի բոլոր կետերում գնահատվել է ջրի ելակետային մակարդակը՝ օգտագործելով Համաշխարհային ռեսուրսների ինստիտուտի (WRI) Aqueduct գործիքի տվյալները:

Մեր գործունեության իրականացման տարածքներից ոչ մեկը չի դասակարգվել որպես ջրի ելակետային մակարդակի բարձր (40-80%) կամ ծայրահեղ բարձր (>80%) անբավարարություն ունեցող: Զրառի որոշ հիմնական կետեր գնահատվել են որպես միջին անբավարարություն (20%-ից ավել) ունեցող, ներառյալ Սակքար 1, Սակքար 2, Փուխրուտ և Ողջի գետի որոշ հատվածներ:

մեծ ծավալներով: Գնված ջրի մեծ մասը Կապանում օգտագործվել է Ընկերության տնկարանի ոռոգման համար: Հարկ է նշել, որ 2024թ-ին տնկարանի ջրամատակարարման գծի վրա տեղադրվել է ջրաչափիչ սարք, ինչը թույլ է տալիս ավելի ճշգրիտ արձանագրել սպառումը: Երևանում ջրի օգտագործման ծավալի աճը կապված է երկու նոր վարչական գրասենյակների բացման հետ:

³⁴ Ստորգետնյա կամ արդյունաբերական ջրեր չեն օգտագործվել:

Արտանետվող ջրի ծավալ

GRI 303-4, SASB EM-MM-140a.1

2024թ-ին արտանետվող ջրի ընդհանուր ծավալը կազմել է մոտավորապես 39,318 մեգալիտր, որի մեծ մասը արտանետվել է մակերևութային ջրային ավազաններ՝ համաձայն գործող ջրօգտագործման թույլտվության և բնապահպանական օրենսդրության:

Արտանետված ջրի ընդհանուր ծավալը (մեգալիտրերով)³⁵

Ցուցանիշ	2023թ.	2024թ.	Տոկոսային փոփոխություն
Արտանետված ջրի ընդհանուր ծավալն ըստ վերջնակետի	36,692	39,318	7.16%
Մակերևութային ջրեր, ներառյալ գետեր, լճեր, ճահիճներ	36,654	39,270	7.14%
Երրորդ կողմին պատկանող ջուր	39	48	23.08%
Քաղցրահամ ջուր	23	23	0%
Այլ	36,631	39,247	7.14%

Ջրի արտանետման կետերը ներառում են բազմաթիվ արտադրական և քաղաքային կետեր, որոնցից յուրաքանչյուրում պարբերաբար իրականացվում է մոնիտորինգ: Հիմնական արտանետման կետը Արծվանիկի պոչամբարն է, որտեղ ջուրը 4-րդ թունելից հոսում է Աճանան գետ: Օրենսդրության պահանջների հետ համապատասխանությունն ապահովելու համար՝ ընկերության արտադրական գործընթացով անցնող այս

ջուրը ստուգվում է տարբեր աղտոտիչների առկայության տեսանկյունից: Ջրի լրացուցիչ արտանետման կետեր կան Գեղիում և Լեռնաձորում, որտեղ արտանետվում են որպես մաքուր քաղցրահամ ջուր դասակարգված հովացնող համակարգի ջրերը: Ողջի գետ ջուրը արտանետվում է նստվածքային ավազաններից, ինչպես նաև Քաջարանի և Կապանի քաղաքային կոյուղու համակարգերից:

Արտանետված ջրի ընդհանուր ծավալի բացվածքը 2024թ.

Արտանետման կետեր	Կեղտաջրերի կատեգորիա	Կեղտաջրերի ծավալ (մեգալիտրերով)	Արտանետման տվյալներ
Աճանան գետ (Ողջի գետի Նորաշենիկ վտակ)	Այլ կարգի ջուր (տեխնոլոգիական կեղտաջրեր)	39,248	Արծվանիկի պոչամբարի պարզվածք
Գեղի գետ	Ստանդարտ մաքուր քաղցրահամ ջուր	11	1-ին վերելքի պոմպակայանի հովացման համակարգի ջրերի ավելցուկ
Լեռնաձորի առու	Ստանդարտ մաքուր քաղցրահամ ջուր	11	2-րդ վերելքի պոմպակայանի հովացման համակարգի ջրերի ավելցուկ
Ողջի գետ	Արդյունաբերական ստանդարտ մաքուր քաղցրահամ ջուր	1	Հանքանյութի նմուշների կտրման տեղամասի մեխանիկական մաքրումից հետո արտանետված ջուր (հավելյալ մաքրում չի պահանջվում)
Քաջարանի կոյուղու կոլեկտոր	Արդյունաբերական և կենցաղային, պահանջվում է մաքրում	20.2	Կենցաղային կեղտաջրեր
Կապանի և Երևանի կոյուղու կոլեկտոր	Կենցաղային, պահանջվում է մաքրում	27.6	Կենցաղային կեղտաջրեր
Բաց թողնված ջրի ընդհանուր ծավալը		39,318	

³⁵ Արծվանիկի պոչամբարից Աճանան գետ արտանետված կեղտաջրերի ծավալը չափվել և որոշվել է ջրաչափի միջոցով: Մյուս բոլոր դեպքերում արտանետված ջրի ծավալը որոշվել է օգտագործված ջրի ծավալների վրա հիմնված հաշվարկի միջոցով:

Կեղտաջրերի որակի վերահսկողությունն իրականացվում է հավատարմագրված լաբորատորիաների և տեղական գործընկերների, այդ թվում՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և Քաջարանի կոմունալ ծառայության հետ համատեղ, որոնք պատասխանատու են քաղաքային/կենցաղային կեղտաջրերի որակի

SASB EM-MM-140a.2.]

Հաշվետու տարվա ընթացքում կեղտաջրերի որակը գնահատվել է երկու հիմնական վայրում: Աճանան գետի 50 նմուշներում հայտնաբերվել են մոլիբդենի, մանգանի, երկաթի և սուլֆատ իոնների նորման գերազանցող քանակ, ինչը պայմանավորված է պոչամբարից արտանետվող ջրով: Ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար մենք պլանավորում ենք իրականացնել ջրի մաքրման աշխատանքներ՝

Ջրի օգտագործում և սպառում

GRI 303-5, SASB EM-MM-140a.1

2024թ-ին օգտագործված ջրի ընդհանուր ծավալը կազմել է 11,332 մեգալիտր, ինչը մոտ 8%-ով գերազանցում է 2023թ. ցուցանիշը: Համապատասխան գետերի ավազաններում ջրի գնահատված ընդհանուր ծավալի՝ 535,995 մեգալիտրի հաշվով, Ընկերության ջրի սպառումը կազմել է այդ ռեսուրսների մոտ 2.11%-ը:



մոնիտորինգի համար, ինչպես նաև Շրջակա միջավայրի նախարարության և Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հետ համագործակցությամբ, որոնք պատասխանատու են արդյունաբերական կեղտաջրերի որակի վերահսկողության համար:

թույլատրելի նորմայի հետ համապատասխանությունն ապահովելու համար: Միևնույն ժամանակ, վերլուծվել է մետաղական ամրակների կտրման տեղամասի մոտ Ողջի գետից վերցված յոթ նմուշ, որոնցից միայն մեկում էր գերակշռում կախյալ մասնիկները, ինչը վկայում է այդ վայրում արտանետված ջրի համեմատաբար կայուն որակի մասին:

Ընկերության գործունեության ընթացքում ջրի սպառումն ուղեկցվում է մի շարք անվերականգնելի կորուստներով, որոնք բնորոշ են սովորական արդյունաբերական գործընթացներին: Չնայած որ գոլորշիացման կամ վերջնական արտադրանքում ներառված ջրի կոնկրետ չափը ներկայումս չի վերահսկվում, ըստ գնահատումների այդ անվերականգնելի կորուստներն առաջանում են մի քանի հիմնական արտադրական տարածքներից: Օրինակ, փոշու նստեցման համար օգտագործվող ջուրը գոլորշիանում է և չի կարող վերականգնվել, միևնույն ժամանակ տեղի է ունենում լրացուցիչ գոլորշիացում պարզվածքից և պատվարից: Ջուրը նաև ներծծվում է պոչամբարի հատակը՝ այն մշտապես դուրս հանելով շահագործման ցիկլից:

Ջուրն օգտագործվում է նաև տեխնոլոգիական գործընթացներում, օրինակ՝ հորատման և հանքաքարի հարստացման ընթացքում գոլորշու առաջացման համար, այսպիսով, ջրի որոշ քանակության կորուստ է առաջանում այդ գործողությունների ընթացքում: Բացի այդ, ջրի մի մասը մնում է վերջնական խտանյութում և չի վերադարձվում համակարգ: Հետագա կորուստները առաջանում են սարքավորումների հովացման համակարգերից, հիմնականում գոլորշիացման և համակարգի անարդյունավետության պատճառով: Վերջապես, արտադրական օբյեկտներում հիդրոմաքրման գործողություններն առաջացնում են տեխնոլոգիական ջրի կորուստներ, որոնց ծավալը գնահատվում է 3%-ից 6.5%:

Թափոնների կառավարում. մոնիտորինգ, նվազեցում և համապատասխանեցում օրենսդրության պահանջներին

GRI 3-3, SASB EM-MM-150a.10, GRI 306-1, GRI 306-2

ԶՊՄԿ-ն շարունակում է առաջնահերթություն տալ թափոնների պատասխանատու կառավարմանը իր գործունեության բոլոր ոլորտներում: Բնապահպանության բաժինը, թափոնների կառավարման համար պատասխանատու իր աշխատողների հետ համատեղ, վերահսկում է գործընթացի բոլոր փուլերը՝ թափոնների դասակարգումից և հավաքագրումից մինչև հեռացումը՝ կենտրոնանալով կայուն գործելակերպի վրա:

Թափոնների կառավարման մեր համակարգը համապատասխանում է տեղական և միջազգային չափորոշիչներին, այդ թվում՝ ISO և IFC ստանդարտներին, և պարբերաբար ստուգվում է: Ընկերության թափոնների կառավարման աշխատանքները վերահսկվում են ըստ սահմանված հիմնական ցուցանիշների, ներառյալ թափոնների նվազեցման, վերամշակման մակարդակի և կարգավորող ստանդարտների հետ համապատասխանության տեսանկյունից:

2024թ-ին Ընկերությունն առաջընթաց է գրանցել թափոնների կառավարման բարելավման ուղղությամբ՝ ապահովելով համապատասխանություն ինչպես բնապահպանական կանոնակարգերին, այնպես էլ կայուն զարգացման նպատակներին: Հիմնական առաջընթացը ներառում է.

- > Ստորաբաժանումների միջև համագործակցության բարելավում՝ թափոնների կառավարման գործընթացն էլ ավելի արդյունավետ դարձնելու համար:
- > Թափոնների կառավարման պլանի վերանայում՝ թարմացված բնապահպանական կանոնակարգերի հետ համապատասխանություն ապահովելու համար:
- > Քայլեր ուղղված լյումինեսցենտային լամպերի օգտագործման աստիճանաբար կրճատմանը՝ վերամշակման հնարավորությունների սահմանափակ առկայության պատճառով:
- > Կայուն այլընտրանքների, օրինակ՝ պլաստիկի փոխարեն կտորե պարկերի օգտագործման խրախուսումը կարող է օգնել նվազեցնել պլաստիկ թափոնները:

Մենք վերանայել ենք մեր Վտանգավոր թափոնների կառավարման պլանը՝ բարձր ռիսկայնություն ունեցող նյութերի հետ անվտանգ կառավարելու համար: Ընկերությունը կառավարում է տարբեր թափոնների հոսքեր՝ թափոնի յուրաքանչյուր տեսակի համար սահմանված ընթացակարգերի միջոցով: Դրանց թվում են՝ մեքենաների և տեխնիկական աշխատանքներում օգտագործվող կապարե կուտակիչները և գրասենյակային սարքերի մարտկոցները, տեխնիկայի և մեքենաների սպասարկման համար օգտագործված յուղերը, մետաղի ջարդոնները, աղտոտված ավազը և մետաղների մշակումից առաջացած լաբորատոր թափոնները, ինչպես նաև վտանգավոր շինանյութերը և աղտոտված տեքստիլի:

Հատուկ թափոնների արդյունավետ և անվտանգ կառավարումն ապահովելու համար ԶՊՄԿ-ն համագործակցում է այդ խիստ կանոնակարգվող ոլորտում գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող երրորդ կողմ հանդիսացող կապալառուների հետ: Այս համագործակցությունը հնարավորություն է տալիս օգտագործել թափոնների մշակման առաջադեմ տեխնոլոգիաներ, ներառյալ յուղերի և տեքստիլ թափոնների պիրոլիզը և մետաղի ջարդոնի վերամշակումը վերօգտագործվող հումքի:

Թափոնների վերամշակումով զբաղվող երրորդ կողմերի կողմից պայմանագրային և իրավական պարտավորությունների իրականացումն ապահովելու համար մենք պարբերաբար այցելություններ ենք իրականացնում նրանց աշխատանքային տարածք՝ թափոնների կառավարման գործընթացներին հետևելու և վերահսկելու համար: Բացի այդ, մենք պարբերաբար խնդրում ենք տրամադրել պահանջվող թույլտվությունների և լիցենզիաների պատճենները՝ նրանց գործունեության համապատասխանությունը գործող օրենսդրության պահանջներին ստուգելու համար:

GRI 306-3, SASB EM-MM-150a.7

Բնապահպանության բաժնի աշխատակիցը բոլոր արտադրամասերից հավաքում և գրանցում է թափոնների վերաբերյալ տվյալներն ամսական կտրվածքով: Տվյալները պահվում են Բնապահպանության բաժնի տվյալների բազայում, ինչը թույլ է տալիս հետևել թափոնների հոսքերին և ապահովել կառավարման գործընթացների համապատասխանությունը արտաքին կարգավորող և ներքին չափանիշներին:

2024թ-ին Ընկերության գործունեության արդյունքում առաջացել է 36,943,886 տոննա թափոն, որից 19,153,967 տոննան վտանգավոր թափոններն են, իսկ 17,789,918 տոննան՝ արտադրության և սպառման թափոնները: Հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատ վտանգավոր թափոնների ծավալը նվազել է մոտ 10%-ով: Այնուամենայնիվ, թափոնների ընդհանուր ծավալն աճել է արտադրության և սպառման թափոնների ծավալի ավելացման պատճառով:

Թափոնների առաջացումն ըստ տեսակների (տոննա)

Թափոնի տեսակ	2023թ.	2024թ.	Տոկոսային
Վտանգավոր թափոններ	21,232,189	19,153,967	-9.79%
Արտադրության և սպառման թափոններ	15,152,336	17,789,918	17.41%
Թափոնների ընդհանուր ծավալ	36,384,525	36,943,886	1.54%

2,086 տոննա թափոն ուղղվել է օգտահանման, որը ներառում է վերամշակումը և վերաօգտագործման նախապատրաստումը՝ արտացոլելով շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու Ընկերության շարունակական ջանքերը:

Օգտահանմանն ուղղված թափոններ (տոննա)

Թափոնի տեսակը	2023թ.	2024թ.	Տոկոսային փոփոխություն
Վտանգավոր թափոններ	1,733.55	1,887.31	8.87%
Նախապատրաստում վերաօգտագործման	137.27	29.49	-78.52%
Վերամշակում	1,596.28	1,858	16.38%
Արտադրության և սպառման թափոններ	1,879.24	198.78	-89.42%
Նախապատրաստում վերաօգտագործման	278.99	166.46	-40.33%
Վերամշակում	1,600.25	32.32	-97.98%
Ընդամենը	3,612.80	2,086.09	-42.26%

GRI 306-4

Հաշվետու ժամանակահատվածում վտանգավոր թափոնների հեռացումը հիմնականում իրականացվել է աղբավայրերում տեղադրման միջոցով, որոշ մասը՝ այրման միջոցով, մինչդեռ արտադրության և սպառման թափոնները ուղղվել են աղբավայրեր՝ հիմնականում առանց այրման: Այդ միտումներին ի պատասխան՝ Ընկերությունը ակտիվորեն

ուսումնասիրում է թափոնների մշակման նորարարական տեխնոլոգիաները՝ աղբավայրերից կախվածությունը նվազագույնի հասցնելու և թափոնների վերամշակման ընդհանուր ցուցանիշները բարելավելու համար:

Առաջիկայում Ընկերությունը նախանշել է մի քանի հիմնական նախաձեռնություններ թափոնների

կառավարման արդյունավետությունը բարձրացնելու համար, որոնք ներառում են փայտանյութի թափոնների վերաօգտագործման տարբերակների ուսումնասիրությունը և անվադողերի ու այլ ռետինե իրերի վերամշակման իրագործելիության գնահատումը: Նախաձեռնությունների նպատակն է կրճատել թափոնները դրանց առաջացման աղբյուրում և հնարավորության դեպքում

SASB EM-MM-150a.9

Բնապահպանության բաժնի տվյալների բազայի համաձայն՝ 2024թ-ին վտանգավոր նյութերի և թափոնների հետ կապված գրանցվել է ընդհանուր թվով 12 պատահար: Օրենսդրության պահանջներին համաձայն՝ Կայուն զարգացման տնօրինությունը բոլոր պատահարների մասին հայտնել է Սյունիքի


խրախուսել նյութերի վերաօգտագործումը: Այդ նախաձեռնությունները ցուցադրում են շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ Ընկերության պատասխանատու մոտեցումը և օգնում են ապահովել երկարաժամկետ գործառնական արդյունավետություն: Ընկերությունը մինչև 2025թ. նախատեսում է զգալիորեն ավելացնել թափոնների վերամշակման ծավալները:

մարզային բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին: Չնայած պատահարների բնույթի և ազդեցության բազմազանությանը, յուրաքանչյուրին տրվել է օպերատիվ արձագանք՝ ուղղված դրանց տեղայնացմանը, հետևանքների վերացմանը և կրկնության կանխարգելմանը:

Մթնոլորտ արտանետումներ. նվազեցմանն ուղղված նախաձեռնություններ և անվտանգ աշխատանքային միջավայրի ապահովում

GRI 3-3

Ընկերությունն ակտիվորեն աշխատում է օդի որակը բարելավելու և իր գործունեության արդյունքում արտանետումները կրճատելու ուղղությամբ: Առաջնահերթ խնդիրը եղել է առավել անվտանգ և առողջ աշխատավայր ստեղծելը՝ մշակելով լուծումներ արտադրական տարածքներում ասպիրացիոն (օդի հեռացման) համակարգերի արդիականացման համար: Մենք նաև շարունակել ենք արդիականացնել մեր տրանսպորտային միջոցները՝ մթնոլորտ արտանետումները կրճատելու նպատակով:



1. ԶՊՄԿ-ի մասին
2. Տնտեսական ազդեցություն
3. Կորպորատիվ կառավարում
4. ԶՊՄԿ-ի աշխատողները
5. Բարեկեցության և կայունության ապահովում աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման մշակույթի ձևավորման միջոցով

6. Տեղական համայնքներ
7. Շրջակա միջավայրի պահպանություն և կայունություն
8. Կլիմայի փոփոխություն
9. Հավելվածներ

2024թ-ին փոշու վերահսկումը շարունակել է մնալ մեր աշխատանքների հիմնական ուղղություններից մեկը: Հատուկ ստեղծված թիմը պատասխանատու է ասպիրացիոն համակարգերի աշխատանքի վերահսկման համար, մասնավորապես, խոշոր ջարդման արտադրամասում, որտեղ փոշին հավաքվում և վերօգտագործվում է հարստացման գործընթացում: Բնապահպանության բաժինը սերտորեն համագործակցում է այդ թիմի հետ՝ նմանատիպ համակարգերն ընդլայնելու և այլ արտադրական օբյեկտներում ներդնելու համար:

Մթնոլորտ արտանետումների մոնիտորինգն իրականացվում է Օդի որակի կառավարման պլանի և Արտանետումների կանխարգելման կառավարման

GRI 305-7, SASB EM-MM-120a.1

Մթնոլորտ արտանետումների տվյալները հավաքելու և հաշվարկելու համար օգտագործվել է համակցված մոտեցում: Որոշ դեպքերում արտանետումները չափվել են անմիջականորեն, որոշ դեպքերում կիրառվել են հաշվարկման ինժեներական մեթոդներ: Հաշվի են առնվել նաև տեղական օրենսդրությամբ սահմանված սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվները: Որպես ստանդարտ գործելակերպ՝ Ընկերությունը հիմք է ընդունում արտանետումների տեղական չափանիշները և արտանետման սահմանային

պլանի համաձայն, որոնք վերահսկվում են Կայուն զարգացման գծով տնօրենի և Բնապահպանության բաժնի կողմից: Այդ պլանները ապահովում են արտանետումների ծավալի կանոնավոր մոնիտորինգը և անհապաղ համապատասխան միջոցառումների ձեռնարկումը՝ խնդիրների առաջացման պարագայում:

Մեր մոնիտորինգի համակարգը ամրապնդելու նպատակով 2024թ-ին օդի մոնիտորինգի կետերի քանակն ավելացրել ենք մինչև 12: Մոնիտորինգի կետերի միջոցով ստացվում են տարբեր տարածքներում իրական ժամանակում տվյալներ օդի որակի վերաբերյալ: Տվյալները պահվում են կենտրոնական համակարգում, որն օգնում է ապահովել բարձր ցուցանիշներ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում:

թույլատրելի կոնցենտրացիանները՝ ապահովելով ամբողջական համապատասխանություն տեղական պահանջներին, նախքան հնարավորության դեպքում միջազգայնորեն սահմանված սահմանաչափերի կամ ուղեցույցների հետ համապատասխանության գնահատումը:

Մոնիտորինգի տարեկան հաշվետվության համաձայն՝ 2024թ-ին մթնոլորտ արտանետումների ընդհանուր ծավալը կազմել է 891.57 տոննա, որը մի փոքր ցածր է 2023թ-ին գրանցված 913 տոննայի համեմատ:

Մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի ծավալը (տոննա)³⁶

Նյութ	2023թ.	2024թ.	Տոկոսային փոփոխություն
Ազոտի օքսիդներ (NOx)	59.63	53.96	-9.51%
Ծծմբի երկօքսիդ (SOx)	0.09	0.06	-33.33%
Կայուն օրգանական աղտոտիչ նյութեր (POPs)	0	0	0.00%
Ցնդող օրգանական միացություններ (VOCs)	0.08	0.08	0.00%
Օդի վտանգավոր աղտոտիչներ (HAP)	0.0000064	0.0000038	-40.63%
Պինդ մասնիկներ (PM)	694.47	684.37	-1.45%
Ածխածնի օքսիդ (CO)	154.35	150.30	-2.62%
Այլ աղտոտող արտանետումներ ³⁷	4.31	2.80	-35.03%

³⁶ Ներկայումս մենք չունենք արտանետումների՝ ըստ առանձին տարածքների բաշխումն արտացոլող տվյալներ: Այդ տվյալները հաշվարկվում են մեր կողմից մշակվող հանքաքարի ծավալի հիման վրա:

³⁷ Սնդիկի (Hg) և կապարի (Pb) մոնիտորինգ չի իրականացվում:

Պոչամբարային տնտեսություն և մոնիտորինգ. անվտանգության համակարգերի ամրապնդում և համապատասխանեցում միջազգային ստանդարտներին

GRI 3-3, SASB EM-MM-540a.1, EM-MM-540a.2, EM-MM-540a.3

Պոչամբարային տնտեսության պատասխանատու կառավարումը շարունակում է մնալ ԶՊՄԿ-ի առաջնահերթ խնդիրներից մեկը: Մենք մեծ կարևորություն ենք տալիս անվտանգությանը, բնապահպանությանը և համապատասխանությանը համաշխարհային լավագույն փորձին: Աշխատանքների մեծ մասն ուղղված է Արծվանիկի պոչամբարի կառավարմանը, որը կենսական նշանակություն ունի մեր գործունեության և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակների համար³⁸:

Արծվանիկ գետի կիրճում՝ Կապանից 5 կիլոմետր հյուսիս-արևելք գտնվող Արծվանիկի պոչամբարը շահագործվում է 1977թ-ից: Այն կառուցվել է վերընթաց եղանակով և ի սկզբանե նախագծվել էր մինչև 377 միլիոն խորանարդ մետր տարողունակության համար՝ 325 միլիոն խորանարդ մետր շահագործման հաստատված սահմանաչափով:

2022-2024թթ. ժամանակաշրջանում ԶՊՄԿ-ն իրականացրել է տեխնիկական արդիականացումներ պատվարի անվտանգությունը բարելավելու համար, ինչի շրջանակում կառուցվել է նոր դրենաժային համակարգ պատվարում ջրի ճնշումը նվազեցնելու համար, որը թույլ է տվել բարելավել կառույցի ամրությունը: 2023-2024թթ. ԶՊՄԿ-ն համագործակցել է «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ պոչատար խողովակաշարերի, թունելների և կամուրջների վիճակը գնահատելու համար: Գնահատումը հաստատել է բացահայտել է հետագա բարելավում պահանջող հատվածները:

Մենք նաև զգալի առաջընթաց ենք գրանցել մոնիտորինգի համակարգի ամրապնդման գործում: Առ այսօր տեղադրվել են 49 ձեռքով չափվող պիեզոմետր, 10 առցանց պիեզոմետր, 24 դեֆորմացիայի ցուցիչ սարք և մի քանի վիբրացիոն սենսորներ, որոնք ապահովում են անընդհատ թարմացվող տվյալներ ստորգետնյա ջրերի մակարդակի, կառուցվածքային փոփոխությունների և սեյսմիկ ակտիվության վերաբերյալ: Մոնիտորինգի արդյունքները ցույց են տվել շրջակա ստորգետնյա ջրերի մակարդակի 1-ից 1.5 մետր նվազում՝ պայմանավորված

դրենաժային հորերից մղվող ջրի ծավալով, ինչը վկայում է հորատանցքերի և պոմպերի արդյունավետ աշխատանքի մասին:

Ընթանկարում մենք պլանավորում ենք տեղադրել լրացուցիչ սեյսմիկ սենսորներ 2024–2025թթ. ընթացքում՝ երկրաշարժի դեպքում մեր վաղ նախագգույացման կարողություններն, էլ ավելի ամրապնդելու համար: Պատվարի կայունությունը պահպանելու և էրոզիան կանխելու համար մենք նաև տնկել ենք բուսականություն, այդ թվում՝ խոտաբույսեր և տարբեր ծառատեսակներ՝ միաժամանակ ջրահեռացման որոշակի ենթակառուցվածքը ավելի անվտանգ վայրեր տեղափոխելով:

Շրջակա միջավայրի անվտանգությունն ու կայունությունը դիտարկելով որպես առաջնահերթություն՝ մենք նախաձեռնել ենք կայունության համապարփակ գնահատում, որի մասին նշվել էր նաև 2023թ-ին: Գնահատումը ներառում է բազմաթիվ հետազոտություններ, որոնք նախատեսվում է ամբողջությամբ ավարտել 2026թ. սկզբում: Նախագիծը մշակվում է մեր շահագրգիռ կողմերի, մասնավորապես, Կապան համայնքի, ակտիվ մասնակցությամբ: Մենք մշակում ենք լուծումներ, որոնք բավարարում են ոչ միայն Ընկերության, այլև համայնքի կարիքները:

Մենք ընդունում ենք, որ պոչամբարի շահագործումն ազդեցություն ունի հարակից համայնքների վրա՝ պայմանավորված հողերի սահմանափակ հասանելիությամբ: Այդ հարցը լուծելու համար ԶՊՄԿ-ն ֆինանսական աջակցություն է տրամադրում շրջակա հինգ գյուղերի բնակիչներին ամսական կտրվածքով: Մենք նաև առաջնահերթություն ենք տալիս պոչամբարին առնչվող աշխատանքների համար տեղացի աշխատողներին աշխատանքի ընդունելուն՝ դրանով իսկ նպաստելով մարզի տնտեսության զարգացմանը:

Մենք հանձն եք առել ապահովել ամբողջական համապատասխանություն Պոչամբարների կառավարման գլոբալ արդյունաբերական ստանդարտին (GISTM) մինչև 2028թ:

³⁸ ԶՊՄԿ-ն ավարտել է Դարագամի, Ողջի և Փուխրուտ երեք հին պոչամբարների փակումը և դրան հաջորդող տեղանքի վերականգնման աշխատանքները: Այդ օբյեկտները պաշտոնապես փոխանցվել են ՀՀ կառավարությանը և այլևս չեն վերահսկվում և չեն շահագործվում ԶՊՄԿ-ի կողմից:

Կենսաբազմազանության կառավարում և էկոհամակարգի վերականգնում. գործունեության համապատասխանեցում բնապահպանական ստանդարտներին և միջազգային ընդհանուր սկզբունքներին

GRI 3-3, 304-1, 304-2, 304-3, 304-4



Կենսաբազմազանության պահպանումը շարունակում է մնալ ԶՊՄԿ-ի շրջակա միջավայրի պահպանության ռազմավարության հիմնասյուներից մեկը: 2024թ-ին մենք շարունակեցինք իրականացնել էկոհամակարգերի և կենսաբազմազանության կառավարման պլանը, որը մեր բնապահպանական կառավարման

համակարգի անբաժանելի մասն է կազմում: Ընկերության Գլխավոր տնօրենի կողմից հաստատված այդ պլանը համապատասխանեցված է բուսական և կենդանական աշխարհի վերաբերյալ ՀՀ օրենսդրությանը, ՄՖԿ-ի կատարողականի 6-րդ ստանդարտին, Բեռնի կոնվենցիային, Հայաստանի Կարմիր գրքերին, Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ) Կարմիր ցուցակին և կենսաբազմազանության մոնիտորինգի մեր հաշվետվություններին:

Գործառնական համատեքստ և շրջակա միջավայրի զգայունություն

Ընկերությունը զբաղեցնում է բավականին ընդարձակ տարածք՝ գտնվելով ծովի մակարդակից 1,400 մետր բարձրության վրա: Այս տարածքով և նրա շրջակայքով անցնում են երեք հիմնական և մի քանի փոքր մակերևութային ջրային հոսանքներ: Այդ բնութագրերի շնորհիվ տարածքը դասակարգում են որպես համակցված էկոհամակարգ, որը ներառում է ինչպես ցամաքային, այնպես էլ թաղցրահամ ջրերի էկոհամակարգերի տարրեր:

ԶՊՄԿ-ի արտադրական գործունեության տարածքը ներառում է բացահանքը, արտադրական և օժանդակ

օբյեկտները և պոչամբարը: Բացահանքի շրջակա տարածքն առանձնահատուկ էկոլոգիական նշանակություն ունի և գտնվում է «Արևիկ» ազգային պարկից ընդամենը 1,300 մետր հարավ, որն իրենից ներկայացնում է կենսաբազմազանությամբ հարուստ պահպանվող լանդշաֆտ, որտեղ բնակվում են էնդեմիկ և միգրացվող տեսակներ, և որը հանդիսանում է թռչունների կարևոր բնակության վայր միգրացիայի ուղիների երկայնքով:

Տեղական վայրի բնության հետ հնարավոր փոխազդեցությունը վերահսկելու համար հանքի

բուֆերային գոտու չորս հիմնական տարածքներում տեղադրվել են լուսանկարչական թակարդներ: Այդ սարքերը մշտապես գրանցում են կենդանիների ակտիվությունը՝ օգնելով ստեղծել կենսաբազմազանության վերաբերյալ տվյալների բազա երկարաժամկետ կտրվածքով: Այնուամենայնիվ, կենսաբազմազանության ներկայիս ուսումնասիրությունները դեռևս թույլ չեն տալիս գնահատել պոպուլյացիայի միտումները կամ բացահայտել ազդեցությունը հատուկ տեսակների վրա: Այդ բացերը լրացնելու համար 2024թ-ին նախաձեռնվել է ավելի մանրակրկիտ ուսումնասիրություն՝ ՎՋԵԲ-ի կենսաբազմազանության միջազգային ստանդարտների հետ համապատասխանություն ապահովելու նպատակով:

Հայտնաբերված ապրելավայրերը օգնում են հասկանալ մեր ազդեցության մասշտաբը և ցուցիչ են հանդիսանում կենսաբազմազանության վրա ցանկացած հնարավոր բացասական ազդեցությունը նվազեցնելու ջանքերում: Ուսումնասիրության այս փուլում դեռևս չի որոշվել բուսատեսակների և կենդանատեսակների ճշգրիտ թիվը՝ ԲՊՄՄ Կարմիր ցուցակի և Ընկերության արտադրական գործունեության տարածքում պահպանվող տեսակների ազգային ցուցակի համաձայն:

Կենսաբազմազանության տարեկան մոնիտորինգը շարունակում է հետևել բուսատեսակների և կենդանատեսակների առկայությանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով Կարմիր գրքում գրանցված և էնդեմիկ տեսակներին: Նախորդ տարիներին փաստագրված տեսակները, ինչպիսիք են Զանգեզուրի զանգակը (Campanula zangezura), Բոշխ սակավաժաղիկը (Carex oligantha Steud), Կովկասյան կատվաօձը (Telescopus fallax) և Հայկական իժը գրանցվել էին նաև 2024թ-ին, ինչը վկայում է բնական միջավայրի որոշակի կայունության մասին:

Թեև աշխատանքները շարունակվում են, դեռևս առկա են մի շարք խնդիրներ կենսաբազմազանության վրա ազդեցության վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը ստանալու և այդ ազդեցությունը կառավարելու հետ կապված, ներառյալ՝

- Բացակայում են տվյալներ «Արևիկ» ազգային պարկի կենսաբազմազանության և Ընկերության գործունեության հետ դրա անմիջական փոխազդեցության վերաբերյալ:
- Աղտոտիչների ազդեցությունը տեղական կենսաբազմազանության վրա դեռևս չի գնահատվել:
- Գիշերային և միգրացիոն տեսակների վրա աղմուկի, լույսի և ենթակառուցվածքների զարգացման (հատկապես՝ ճանապարհների) հնարավոր ազդեցությունը՝ քանակապես չի գնահատվել:
- Թեև բացահանքի տարածքում իրականացվել է ստորգետնյա ջրերի մոնիտորինգ, նախատեսվում է նաև վերլուծել դրանց ազդեցությունը կենսաբազմազանության վրա:

Գիտելիքների այդ բացերը սահմանափակում են կենսաբազմազանության կորուստների, օգոտների կամ վերականգնման հնարավորությունների քանակական գնահատման մեր կարողությունը: Այնուամենայնիվ, 2024թ-ին մեկնարկած կենսաբազմազանության ուսումնասիրության և այժմ արդեն կիրառվող մոնիտորինգի թարմացված գործիքների շնորհիվ, մենք ակնկալում ենք ստանալ շրջակա միջավայրին առնչվող ավելի մանրամասն տեղեկատվություն 2025թ. հաշվետվողականության ցիկլի համար:



Շրջակա միջավայրի վերականգնում և հանքի փակման պլանավորում. վերականգնողական աշխատանքների ինտեգրում ակտիվ գործողությունների և բնապահպանական երկարաժամկետ նպատակների հետ

GRI 3-3, 304-3

Պատասխանատու հանքարդյունաբերության և շրջակա միջավայրի կայունության նկատմամբ իր հանձնառության շրջանակում, ԶՊՄԿ-ն շարունակում է ներառել հողերի ընթացիկ ռեկուլտիվացումը իր ամենօրյա գործունեությունում՝ ապահովելով շրջակա միջավայրի վերականգնումը, ակտիվ հանքարդյունաբերությանը զուգահեռ: Ռեկուլտիվացիոն աշխատանքներն իրականացվում են Ընկերության միջոցների հաշվին և տեղական կանոնակարգերին համապատասխան՝ կատարելով հատկացումներ պետական բյուջե, հողային ռեսուրսների վերականգնման նպատակով:

Վերականգնման և բնապահպանական նախաձեռնություններ

2024թ-ին Ընկերությունը ներդրել է մոտ

\$53,457

Կենսաբազմազանության ուսումնասիրությունների իրականացման և

\$19,092

վերականգնման աշխատանքների համար անհրաժեշտ նոր ռեսուրսներ ձեռք բերելու համար

21.6 հեկտար հողի վերականգնում, ներառյալ.

Արժվանիկի պոչամբարի մոտ 20 հեկտար տարածքում տնկվել է

3,038 ծառ

Ընդհանուր առմամբ տնկվել է

3,158 ծառ՝

ներառյալ տեղական և դիմացկուն ծառատեսակներ

Դարազամի լցակույտի 1.6 հեկտար տարածքում տնկվել է

120 ծառ

(60 կաղնի և 60 հացենի)՝ որպես ընթացիկ վերականգնման աշխատանքների մաս:

Արժվանիկի պոչամբարի և Դարազամի լցակույտի տարածքում Ընկերությունը ցանել է կորնգանի սերմեր հողի և բուսականության վերականգնմանն ուղղված նախաձեռնության շրջանակում:

Վերականգնման աշխատանքներն իրականացվել են համաձայն հետևյալ կանոնակարգերի պահանջների.

- > ՀՀ կառավարության N 1643-Ն (2017թ.) որոշումը հողերի ռեկուլտիվացման մասին,
- > ՀՀ բնապահպանության նախարարի N 365-Ն (2012թ.) հրամանը ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգը հաստատելու մասին,

> ՀՀ կառավարության N 1848-Ն (2021) որոշումը կենսաբանական վերականգնման ուղեցույցը հաստատելու մասին:

Վերականգնման աշխատանքները՝ ընթացիկ գործունեությանը զուգահեռ, ներկայացնում են կենսաբազմազանությունը բարելավելու և խախտված էկոհամակարգերը վերականգնելու մեր նպատակի իրագործման շարունակական աշխատանքը:

Հանքավայրի փակում

Ընկերությունը շարունակում է կատարել իր պարտավորությունները հանքի փակման պլանավորումը միջազգային լավագույն փորձին համապատասխանեցնելու ուղղությամբ, ինչպես նշված էր 2016թ-ին մշակված Հանքի փակման և վերականգնման պլանում: 2024թ-ին կարևոր փուլը եղավ Արժվանիկի պոչամբարի ռեկուլտիվացիոն շերտի օպտիմալացման ուսումնասիրության ավարտը: Ուսումնասիրության արդյունքում օգտագործել 0,5 մետր հաստությամբ հողային շերտ կապիլարային միջնաշերտի վրա՝ ջրաթափանցելիությունը զգալիորեն նվազեցնելու համար՝ ապահովելով երկարաժամկետ կայունություն տարբեր կլիմայական պայմաններում: Այդ ծածկույթն օգտագործվում է Արժվանիկի պոչամբարի պատվարի ընթացիկ ռեկուլտիվացման համար: Բացի այդ, ինչպես արդեն նշվել է, մենք նաև իրականացնում ենք Դարազամի պատվարի աստիճանական վերականգնում:

Առ այսօր հանքի փակման և ռեկուլտիվացիոն աշխատանքների համար հատկացվել է մոտ 10.37 միլիոն ԱՄՆ դոլար, որոնք ներառում են հողի վերականգնումը, ենթակառուցվածքի ապամոնտաժումը և շրջակա միջավայրի շարունակական մոնիտորինգը: Վերականգնման աշխատանքները ներառում են ռելիեֆի վերափոխում, տեղի բուսականության վերականգնում, մակերևութային ջրերի հոսքի կառավարում, ինչպես նաև հողի և ջրի որակի երկարաժամկետ մոնիտորինգ՝ էկոլոգիական կայունություն ապահովելու նպատակով:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների արդյունավետությունը գնահատելու համար մենք հետևում ենք կատարողականի հիմնական ցուցանիշներին, որոնք ներառում են վերականգնված հողատարածքը և բուսածածկույթը, ջրի և հողի որակի բարելավումը:

Կլիմայի փոփոխություն

- 128 — Կլիմայի փոփոխության կառավարում. թափանցիկության և հաշվետվողականության ապահովում
- 130 — Կլիմայի փոփոխության ռազմավարություն. կայունության և հնարավորությունների զարգացում ռազմավարության մշակման շնորհիվ
- 137 — Կլիմայական ռիսկերի կառավարում. նպատակ ունենալ նվազեցնել ածխածնի հետքը և բարձրացնել կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերի նկատմամբ կայունությունը
- 139 — Զերմոցային գագերի արտանետումներ. թիրախավորել արտադրության արդյունավետության բարելավումը



Կլիմայի փոփոխության կառավարում. Թափանցիկության և հաշվետվողականության ապահովում

GRI 3-3, SASB EM-MM-110a.2, IFRS2 5-7

ԶՊՄԿ-ն ընդունում է կլիմայական ռիսկերի կառավարման և ջերմոցային գազերի (ԶԳ) արտանետումների կրճատման ռազմավարության ամրապնդման կարևորությունը՝ այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքները համապատասխանեցնելով միջազգային ստանդարտներին, ներառյալ Զերմոցային գազերի արտանետումների վերաբերյալ արձանագրությունը և TCFD առաջարկությունները:

2024թ. նոյեմբերին Տնօրենների խորհուրդը հաստատել է Ընկերության Կլիմայի փոփոխության քաղաքականությունը: Թեև մենք ընդունում ենք կլիմայի փոփոխության ոլորտում գործնական քայլեր իրականացնելու և գործողությունների պլան մշակելու անհրաժեշտությունը, այդ քաղաքականության հաստատումը նույնպես կարևոր քայլ էր կլիմայի ազդեցությունը նվազագույնի հասցնելու, դիմակայունությունը բարձրացնելու և կայուն զարգացումը մեր գործունեության բոլոր ոլորտներում ինտեգրելու մեր հանրային պարտավորությունը կատարելու գործում: Կլիմայի փոփոխության քաղաքականությունը լրացնում է մեր Բնապահպանական և Կենսաբազմազանության քաղաքականությունները և կազմում է մեր ԲՄԿ սկզբունքների կառավարման կառուցվածքի հիմնական մասը:

Կլիմայի փոփոխության հետ կապված ԶՊՄԿ-ի աշխատանքներն ուղղորդում և կարգավորում են հետևյալ փաստաթղթերը.

Կլիմայի փոփոխության քաղաքականություն

1

TCFD հաշվետվություն և առաջարկություններ

2

ԶՊՄԿ-ի Տնօրենների խորհուրդը և բարձրաստիճան ղեկավարությունը պատասխանատու են ղեկարբոնիզացման և դիմակայունության բարձրացման հետ կապված ընդհանուր ռազմավարական նպատակների սահմանման համար: Այդ կառավարման համակարգն ապահովում է կլիմայական նպատակների ինտեգրումը ավելի լայն կորպորատիվ ռազմավարության և ռիսկերի կառավարման գործընթացներում: Այդ նպատակով Կայուն զարգացման տնօրինությունը պատասխանատու է Ընկերության կլիմայի փոփոխությանը վերաբերող նախաձեռնությունների վերահսկման համար և նախատեսում է մշակել Կլիմայի փոփոխության ռազմավարություն կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարով, որը հիմք կծառայի կոնկրետ նպատակներ սահմանելու և դրանք իրագործելու համար:

Ընկերությունը գիտակցում է, որ կլիմայի փոփոխության արդյունավետ կառավարումը պահանջում է գործունակ կառավարում ամենաբարձր մակարդակում: Թեև Ընկերության ղեկավարությունը և Տնօրենների խորհուրդը վերջին տարիներին առաջընթաց են գրանցել՝ ամրապնդելով վերահսկողության կառուցվածքը, քաղաքականությունները և հաշվետվողականության մեխանիզմները, մենք գիտակցում ենք, որ այդ գործընթացը շարունակական է իր բնույթով:

Շարունակական կատարելագործում է պահանջվում մասնավորապես հետևյալ ոլորտներում.

- > Արդյունավետ կառավարման կառուցվածքի ստեղծում, ներառյալ Տնօրենների խորհրդի, հանձնաժողովների և գործադիր ղեկավարության դերերի և պարտականությունների սահմանում,
- > Քաղաքականության, հսկողության համակարգի և մշակույթի ամրապնդում, մասնավորապես բարձր ռիսկային ոլորտներում,
- > Մասնագիտական կարողությունների և հաշվետվողականության ամրապնդում՝ Խորհրդի և/կամ գործադիր ղեկավարության անդամների համար կլիմայական ռիսկերի և հնարավորությունների վերաբերյալ դասընթացներ անցկացնելու միջոցով,
- > ԲՄԿ սկզբունքների ոլորտում փորձառության ավելացում Խորհրդի մակարդակով՝ ռազմավարական վերահսկողությունը և որոշումների կայացման գործընթացն ամրապնդելու նպատակով,
- > Համապատասխանության ապահովման և շարունակական կատարելագործման մշակույթի խթանում:

Կլիմայի փոփոխության կառավարման գործընթացին նպաստելու և հաշվետվողականությունը ամրապնդելու նպատակով՝ ԶՊՄԿ-ի գործադիր ղեկավարության վարձատրության պլաններում նախատեսվում է ներառել կայուն զարգացմանը վերաբերող ԿՀՏ-ներ:

Կլիմայի փոփոխության ռազմավարություն. կայունության և հնարավորությունների զարգացում ռազմավարության մշակման շնորհիվ

IFRS 2 — 14(a), IFRS 2 11-12



Կլիմայի փոփոխությունը վճռորոշ գլոբալ մարտահրավեր է, որը զգալի ռիսկեր և հնարավորություններ է ստեղծում Ընկերության համար բոլոր ոլորտներում: Այն ազդում է գործունեության,

մատակարարման շղթաների, օրենսդրական դաշտի և շահագրգիռ կողմերի ակնկալիքների վրա՝ պահանջելով Ընկերությունից վերանայել երկարաժամկետ արժեքի ստեղծման իր մոտեցումը: Հաշվի առնելով խնդրի հրատապությունը և բարդությունը՝ Ընկերությունը նպատակ ունի կլիմային վերաբերող հարցերը ներառել իր ռազմավարական պլանավորման, ռիսկերի կառավարման և գործառնական որոշումների կայացման գործընթացներում: Այդ մոտեցումը ոչ միայն բարձրացնում է բիզնեսի դիմակայունությունը, այլև հնարավորություն է տալիս Ընկերությանը նշանակալիորեն նպաստել գլոբալ մարտահրավերներին՝ անցում կատարելով ցածր ածխածնային արտանետումներով և կլիմայի փոփոխությանը դիմակայող տնտեսության:

ԶՊՄԿ-ն մշակում է Կլիմայի փոփոխության համապարփակ ռազմավարություն, որը կուղղորդի նրա երկարաժամկետ մոտեցումն ուղղված կլիմայական ռիսկերի կառավարմանը, ածխածնի արտանետումների կրճատմանը և համաշխարհային կլիմայական նպատակների հետ համապատասխանության ապահովմանը: Չնայած այս փուլում պաշտոնական փաստաթղթի բացակայությանը, ԶՊՄԿ-ն կիրառում է համապարփակ մոտեցում՝ կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրները բացահայտելու և գնահատելու համար, որոնք կարող են ազդել Ընկերության շահութաբերության, աճի և շահագրգիռ կողմերի շահերի վրա: Օգտագործելով մեծ թվով տվյալների աղբյուրներ, ներառյալ նախորդ ժամանակաշրջանների կատարողականի ցուցանիշները, ընթացիկ գործառնական ցուցանիշները և ապագայամետ կլիմայական սցենարները, ԶՊՄԿ-ն հստակ պատկերացում է կազմում սպառնացող ռիսկերի և հնարավորությունների մասին:

Տեղեկատվության աղբյուրները.

- 1

ԶՊՄԿ-ն օգտագործում է նախորդ ժամանակաշրջանների արտադրության տվյալները և ռեսուրսների սպառման օրինաչափությունները՝ անցյալի միտումները հասկանալու և ապագա ռազմավարությունները հիմնավորելու համար:
- 2

Վերլուծվում են էներգիայի և ածխածնային վարկերի գների շուկայական կանխատեսումները՝ դրանց ֆինանսական ազդեցությունը կանխատեսելու և ներդրումների վերաբերյալ հիմնավորված որոշումներ կայացնելու համար:
- 3

Կլիմայի փոփոխության կանխատեսումները կիրառվում են ազդեցության հավանականությունը և հնարավոր հարմարվողականության պլանները գնահատելու համար:

Շահագրգիռ կողմերի ներգրավում.

- Ընկերությունը համագործակցում է պետական մարմինների և տեղական համայնքների հետ՝ ջրօգտագործման կանոնակարգերի փոփոխությունները կանխատեսելու և հնարավոր կոնֆլիկտները մեղմելու համար՝ ապահովելով ռեսուրսների կայուն կառավարում:
- Ընկերությունը շարունակական երկխոսություն է վարում մատակարարների և գործընկերների հետ, գնահատելու համար ղեկարգեցնիզացման միտումներին արձագանքելու և մատակարարման շղթայի դիմակայունությունը բարձրացնելու ամենասարկյունավետ ուղիները՝ դրանով իսկ խթանելով հարաբերությունների ամրապնդումը և կայուն զարգացման ընդհանուր նպատակների իրագործումը:

ԶՊՄԿ-ի Կլիմայի փոփոխության ռազմավարությունը կներառի միջազգային և ազգային նպատակները, մասնավորապես, Հայաստանի՝ Ազգային մակարդակով սահմանված գործողությունները (ԱՄՍԳ): Ընկերությունն օգտագործում է սցենարների վերլուծություններ, որոնք համապատասխանում են միջազգային չափանիշներին, մասնավորապես, Փարիզյան համաձայնագրին, որի նպատակն է պահել գլոբալ միջին ջերմաստիճանի բարձրացումը 2°C-ից ցածր մակարդակում, գերադասելի է մինչև 1.5°C: Կլիմայական սցենարները, ներառյալ մինչև 2050թ. ածխածնի զուտ արտանետումների գրոյական մակարդակի հասցնելու ուղիները, հիմք են հանդիսանում ԶՊՄԿ-ի ղեկարգեցնիզացման և հարմարվողականության ռազմավարության մշակման համար:



Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Ընկերության կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակները և մինչ օրս արտանետումների կրճատմանը և մեղմմանն ուղղված միջոցառումների շրջանակում գրանցված առաջընթացը:



Կարճաժամկետ նպատակներ	Երկարաժամկետ նպատակներ
Էներգաարդյունավետություն Առաջընթաց Ենթակառուցվածքի արդիականացում. հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում արտադրամասերում վերահսկվել և ստուգվել են օդափոխության և ասպիրացիոն համակարգերը՝ էներգաարդյունավետությունն օպտիմալացնելու և շահագործման ընթացքում էներգիայի օգտագործումը կրճատելու նպատակով³⁹: Ավտոպարկի էլեկտրաֆիկացում. Ընկերությունն աստիճանաբար փոխարինում է վառելիքով աշխատող մեքենաները հիբրիդային/էլեկտրական շարժիչով աշխատող մեքենաներով և խթանում է էկո-մեքենա վարելու պրակտիկան իր աշխատողների շրջանում՝ վառելիքի սպառումը և արտանետումները նվազեցնելու համար: Արևային կայանների տեղադրում. ԶՊՄԿ-ն պլանավորում է նվազեցնել ավանդական վառելիքի օգտագործումը՝ մշակելով գործունեության վայրում արևային կայաններ տեղադրելու ռազմավարություն: Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում Առաջընթաց Խտացուցիչ. 2024թ-ին Ընկերությունը նախաձեռնել է խտացուցիչի տեղադրման նախագիծ, որը թույլ կտա վերաօգտագործել արդյունաբերական ջուրը:	Վերականգնվող էներգիայի աղբյուրների ինտեգրում Առաջընթաց Քամու էներգիա. այս նախաձեռնության շրջանակում Ընկերությունը՝ Ճապոնիայի կառավարության ֆինանսական աջակցությամբ, պլանավորում է տեղադրել չորս քամու տուրբիններ պոչամբարի տարածքում: Նախաձեռնության իրականացումը պետք է հաստատվի տեխնիկատնտեսական ուսումնասիրության արդյունքների հիման վրա, որը նախատեսվում է ավարտին հասցնել 2025թ-ին: Ածխածնի արտանետումների փոխհատուցում Առաջընթաց Անտառվերականգնում և կանաչապատում . ԶՊՄԿ-ն ներկայումս իրականացնում է ածխածնի արտանետումների փոխհատուցման նախաձեռնություն, որը ներառում է անտառվերականգնման և կանաչապատման աշխատանքներ: Արևային էներգիա. խոշոր արևային էլեկտրակայանի կառուցման համար ԶՊՄԿ-ն մի շարք խորհրդակցություններ է անցկացրել շահագրգիռ կողմերի հետ, նախագիծը մարզի կարիքներին և պայմաններին համապատասխանեցնելու համար՝ ապահովելով դրա արդիականությունն ու արդյունավետությունը: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Սյունիքի մարզում տեղադրվել են արևային էլեկտրակայաններ և արևային ջրատաքացուցիչներ: Այդ նախաձեռնությունները նախատեսված են նաև 2025-2026թթ. համար: Մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է «Տեղական համայնքներ» բաժնում: Ածխածնի շուկաներ. իր ընդլայնված կլիմայական ռազմավարության շրջանակում Ընկերությունն ակտիվորեն գնահատում է ածխածնի ազգային և միջազգային շուկաներ մուտք գործելու հնարավորությունները, որոնք կարող են օգնել Ընկերության ջանքերին՝ արտանետումները փոխհատուցելու և կլիմայի փոփոխության հետ կապված համընդհանուր նպատակների իրագործմանը նպաստելու: Միևնույն ժամանակ, Ընկերությունը հետևում է Հայաստանում ածխածնի գնագոյացման հնարավորությունների զարգացմանը, որն ակնկալվում է, որ կարևոր դեր կխաղա արտանետումների կրճատման նկատմամբ երկրի ապագա մոտեցման ձևավորման գործում:

³⁹ Տարեկան կապիտալ ծախսերի որոշակի մասը հատկացվում է էներգաարդյունավետության արդիականացմանը, ժամանակակից սարքավորումներին, ինչպես նաև հետազոտություններին և մշակումներին ցածր արտանետումներով տեխնոլոգիաների ոլորտում:

ԶՊՄԿ-ն շարունակում է հավատարիմ մնալ իր նպատակներին՝ իրականացնելով մի շարք նախաձեռնություններ, նաև տեղյակ է ռիսկերին, որոնք կարող են խոչընդոտել այդ նպատակների լիարժեք իրագործմանը:

Ֆինանսական սահմանափակումներ
Ցածր ածխածնային տեխնոլոգիաների համար անհրաժեշտ մեծ կապիտալ ներդրումները կարող են սահմանափակել ներդրման արագությունը և մասշտաբը:
Օրենսդրական / կարգավորումների անորոշություն
Ածխածնի գնագոյացման և արտանետումների ազգային և միջազգային կանոնակարգերի փոփոխությունները կարող են ազդել ջերմոցային գազերի կրճատման ռազմավարությունների ծախսարդյունավետության վրա:
Տեխնոլոգիական խոչընդոտներ
Վերականգնվող էներգիայի ինտեգրումը հանքարդյունաբերական գործունեությունում, մասնավորապես, հեռավոր և բարդ միջավայրերում, մնում է տեխնիկական մարտահրավեր, որը պահանջում է նորարարական լուծումներ:

Կլիմայական ռիսկերի և հնարավորությունների վերլուծություն՝ երկարաժամկետ դիմակայունություն ապահովելու նպատակով

IFRS 2 — 10(a), IFRS 2 — 13(a), IFRS 2 — 14 (a), IFRS 2 — 8, 9

Կլիմայական ռիսկերի և հնարավորությունների կառավարմանն ուղղված նախաձեռնողական մոտեցումը ցուցադրում է ԶՊՄԿ-ի հանձնառությունը՝ կայուն զարգացմանը և շրջակա միջավայրի մարտահրավերների նկատմամբ դիմակայունության բարձրացմանը: Նպատակ ունենալով ապահովել կայուն զարգացում և կենսունակ գործունեություն՝ մենք իրականացրել ենք կլիմայական ռիսկերի և հնարավորությունների գնահատում, որոնք կարևոր են գործառնական գործունեության և ռազմավարական

որոշումների կայացման համար: ԶՊՄԿ-ն բացահայտել է հիմնական կլիմայական ռիսկերը և հնարավորությունները, որոնք կարող են նշանակալի ազդեցություն ունենալ գործառնական գործունեության արդյունքների, ռազմավարական որոշումների և երկարաժամկետ արժեքի ստեղծման վրա:

Ֆիզիկական ռիսկեր

Զրային ռեսուրսների սակավություն և գործունեության անընդհատություն

Հանքաքարի վերամշակման համար պահանջվում են մեծ ծավալով ջրային ռեսուրսներ, որի հետևանքով Ընկերության գործունեությունը կախվածության մեջ է հայտնվում երաշտներից, տեղումների ծավալների փոփոխություններից և մարզում ջրի պահանջարկի աճից: Զրային ռեսուրսների նվազումը կարող է խաթարել գործունեության ընթացքը կամ պահանջել ռիսկերի մեղմմանն ուղղված ծախսատար ռազմավարություն:

Վերոնշյալ ռիսկերին ի պատասխան՝ Ընկերությունը նախատեսում է կատարել զգալի ներդրումներ (մոտ 35 միլիոն ԱՄՆ դոլարի չափով) ջրի շրջանառման տեխնոլոգիաներում, մասնավորապես, ջրի օգտագործումը նվազագույնի հասցնելու նպատակով խտացուցիչ համակարգի տեղադրման համար: Այդ նախաձեռնությունը ոչ միայն նվազեցնում է կլիմայի փոփոխությունների հետ կապված գործառնական ռիսկերը, այլ կարող է նաև ապահովել երկարաժամկետ խնայողություններ, բարձրացնել գործառնական արդյունավետությունը և խթանել դրական հարաբերությունները շահագրգիռ կողմերի հետ: Խտացուցիչ համակարգի կառուցումը նախատեսված է 2025թ-ին: Այդ ժամկետն արտացոլում է Ընկերության նախաձեռնողական մոտեցումը ջրային ռեսուրսների սակավության հետ կապված խնդիրների լուծմանը և հաստատում է նրա հանձնառությունը՝ համապատասխանել ռեսուրսների կայուն կառավարման սկզբունքներին:

Միջնաժամկետից երկարաժամկետ հեռանկարում ավելի հաճախակի տեղի ունեցող երաշտները կամ ջրային ռեսուրսների համար մրցակցության աճը կարող են հանգեցնել գործառնական ծախսերի ավելացմանը և պահանջել լրացուցիչ կապիտալ ծախսումներ այլընտրանքային ջրային աղբյուրների, այդ թվում՝ առաջադեմ վերամշակման տեխնոլոգիաների ներդրման համար: Զրային ռեսուրսների կառավարման բարելավված մեթոդները կարող են դառնալ ռազմավարական առավելություն՝ օգնելով պահպանել արտադրության կայուն մակարդակները, նույնիսկ ավելի խիստ կլիմայական պայմաններում:

Ընկերության տարբեր ստորաբաժանումների համատեղ աշխատանքային խմբերը յուրաքանչյուր տարի վերանայում են ջրային ռեսուրսներին հատկացված բյուջեն գործունեության անընդհատությունը տարբեր կլիմայական պայմաններում ապահովելու համար:

Անցումային ռիսկ

Մեծ կախվածություն հանածո վառելիքից

Առաջին անցումային ռիսկը կապված է էներգիայի ծախսերի աճի և մատակարարման հուսալիությանն առնչվող խնդիրների հետ: Ընկերության գործունեությունը, մասնավորապես, հանքարդյունաբերությունը և հանքաքարի վերամշակումը, էներգատար են և մեծապես կախված են էլեկտրաէներգիայից, այդ թվում՝ միջուկային և հանածո վառելիքից, որոնցից են դիզելային վառելիքը և բնական գազը: Էներգիայի գների տատանումները, ածխածնի գնազույցման հնարավոր մեխանիզմները և անկայունությունն էներգետիկ շուկայում ենթադրում են ինչպես ծախսերի աճի ռիսկ, այնպես էլ էներգաարդյունավետ ներդրումների հնարավորություն:

Այդ մարտահրավերներին դիմակայելու համար Ընկերությունը ձգտում է օգտագործել այլընտրանքային էներգիայի աղբյուրներ: Դա ներառում է գործունեության տարածքում արևային կայանի տեղադրում, կանաչ էներգիայի ձեռքբերում՝ նպատակահարմարության և հնարավորության դեպքում, ավտոպարկի էլեկտրաֆիկացման փորձնական ծրագիր՝ մարդատար մեքենաները աստիճանաբար փոխարինելով էլեկտրական կամ հիբրիդային մոդելներով: Էլեկտրական մեքենաների փորձնական ծրագրի արդյունքում արձանագրվել է վառելիքի սպառման մի փոքր նվազում:

Այդ նախաձեռնությունների նպատակն է նվազեցնել ծախսերի տատանողականությունը և ապահովել համապատասխանությունը ցածր ածխածնային էներգիայի ոլորտի միտումներին՝ այդպիսով բարելավելով ինչպես կայունությունը, այնպես էլ տնտեսական դիմակայունությունը:

Նախապատվությունների փոփոխությունը հօգուտ ցածր ածխածնային մատակարարման շղթաների

Կլիմայի փոփոխություններին արդյունավետ կերպով դիմակայելու համար անհրաժեշտ է պատկերացում ունենալ արժեքային շղթայում արտանետումների փոխկապակցվածության մասին: Ընկերության Շրջանակ 3-ի արտանետումները, որոնք առաջանում են Ընկերության անմիջական հսկողության սահմաններից դուրս գտնվող գործունեությունից, հիմնականում բաղկացած են մատակարարների Շրջանակ 1-ի և Շրջանակ 2-ի արտանետումներից: Եվ հակառակը, Ընկերության սեփական Շրջանակ 1-ի և Շրջանակ 2-ի արտանետումները ներառված են գործընկերների Շրջանակ 3-ի արտանետումներում: Այդ փոխկապակցվածությունը վկայում է համատեղ պատասխանատվության մասին արժեշղթայի բոլոր օղակներում և պահանջում է համակարգված ջանքեր՝ արտանետումների ծավալի նշանակալի կրճատում ապահովելու համար:

Ներկայումս Շրջանակ 3-ի արտանետումները կազմում են մոտավորապես 946,566 տոննա CO₂-ին համարժեք, ինչը մեծ ուշադրության է արժանանում գործընկերների շրջանում: Այդ գործընկերներից շատերն իրենց մատակարարման

շղթաներում կիրառում են կայուն զարգացման ավելի խիստ պահանջներ՝ ավելի մեծ ակնկալիքներ ունենալով այնպիսի մատակարարներից, ինչպիսին մեր Ընկերությունն է՝ ածխածնի ծավալների կրճատմանն ուղղված իրենց առաջընթացը ցուցադրելու համար: Միևնույն ժամանակ, միջազգային շուկաների կողմից կլիմայական ցուցանիշների հետ կապված նկատվող աճող ճնշումը պոտենցիալ ռիսկեր է ստեղծում Ընկերության երկարաժամկետ առևտրային հարաբերությունների համար: Այդ զարգացումները ամրապնդում են ցածր ածխածնային արտանետումներ ապահովող տեխնոլոգիաներում ներդրումներ կատարելու, գործառնական արդյունավետությունը բարձրացնելու և մատակարարման շղթայի պատշաճ ուսումնասիրություն իրականացնելու ռազմավարական կարևորությունը: Այդ մարտահրավերների պայմաններում Ընկերությանը նաև ընձեռնվում է հնարավորություն զարգացող համաշխարհային շուկայում ներկայանալ որպես ածխածնի ցածր արտանետումներ ապահովող պղնձի և մոլիբդենի մատակարար, որտեղ գնալով ավելի են կարևորվում պատասխանատու

մատակարարումը և «կանաչ» մետաղները»՝ ի աջակցություն դեկարբոնիզացման նպատակների իրագործման:

Նորարարության և համագործակցության շնորհիվ ի հայտ եկող հնարավորություններ

Ընկերությունը գիտակցում է կլիմայի հետ կապված հնարավորություններից օգտվելու կարևորությունը՝ ներառյալ պղնձի և մոլիբդենի համաշխարհային պահանջարկի աճը՝ պայմանավորված մաքուր էներգիայի անցման համաշխարհային միտումներով, որի համար անհրաժեշտ են վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաներ, էլեկտրական մեքենաներ և ենթակառուցվածքներ: Մենք նաև հնարավորություններ ենք տեսնում էներգաարդյունավետության բարձրացման, վերականգնվող էներգիայի աղբյուրներում ներդրումների իրականացման և վերականգնվող էներգիայի բնագավառի ընդլայնման նպատակով՝ ՀՀ կառավարության հետ հնարավոր համագործակցության ոլորտներում⁴⁰.

Կլիմայի փոփոխության ազդեցությունը գործունեության և արժեշղթայի վրա

IFRS 2 — 13b

Ընկերության գործունեությունը ազդում է արժեշղթայի վրա հանքաքարի արդյունահանումից մինչև վերջինիս սպառումը:

Հանքարդյունաբերական գործունեություն

Այունիքի մարզում գտնվող Քաջարանի բաց հանքը բնութագրվում է էներգիայի և ջրի ռեսուրսների մեծ պահանջարկով, ինչը նրա գործունեությունը դարձնում է հատկապես զգայուն տեղումների և ջերմաստիճանի փոփոխությունների նկատմամբ, որոնք կարող են ազդել երկարաժամկետ կայուն զարգացման հեռանկարների վրա: Ավտոպարկը, որը բաղկացած է խոշոր բեռնատարներից և

բեռնիչներից, հիմնականում օգտագործում է դիզելային վառելիք, որն իրենից ներկայացնում է Շրջանակ 1-ի արտանետումների զգալի աղբյուր: Բացի այդ, ստացիոնար սարքավորումները, օրինակ՝ կաթսաները և արդյունաբերական գործընթացների համար պահանջվող սարքավորումները, որոնք աշխատում են բնական գազով, զգալիորեն նպաստում են ԶՊՄԿ-ի ուղղակի արտանետումների ձևավորմանը:

Վերամշակում և հարստացում

հարստացուցիչ ֆաբրիկան արտանետումների հիմնական տարածքն է, որին բաժին է ընկնում է Շրջանակ 2-ի արտանետումների գրեթե 90%-ը՝ էլեկտրաէներգիայի սպառման պատճառով, ըստ ջերմոցային գազերի զույքագրման: Զարդման և փոխադրման արտադրամասերն էներգիայի օգտագործման և դրա հետ կապված արտանետումների

լրացուցիչ կետերն են: Հանքաքարի վերամշակման գործընթացի կախվածությունն անընդհատ ջրամատակարարումից նշանակում է, որ կլիմայական պայմաններով պայմանավորված ջրային ռեսուրսների առկայության փոփոխականությունն առաջացնում է ուղղակի գործառնական և ֆինանսական ռիսկեր:

⁴⁰ Այդ համապատասխանեցումների քանակական գնահատականը՝ տոկոսային և գումարային արտահայտմամբ, կներկայացվի ընթացիկ ռազմավարական գնահատումների շրջանակում:

Մատակարարման արժեշդթա

Վերամշակված արտադրանքի տեղափոխում և բաշխում, որոնք դասակարգվում են որպես Շրջանակ 3-ի 9-րդ կատեգորիա, բաժին է ընկնում Շրջանակ 3-ի ընդհանուր արտանետումների մոտ 26%-ը: Պղնձի խտանյութի տեղափոխումը համաշխարհային ձուլարաններ հանդիսանում է բարձր ածխածնային ինտենսիվությամբ գործընթաց, հատկապես, երբ օգտագործվում են արտանետումների բարձր մակարդակով բնութագրվող բեռնատարներ կամ ծովային տրանսպորտ: Վաճառված արտադրանքի

վերամշակումը, որը դասակարգվում է 10-րդ կատեգորիա, հանդիսանում է Շրջանակ 3-ի արտանետումների երկրորդ ամենամեծ աղբյուրը՝ կազմելով 28%: Դա վկայում է այն ռիսկի մասին, որ վերջնական օգտագործողները, մասնավորապես, խիստ կլիմայական քաղաքականություն վարող տարածաշրջաններում, գնալով կարող են ավելի մեծ պահանջներ ներկայացնել՝ ածխածնի արտանետումների մակարդակը կրճատելու ուղղությամբ կամ համագործակցել շրջակա միջավայրի վրա պակաս ազդեցություն ունեցող մատակարարների հետ:

Մատակարարներ, նյութեր և ծառայություններ

Ձեռք բերված ապրանքներին, ծառայություններին, ինչպես նաև կապիտալ ապրանքներին, որոնք դասակարգված են որպես Շրջանակ 3-ի 1-ին և 2-րդ կատեգորիաներ, բաժին է ընկնում Շրջանակ 3-ի ընդհանուր արտանետումների մոտ 18%-ը: Մատակարարման շղթայի գործընկերները նույնպես բախվում են առանցքային ռեսուրսների, օրինակ՝ ռեազենտների և պահեստամասերի

արտադրության և բաշխման դեկարբոնիզացիային ուղղված աճող ճնշման: Շրջանակ 3-ի 3-րդ կատեգորիայի՝ վառելիքի և էներգիայի հետ կապված գործունեությունը նույնպես առաջացնում է անուղղակի արտանետումներ՝ դիզելային վառելիքի, բնական գազի և էլեկտրաէներգիայի արդյունահանման, վերամշակման և փոխադրման արդյունքում:

Հասկանալով կլիմայի փոփոխությամբ պայմանավորված այդ ազդեցություններն իր գործունեության և արժեշդթայի վրա՝ Ընկերությունը ձգտում է ավելի լավ դիրք զբաղեցնել՝ մշակելով ռիսկերի մեղմման և հնարավորությունների օգտագործման ռազմավարություններ, դրանով իսկ ամրապնդելով կայուն զարգացում և գործառնական գերազանցություն ապահովելու իր հանձնառությունը:



Կլիմայական ռիսկերի կառավարում. նպատակ ունենալ նվազեցնել ածխածնի հետքը և բարձրացնել կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերի նկատմամբ կայունությունը

Ռիսկերի կառավարման կրկնակի մոտեցում՝ ֆիզիկական և անցումային ռիսկերի կառավարում կայուն հանքարդյունաբերական գործունեություն ապահովելու համար

IFRS 2 — 10(b)

Ընկերությունը համակարգված կերպով դասակարգում է իր հիմնական ռիսկերը երկու հիմնական կատեգորիաների՝ ֆիզիկական և անցումային ռիսկեր: Այդ դասակարգումը կարևոր է Ընկերության հանքարդյունաբերական գործունեության և ռազմավարական պլանավորման վրա ազդեցություն ունեցող բազմաթիվ խնդիրների մասին պատկերացում կազմելու համար:

Կլիմայական ռիսկերը գնահատվել են Ընկերության կողմից մշակված ռիսկերի մատրիցայի մեթոդաբանության միջոցով, որը գնահատում է ռիսկերը՝ հիմնվելով դրանց առաջացման հավանականության և գործունեության, ակտիվների և շահագրգիռ կողմերի վրա հնարավոր ազդեցության վրա: Այդ մոտեցումը հնարավորություն է տալիս կառուցվածքային և հետևողական կերպով գնահատել ինչպես ֆիզիկական, այնպես էլ անցումային ռիսկերը: Ընկերությունն ապահովում է այդ գործոնների համակարգված նույնականացումը, ըստ առաջնահերթության դասակարգումը և կարգավորումը ռազմավարական և գործառնական պլանավորման շրջանակում:

Ֆիզիկական ռիսկերը ներառում են ջերմաստիճանի բարձրացումը, ջրային ռեսուրսների սակավությունը և ծայրահեղ եղանակային երևույթների, օրինակ՝ երաշտների, հաճախականության աճը: Այդ գործոնները կարող են ուղղակիորեն ազդել Ընկերության հանքարդյունաբերական գործունեության կայունության և արդյունավետության վրա՝ լուրջ

խնդիրներ ստեղծելով արտադրության կայուն մակարդակը պահպանելու համար:

Անցումային ռիսկերը⁴¹ ներառում են էներգիայի գնի աճի և ածխածնի արտանետումների թույլտվությունների ծավալների հնարավոր հետևանքների ազդեցությունը: Թեև անմիջական ուշադրության կենտրոնում չարուձակում են մնալ ֆիզիկական ռիսկերը, օրինակ՝ ջրային ռեսուրսների սակավությունը, ԶՊՄԿ-ն հաշվի է առնում նաև ապագա կանոնակարգերի և շուկայի գործոնների, այդ թվում՝ ածխածնի հարկերի, արտանետումների համար գործող ավելի խիստ օրենսդրական կարգավորումների, շուկայական մրցակցության ազդեցությունը (որը պայմանավորված է սպառողների նախասիրություններով և ածխածնի սահմանի ճշգրտումներով) և հեղինակության ռիսկերը: Դրանք կարող են էական ազդեցություն ունենալ դիզելային վառելիքի և բնական գազի սպառման հետ կապված ծախսերի վրա, ինչը պահանջում է ռազմավարական ճշգրտումներ՝ երկարաժամկետ գործառնական կենսունակություն ապահովելու համար: Այդ ռիսկերը հայտնաբերելով և դասակարգելով՝ ԶՊՄԿ-ն առավել պատրաստ է մշակելու նպատակաուղղված ռազմավարություններ, որոնք կկարգավորեն ինչպես անմիջական, այնպես էլ ապագա խնդիրները՝ ամրապնդելով կայուն զարգացման և գործառնական գերազանցության նկատմամբ Ընկերության հանձնառությունը:

⁴¹ Անցումային ռիսկի համապարփակ քանակական գնահատումը և սցենարների վրա հիմնված զգայնության վերլուծությունները ընթացքի մեջ են:

Կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ խնդիրների լուծում կայուն գործունեության ապահովման համար

IFRS 2 — 10(c) (d)

ԶՊՄԿ-ն ռազմավարական տեսանկյունից համապատասխանեցնում է իր նպատակները կապիտալ ներդրումների բազմամյա ցիկլերի և հանքարդյունաբերական գործունեության համար սահմանված արդյունաբերական նորմերի հետ: Այդ մոտեցումն ապահովում է Ընկերության ճկունությունը և հանքարդյունաբերության ոլորտի անմիջական և երկարաժամկետ խնդիրներին արձագանքելու կարողությունը: Բացի այդ, հիմնվելով իր ներքին պլանավորման գործընթացների և ոլորտին հասուկ կլիմայական ռիսկերի գնահատումների վրա, ԶՊՄԿ-ն ուրվագծել է կլիմայական ռիսկերի կառավարման ռազմավարական ուղղություն:

Կարճաժամկետ հեռանկար (1-3 տարի)

Կարճաժամկետ հեռանկարում ԶՊՄԿ-ն կենտրոնանում է իր կլիմայական և գործառնական առաջնահերթությունները՝ տարեկան բյուջետավորման և կարճաժամկետ պլանավորման ցիկլերի հետ համապատասխանեցնելու վրա: Այդ ժամանակաշրջանը կենսական նշանակություն ունի առաջնահերթ գործառնական կարիքները բավարարելու և Ընկերության՝ փոփոխվող շուկայական պայմաններին և օրենսդրության պահանջներին, արագ արձագանքելու կարողությունը պահպանելու համար:

Կարճաժամկետ հիմնական խնդիրներից մեկը ջրային ռեսուրսների հասանելիության տարեցտարի փոփոխականությունն է: Տեղական երաշտի ցիկլերը և ջրի բաշխման վրա ազդող օրենսդրության կտրուկ փոփոխություններն առաջացնում են գործառնական ռիսկեր: Այդ գործոնները մանրակրկիտ վերահսկվում են՝ արտադրության և ռեսուրսների պլանավորման կայունությունն ապահովելու համար:

Բացի այդ, արտադրության ծախսերի կարճաժամկետ տատանողականությունը, օրինակ՝ դիզելային վառելիքի կամ գազի գների հանկարծակի փոփոխությունները, այդ ժամանակաշրջանի մեկ այլ նշանակալի ռիսկն է:

Միջնաժամկետ հեռանկար (3-7 տարի)

Միջնաժամկետ հեռանկարը, որը ընդգրկում է երեքից յոթ տարի, ներառում է ենթակառուցվածքի արդիականացման բնորոշ կենսացիկլը, այդ թվում՝ հիմնական միջոցների բարելավումները և միջնաժամկետ ռազմավարական նպատակները: Այդ ժամանակաշրջանում ԶՊՄԿ-ն առաջնահերթություն է տալիս այն ներդրումներին, որոնք բարձրացնում են գործառնական արդյունավետությունը և խթանում են կայունությունը՝ ապահովելով Ընկերության մրցունակությունը և դիմակայունությունը ոլորտի դինամիկայի փոփոխության պայմաններում:

Միջնաժամկետ հեռանկարում ուշադրության կենտրոնում էներգիայի գների դինամիկան է: Գների կայուն աճը կամ հանածո վառելիքի հետ կապված քաղաքականությամբ պայմանավորված ածխածնի գծով ծախսերը կարող են ավելի մեծ չափով ազդել կապիտալի բյուջետավորման որոշումների վրա: Այդ ռիսկերը կառավարելու համար Ընկերությունն իրականացնում է նախագծեր, այդ թվում՝ արևային էներգիային անցում կատարելու և ջրային ենթակառուցվածքը բարելավելու ռազմավարությունը: Հատկանշական է, որ խտացուցիչի տեղադրումը, որը նախատեսված է 2025-2026թթ. , համապատասխանում է այդ ժամանակացույցին և, ակնկալվում է, որ կհանգեցնի ինչպես ռիսկերի մեղմացմանը, այնպես էլ գործառնական արդյունավետության բարելավմանը:

Երկարաժամկետ հեռանկար (ավելի քան 7 տարի)

Երկարաժամկետ հեռանկարում ԶՊՄԿ-ի ռազմավարական պլանավորման ժամանակ հաշվի է առնվում խոշոր ընդլայնումների ներուժը, փոփոխվող օրենսդրական կարգավորումները և ոլորտի լայնածավալ վերափոխումները: Այդ հորիզոնը թույլ է տալիս Ընկերությանը կանխատեսել և նախապատրաստվել հանքարդյունաբերության ոլորտի արմատական փոփոխություններին, ներառյալ տեխնոլոգիական նորարարությունը, ռեսուրսների համաշխարհային պահանջարկի փոփոխությունը և կայուն զարգացմանը միտված շուկայի ակնկալիքները:

ԶՊՄԿ-ն գիտակցում է, որ շարունակական կախվածությունը հանածո վառելիքից ապագայում կարող է առաջացնել զգալի ծախսեր և համապատասխանության հետ կապված ռիսկեր, մասնավորապես, եթե համաշխարհային և տեղական էներգետիկ ոլորտի փոխակերպումների գործընթացն արագանա: Այդ գործընթացին կարող են նպաստել ածխածնի գնազույացման ընդլայնված մեխանիզմները, արտանետումների ոլորտի խստացված կանոնակարգերը կամ երկուսը միասին: Միևնույն ժամանակ, երկարաժամկետ կլիմայական մոդելները ենթադրում են, որ ջրի պակասը ժամանակի ընթացքում կարող է ավելի սրանալ, որի դեպքում հնարավոր է, որ կպահանջվեն զգալի տեխնոլոգիական ներդրումներ՝ կայուն ջրային ռեսուրսներ և գործունեության անընդհատությունն ապահովելու համար:

Ռազմավարական պլանավորումը կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ներդրումային հորիզոններին համապատասխանեցնելով՝ ԶՊՄԿ-ն շահեկան դիրքում է գտնվում իր երկարաժամկետ նպատակներն իրագործելու համար: Այդ կառուցվածքային մոտեցումը թույլ է տալիս Ընկերությանն արդյունավետորեն կարգավորել ինչպես անմիջական, այնպես էլ ի հայտ եկող կլիմայական խնդիրները՝ ամրապնդելով կայուն զարգացում և երկարաժամկետ դիմակայություն ապահովելու իր հանձնառությունը:

Ջերմոցային գազերի արտանետումներ. թիրախավորել արտադրության արդյունավետության բարելավումը

GRI 3-3, GRI 305-1, GRI 305-2, GRI 305-3, IFRS 2 — 14(a)(v), IFRS 2 — 14(c)

ԶՊՄԿ-ն ձգտում է իրագործել կլիմայի փոփոխության հետ կապված իր նպատակները՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով ջերմոցային գազերի արտանետումների կրճատման վրա⁴²:

Հիմնական նպատակներն են՝ կրճատել գործունեության արդյունքում առաջացող արտանետումները (Շրջանակներ 1 և 2), ներգրավել մատակարարներին Շրջանակի 3-ի արտանետումները նվազեցման գործում և ապահովել համապատասխանությունը դեկլարոնիզացման միջազգայնորեն ընդունված պահանջներին՝ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում:

ԶՊՄԿ-ն շարունակաբար ներդրումներ է կատարում ջերմոցային գազերի տվյալների հավաքագրման և վերահսկման իր համակարգերի ամրապնդման մեջ: 2022թ-ին Շրջանակ 1-ի, 2-ի և 3-ի ջերմոցային գազերի գույքագրման⁴³ առաջին հրապարակումից ի վեր, Ընկերությունը զգալի առաջընթաց է գրանցել իր մեթոդաբանությունների բարելավման գործում: Այդ բարելավումները ներառում են մեքենաների վառելիքի սպառման և սարքավորումների էներգիայի օգտագործման ավելի ճշգրիտ վերահսկումը, ինչը նպաստում է արտանետումների վերաբերյալ տվյալների ավելի բարձր ճշգրտության և հուսալիության վրա: Տվյալների ամբողջականությունն ապահովելու այդ ձգտումը նպաստում է հիմնավորված որոշումների կայացմանը և ամրապնդում է Ընկերության կլիմայի փոփոխության ընդհանուր ռազմավարությունը:

Արտանետումների կառավարման գործընթացը կարգավորող ներքին փաստաթղթերն են՝

- > Օդի որակի կառավարման պլանը,
- > Արտանետումների կանխարգելման կառավարման պլանը,
- > Արտանետումների սահմանային թույլատրելի/վնասակար նյութերի կոնցենտրացիայի նորմատիվները:

Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման և հաշվարկման հիմնական ուղեցույցը Կորպորատիվ հաշվապահական հաշվառման և հաշվետվողականության

ստանդարտն է, որը ներառում է երկու առանձին, բայց փոխկապակցված ստանդարտներ

- > Ջերմոցային գազերի կորպորատիվ հաշվապահական հաշվառման և հաշվետվողականության արձանագրությունը տրամադրում է քանակական գնահատման և հաշվետվողականության քայլ առ քայլ ուղեցույց ընկերությունների համար:
- > Ջերմոցային գազերի արձանագրության նախագծի քանակական գնահատման ստանդարտ, որը տրամադրում է ուղեցույց ջերմոցային գազերի արտանետումների կրճատման նախագծերի արդյունքում արտանետումների նվազման քանակական գնահատման համար:

ԶՊՄԿ-ն իրականացնում է տարեկան ուսումնասիրություններ, որոնք ներառում են համեմատական վերլուծություն ոլորտի համադրելի ընկերությունների հետ, տվյալների որակի ստուգում և գործառնական և ռազմավարական բարելավումների հնարավորությունների բացահայտում:

2024թ-ին ջերմոցային գազերի արտանետումների ընդհանուր ծավալը կազմել է 1,258,490 տոննա CO₂-ին համարժեք, ինչը 17.51%-ով ավել է 2023թ-ին գրանցված 1,070,988 տոննայից:

Շրջանակ 3-ի արտանետումներն իրենցից ներկայացնում են արժեշտըայի բոլոր օղակների գործունեությունից առաջացող անուղղակի արտանետումները, որոնք կազմում են ջերմոցային գազերի ընդհանուր արտանետումների ամենամեծ մասնաբաժինը երկու հաշվետու տարիների ընթացքում: Ջերմոցային գազերի արտանետումների աճը մեծամասամբ վերագրելի է Շրջանակ 3-ի ածխածնային արտանետումներին: 2024թ-ին Շրջանակ 3-ի արտանետումները կազմել են 946,566 տոննա CO₂-ին համարժեք, ինչը 23.27%-ով ավել է 2023թ-ին գրանցված 767,857 տոննայից:

⁴² ԶՊՄԿ-ն հետևում է ընդհանուր արտանետումներին՝ օգտագործելով ջերմոցային գազերի արտանետումների բացարձակ միավորը (տCO₂-ին համարժեք), որը լրացվում է ինտենսիվության միավորներով (օրինակ՝ մեկ տոննա խտանյութին բաժին ընկնող տCO₂-ին համարժեք):

⁴³ Իրականացվել է ջերմոցային գազերի գույքագրման և ճանաչված հայեցակարգային հիմունքների, մասնավորապես, ջերմոցային գազերի վերաբերյալ արձանագրության և Կլիմայի փոփոխության միջկառավարական փորձագետների խմբի ուղեցույցների հետ համեմատական վերլուծություն:

1. ԶՊՄԿ-ի մասին
2. Տնտեսական ազդեցություն
3. Կորպորատիվ կառավարում
4. ԶՊՄԿ-ի աշխատողները
5. Բարեկեցության և կայունության ապահովում աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման մշակույթի ձևավորման միջոցով

6. Տեղական համայնքներ
7. Շրջակա միջավայրի պահպանություն և կայունություն
8. Կլիմայի փոփոխություն
9. Հավելվածներ

Ծավալներ՝ ըստ ջերմոցային գազերի արտանետումների տեսակների (տոննա CO₂-ին համարժեք)⁴⁴

Ցուցանիշ	2023թ.	2024թ.	Տոկոսային փոփոխություն
ԶԳ արտանետումներ (Շրջանակ 1)	76,218	82,370	8.07%
ԶԳ արտանետումներ (Շրջանակ 2, շուկայից կախված)	226,913	229,555	1.16%
ԶԳ արտանետումներ (Շրջանակ 3)	767,857	946,566	23.27%
ԶԳ արտանետումներ (Շրջանակ 1 + Շրջանակ 2)	303,131	311,924	2.90%
ԶԳ արտանետումներ (Շրջանակ 1 + Շրջանակ 2 (շուկայից կախված) + Շրջանակ 3)	1,070,988	1,258,490	17.51%

GRI 305-1, SASB EM-MM-110a.1, GRI 305-3, GRI 305-2

Ջերմոցային գազերի ուղղակի արտանետումների տեսակներ (տոննա CO₂-ին համարժեք)⁴⁵

Ցուցանիշ	2023թ.	2024թ.	Տոկոսային փոփոխություն
ԶԳ ուղղակի արտանետումների (Շրջանակ 1) ընդհանուր ծավալ	76,218	82,370	8.07%
Ածխածնի երկօքսիդ (CO ₂)	75,321	81,375	8.04%
Մեթան (CH ₄)	29.8	30	-0.81%
Ազոտի օքսիդ (N ₂ O)	867.1	966	11.37%

Ջերմոցային գազերի Շրջանակ 3-ի արտանետումներ (տոննա CO₂-ին համարժեք)

Ցուցանիշ	2023թ.	2024թ.	Տոկոսային փոփոխություն
Կատեգորիա 1. Գնված ապրանքներ և ծառայություններ	121,907	173,029 ⁴⁶	41.94%
Կատեգորիա 2. Կապիտալ ապրանքներ			
Կատեգորիա 3. Վառելիքի և էներգետիկայի հետ կապված գործունեություն, որը ներառված չէ Շրջանակ 1-ում կամ Շրջանակ 2-ում	91,930	94,319	2.60%
Կատեգորիա 4. Արդյունահանված հումքի տեղափոխում և բաշխում	29,317	107,857 ⁴⁷	267.90%
Կատեգորիա 5. Շահագործման ընթացքում առաջացած թափոններ	-	120	n/a
Կատեգորիա 6. Գործուղումներ	252	313	24.21%
Կատեգորիա 7. Աշխատողների ամենօրյա ուղևորություններ աշխատանքի և վերադարձ տուն	31,086	58,268	87.44%
Կատեգորիա 9. Վերամշակված արտադրանքի տեղափոխում և բաշխում	123,544	247,242	100.12%
Կատեգորիա 10. Վաճառված արտադրանքի վերամշակում	369,821	265,419	-28.23%
ԶԳ այլ անուղղակի արտանետումների (Շրջանակ 3) ընդհանուր ծավալ	767,857	946,566	23.27%

Վերամշակված արտադրանքի տեղափոխմանը (Շրջանակ 3-ի կատեգորիա 9) բաժին է ընկնում Շրջանակ 3-ի ընդհանուր արտանետումների մոտ 26%-ը: Պղնձի խտանյութի տեղափոխումը միջազգային մետալուրգիական

գործարաններ առաջացնում է մեծ ծավալով ածխածնային արտանետումներ, հատկապես, երբ փոխադրումներն իրականացվում են արտանետումների բարձր մակարդակ ունեցող բեռնատարներով կամ նավերով:

⁴⁴ Ներկայումս ԶՊՄԿ-ն չի ներկայացնում Շրջանակ 1-ի և Շրջանակ 2-ի ջերմոցային գազերի արտանետումների առանձնացված տվյալներ այլ ներդրման օբյեկտների, փոխկապակցված կազմակերպությունների կամ համատեղ ձեռնարկությունների համար: Հաշվի առնելով փոփոխվող միջազգային ստանդարտները և շահառուների ակնկալիքները՝ Ընկերությունն ընդունում է այդ տվյալներն առաձին ներկայացնելու անհրաժեշտությունը: FՍԿ սկզբունքների հետ կապված ապագա բացահայտումները կներառեն չհամախմբված ներդրման օբյեկտների միջև արտանետումները ճշգրիտ բաշխելու համար ձեռնարկված քայլերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով փոխկապակցված կազմակերպություններին կամ համատեղ ձեռնարկություններին:

⁴⁵ Կիտղոլի արձանագրությունում նշված յոթ ջերմոցային գազերի՝ ածխածնի երկօքսիդի (CO₂), մեթանի (CH₄), ազոտի օքսիդի (N₂O), հիդրոֆտորածխաջրածինների (C₂Ֆ₆), պերֆտորածխաջրածինների (ՊՖԱ), ծծմբի հեքսաֆտորիդի (SF₆) և ազոտի եռֆտորիդի (NF₃) հաշվարկը հասանելի չէ: Հաշվարկն իրականացվել է միայն CH₄, CO₂ և N₂O արտանետումների համար:

⁴⁶ 118,793 տCO₂-ին համարժեք ցուցանիշը հաշվարկվել է գործունեության վրա հիմնված մեթոդով, իսկ 54,236 տCO₂-ին համարժեք՝ ծախսերի վրա հիմնված մեթոդով:

⁴⁷ Արտանետումների աճը պայմանավորված է հաշվետու տարում 2023թ. համեմատ գնված ապրանքների ավելի մեծ ծավալով, ինչպես նաև միջև Ընկերություն փոխադրման ավելի երկար հեռավորությամբ:

⁴⁸ Տեղակայման վայրից կախված Շրջանակ 2-ի արտանետումների համար էլեկտրացանցի էլեկտրաէներգիայի արտանետումների գործակիցները վերցվել են ԵԱՄՍ ստանդարտացված ելակետային տվյալներից ASB0038-2021՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկ համակարգի էլեկտրացանցերում արտանետումների գործակիցը: Արտանետումների գործակիցը էներգետիկ ոլորտում 0.43596 է: Շուկայից կախված Շրջանակ 2 արտանետումների ծավալը որոշելու համար օգտագործվել է մատակարարի կողմից տրամադրված արտանետումների գործակիցը:

Վաճառված արտադրանքի վերամշակումը գործընկերների կողմից (Շրջանակ 3-ի կատեգորիա 10) հանդիսանում է Շրջանակ 3-ի արտանետումների ամենամեծ աղբյուրը, որին բաժին է ընկնում Շրջանակ 3-ի ընդհանուր արտանետումների 28%-ը:

GRI 305-4

Ջերմոցային գազերի անուղղակի (Շրջանակ 2) արտանետումների ընդհանուր ծավալը (կախված տեղակայման վայրից և շուկայից) 2024թ-ին կազմել է 229,555 տոննա CO₂-ին համարժեք, ինչը 1.16%-ով ավելի է 2023թ. ցուցանիշից:

Էներգակիրներ, 2024թ.

Ցուցանիշ	ԳՋ (2023թ.)	ԳՋ/ արտադրված մեկ տոննա խտանյութի համար (2023թ.)	ԳՋ (2024թ.)	ԳՋ/ արտադրված մեկ տոննա խտանյութի համար (2024)
Առաջնային էներգակիրներ (վառելիք)	1,149,098	4.7	1,229,768	6.7
Երկրորդային էներգակիրներ	3,747,478	7.6	3,791,098	20.6
Ընդամենը էներգակիրներ	4,896,576	12.6	5,020,866	27.2

Ջերմոցային գազերի արտանետումների ինտենսիվություն՝ արտադրված խտանյութի մեկ տոննայի, վաճառքի ծավալի և մեկ անձի հաշվով, 2024թ.

Ցուցանիշ	ԶԳ ինտենսիվություն		
	Մեկ տոննայի հաշվով (տCO ₂ -համարժեք/տոննա)	Վաճառքի ծավալների հաշվով (տCO ₂ - համարժեք/մլն. եվրո)	Մեկ անձի հաշվով (տCO ₂ - համարժեք/աշխատող)
Շրջանակ 1	0.45	125	17.7
Շրջանակ 2	1.24	348	49.3
Շրջանակ 3	5.132	1,437	203.4
Շրջանակ 1 + Շրջանակ 2	1.69	473	67.0
Շրջանակ 1 + Շրջանակ 2 + Շրջանակ 3	6.8	1,910	270.4

Ջերմոցային գազերի տեսակարար արտանետումները (ածխածնի ինտենսիվություն) եկամտի հաշվարկով

Ցուցանիշ	Չափման միավոր	2023թ.	2024թ.	Տոկոսային փոփոխություն
ԶԳ ընդհանուր արտանետումներ (Շրջանակ 1 և Շրջանակ 2)	Տոննա CO ₂ -համարժեք	303,131	311,924	2.90%
ԶԳ տեսակարար արտանետումներ (Շրջանակ 1 և Շրջանակ 2)	Տոննա CO ₂ -համարժեք / Միլիոն դոլար	381	437	14.73%
Հասույթ	Միլիոն դոլար	795.787	713.087	-10.38%

Կանաչապատման ծրագրեր

Այս հաշվետվության «Շրջակա միջավայրի վերականգնում և հանքի փակման պլանավորում» բաժնում նշված կանաչապատման աշխատանքների շնորհիվ 2024թ. համար կլանված CO₂ ընդհանուր քանակությունը կազմում է 767.56 կգ: Ջերմոցային գազերի ընդհանուր արտանետումները (Շրջանակ 1 + Շրջանակ 2, շուկայից կախված + Շրջանակ 3) կազմում են 1,258,489.718 տCO₂-ին համարժեք/տարի, կանաչապատման ծրագրի արդյունքում CO₂-ի ընդհանուր փոխհատուցումը կազմում է արտանետված CO₂-ի մոտ 0.00006099%-ը:

Արդյունքներից երևում է, որ ածխաթթու գազի կլանման տեսանկյունից առավել արդյունավետ են հետևյալ ծառերը՝

- > կատալպա բարձր — 398.532 կգ,
- > լայնատերև բարդի — 100.314 կգ,
- > ակացիա — 81.066 կգ:

2024թ-ին Ընկերության կողմից խնամվող և աճեցվող ծառատեսակներից CO₂ կլանման ամենամեծ կարողություն ցուցաբերել են վերը նշված ծառատեսակները:

Հավելվածներ

Հավելված 1. Այս հաշվետվության մասին

GRI 2-2, GRI 2-3, GRI 2-4, GRI 2-5

Կայուն զարգացման այս հաշվետվության նպատակն է շահագրգիռ կողմերի լայն շրջանակին ծանոթացնել ԶՊՄԿ-ի գործունեության արդյունքներին: Այն ներկայացնում է Ընկերության ներդրումը երկրի տնտեսական և սոցիալական բարեկեցության ապահովմանը՝ մանրամասն նկարագրելով վերջինիս գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Մենք ձգտում ենք պահպանել հստակ և արդյունավետ հաղորդակցություն մեր շահագրգիռ կողմերի հետ, որի մասին վկայում է կայուն զարգացման ոլորտում հաշվետվողականության առաջատար համաշխարհային չափանիշներին հետևելու մեր հանձնառությունը: Այս հաշվետվությունը պատրաստվել է Հաշվետվողականության համաշխարհային նախաձեռնության (GRI) չափանիշներին և Կայուն զարգացման ոլորտում հաշվապահական հաշվառման չափանիշների խորհրդի (SASB) ուղեցույցներին համապատասխան: Մենք նաև մասնակիորեն ներկայացրել ենք 2024թ-ին առաջին անգամ կիրառված՝ ՖՀՄՍ ԿԶ2-ի շրջանակներում պահանջվող կլիմայի հետ կապված բացահայտումները:

Ոչ ֆինանսական տեղեկատվության բացահայտումների համար ներկայացվում են «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ»

ՓԲԸ-ի տվյալները՝ բացառելով վերջինիս դուստր ընկերություններին, իսկ ֆինանսական տեղեկատվության բացահայտումները ներառում են «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի և «Լեռ-Էքս» ՍՊԸ-ի տվյալները, ինչպես նշված է աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

ԶՊՄԿ-ն յուրաքանչյուր տարի հրապարակում է կայուն զարգացման հաշվետվություն՝ հաշվետու ժամանակաշրջանը համապատասխանեցնելով ֆինանսական տարվա հետ: Այս հաշվետվությունը ներառում է ԶՊՄԿ-ի 2024թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի տվյալները և կհրապարակվի 2025թ. սեպտեմբերին:

Նախորդ հաշվետու ժամանակաշրջանների տվյալների փոփոխություններ չեն կատարվել, եթե հաշվետվությունում այլ բան նշված չէ: 2022 թ. համադրելի տվյալները կարելի է գտնել մեր 2023 թ. Կայուն զարգացման հաշվետվությունում:

Մենք գիտակցում ենք անկախ վավերացման կարևորությունը, և ներկայումս այս Հաշվետվությունն անցնում է արտաքին հավաստիացում: Անկախ հավաստիացման եզրակացությունը կհրապարակվի առանձին՝ 2025 թվականի հոկտեմբերին, և հասանելի կլինի Ընկերության կայքում:

Հավելված 2. Էականության գնահատում

GRI 3-1

